

**Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ընդհանուր կանոնների մասին և 2003/54/ԵՀ
հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009
թվականի հուլիսի 13-ի 2009/72/ԵՀ հրահանգ**

Պաշտոնական տեղեկագիր, L 211, 14.08.. 2009թ., էջեր 0055 - 0093

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին պայմանագիրը և
մասնավորապես դրա 47(2), 55 և 95 հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [1],

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը [2],

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին
համապատասխան [3],

Քանի որ

1) էլեկտրականության ներքին շուկան, որն աստիճանաբար գործում է սկսած 1999
թվականից, նպատակ ունի Համայնքի բոլոր սպառողներին, լինեն նրանք քաղաքացիներ թե
գործարարներ, ընձեռելու իրական ընտրության հնարավորություն, նոր բիզնես
հնարավորություններ և ավելի միջսահմանային առևտուր՝ հասնելու համար
արդյունավետության ձեռքբերման, մրցակցային գների և ծառայության ավելի բարձր
չափանիշների և նպաստելու համար մատակարարման անվտանգությանն ու
կայունությանը:

2) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունիսի 26-ի
«Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ընդհանուր կանոնների մասին» 2003/54/ԵՀ
հրահանգը [4] զգալիորեն նպաստել է էլեկտրաէներգիայի նման ներքին շուկա ստեղծելու
համար:

3) Ազատությունները, որոնք պայմանագիրը երաշխավորում է Միության քաղաքացիներին, մասնավորապես, ապրանքների ազատ տեղաշարժը, հիմնադրման ազատությունը և ծառայություններ մատուցելու ազատությունը, հասանելի են միայն լիարժեք բաց շուկայում, որը հնարավորություն է տալիս բոլոր սպառողներին ազատորեն ընտրել իրենց մատակարարներին և բոլոր մատակարարներին ազատորեն տրամադրել իրենց սպառողներին:

4) Ինչևէ ներկայումս Համայնքում առանց խտրականության կամ անբարենպաստ պայմանների, հավասար պայմաններով էլեկտրաէներգիայի վաճառքի հետ կապված խոչընդոտներ կան: Մասնավորապես, խտրականությունը բացառող ցանցի մատչելիությունն ու կարգավորիչ վերահսկողության հավասարաչափ արդյունավետ մակարդակը դեռևս առկա չեն յուրաքանչյուր անդամ պետությունում:

5) Էլեկտրաէներգիայի մատակարարման անվտանգ ապահովումը չափազանց կարևոր է եվրոպական հասարակության զարգացման, կլիմայի փոփոխության կայուն քաղաքականության և ներքին շուկայում մրցակցության ապահովման համար: Այդ նպատակով միջսահմանային կապեր պետք է զարգացվեն՝ ապահովելով էներգիայի աղբյուրների մատակարարումը ամենամրցակցային գներով սպառողներին և Համայնքում արդյունաբերությանը:

6) Էլեկտրաէներգիայի լավ գործող ներքին շուկան պետք է արտադրողներին համապատասխանորեն խթան հանդիսանա նոր էներգիայի արտադրման համար ներդրում կատարելու համար, ներառյալ վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիան՝ հատուկ ուշադրություն դարձնելով Համայնքի էներգիայի շուկայի ամենամեկուսացված երկրներին և տարածաշրջաններին: Լավ գործող շուկան պետք է նաև սպառողներին համապատասխան միջոցներ տրամադրի՝ խթանելու էներգիայի ավելի արդյունավետ օգտագործումը, որի համար էներգիայի անվտանգ մատակարարումը նախապայման է:

7) Հանձնաժողովի 2007 թվականի հունվարի 10-ի «Եվրոպայի էներգետիկ քաղաքականություն» կոչվող հաղորդագրությունն ընդգծեց էլեկտրաէներգիայի ներքին շուկան ամբողջական դարձնելու և Համայնքում էլեկտրաէներգիան իրացնող բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար մրցակցային հավասար պայմաններ ստեղծելու կարևորությունը: Հանձնաժողովի 2007 թվականի հունվարի 10-ի «Գազի և էլեկտրաէներգիայի ներքին շուկայի հեռանկարներ» և «Գազի և էլեկտրաէներգիայի եվրոպական սեկտորում թիվ 1/2003 (ԵՀ) կանոնակարգի 17-րդ հոդվածի համաձայն

իրականացվող ուսումնասիրություն (Վերջնական հաշվետվություն)» կոչվող հաղորդակցությունները ցույց տվեցին, որ ներկայիս կանոններն ու միջոցները անհրաժեշտ շրջանակ չեն տրամադրում լավ գործող ներքին շուկայի նպատակին հասնելու համար:

8) Մրցակցություն ապահովելու և ամենամրցակցային գներով էլեկտրաէներգիա մատակարարելու համար՝ անդամ պետությունները և ազգային կանոնակարգող մարմինները պետք է աջակցեն էներգիայի տարբեր աղբյուրներից էլեկտրաէներգիայի նոր մատակարարների, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրության նոր մատուցողների համար:

9) Առանց էներգիայի արտադրության և մատակարարման (արդյունավետ տարանջատում) գործողություններից ցանցերի արդյունավետ առանձնացման, առկա է խտրականությանը ներհատուկ ռիսկ ոչ միայն ցանցի գործունեության, այլ նաև ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտների իրենց ցանցերի մեջ համապատասխան չափով ներդրում անելու համար խթանելու առումով:

10) Իրավական և գործառնական կանոնների տարանջատումը, ինչպես նշված է 2003/54/ԵՀ հրահանգում չեն հանգեցրել հաղորդման (փոխանցման) համակարգի օպերատորների արդյունավետ տարանջատման: 2007 թվականի մարտի 8-ի և 9-ի հանդիպման ժամանակ Եվրոպական խորհուրդը հրավիրեց Հանձնաժողովին «ցանցի օպերատորներից առաջարկի և էներգիայի արտադրության հետ առնչվող գործողությունների արդյունավետ անջատման» համար օրենսդրական առաջարկներ մշակելու:

11) Արդյունավետ տարանջատում կարող է երաշխավորվել միայն ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտների կողմից ցանցին մուտք ունենալու և ներդրումներ կատարելու առումով մրցակիցների դեմ խտրականություն դնելու խթանը վերացնելու դեպքում: Տնօրինման տարանջատումը, որը ենթադրում է ցանցի սեփականատիրոջը որպես համակարգի օպերատոր նշանակելը և դրա անկախությունը առաջարկի և արտադրության շահից, բացահայտորեն արդյունավետ և կայուն ձև է՝ ներքին շահերի բախումը լուծելու և մատակարարման անվտանգությունը ապահովելու համար: Այդ պատճառով Եվրոպական պառլամենտը իր 2007 թվականի հուլիսի 10-ի գազի և էլեկտրաէներգիայի ներքին շուկայի հեռանկարների մասին բանաձևում [5] անդրադարձել է տնօրինման տարանջատմանը փոխանցման մակարդակում որպես ամենաարդյունավետ գործիքը, որով ոչ խտրական կերպով խթանվում են ենթակառուցվածքում ներդրումները, շուկա նոր մուտք գործող մասնակիցների համար ցանցի մեջ հավասար պայմաններով (արդար) մուտքը և շուկայում

թափանցիկությունը: Սեփականության տարանջատման համաձայն անդամ պետությունները պետք է ապահովեն, որ միևնույն անձը կամ անձինք լիազորված չլինեն վերահսկողություն ունենալ արտադրող կամ մատակարարող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ և միևնույն ժամանակ վերահսկողություն կամ որևէ իրավունք ունենան փոխանցման համակարգի օպերատորի կամ փոխանցման համակարգի նկատմամբ: Հակառակը, փոխանցման համակարգի կամ փոխանցման համակարգի օպերատորի նկատմամբ վերահսկողությունը պետք է բացառի արտադրող կամ մատակարարող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ վերահսկողություն կամ որևէ իրավունք ունենալը: Այս սահմաններում արտադրող կամ մատակարարող տնտեսվարող սուբյեկտը պետք է հնարավորություն ունենա տիրապետել փոխանցման համակարգի օպերատորի կամ փոխանցման համակարգում արժեթղթերի փոքրամասնությանը:

12) Տարանջատման ցանկացած համակարգ պետք է արդյունավետ լինի արտադրողների, մատակարարների և փոխանցման համակարգի օպերատորների միջև շահերի բախումը վերացնելու համար՝ անհրաժեշտ ներդրումների համար խթան և շուկա մուտք գործող նոր մասնակիցների համար մուտքի երաշխիքներ ստեղծելու համար թափանցիկ, արդյունավետ կանոնակարգող ռեժիմի համաձայն և չպետք է ստեղծի չափազանց բարդ կանոնակարգող ռեժիմ ազգային կանոնակարգող մարմինների համար:

13) «Վերահսկողություն» տերմինի սահմանումը վերցվում է Խորհրդի 2004 թվականի հունվարի 20-ի «Տնտեսվարող սուբյեկտների միջև համակենտրոնացումների վերահսկողության մասին» (ԵՀ Միաձուլման կանոնակարգ) [6] թիվ 139/2004 կանոնակարգից (ԵՀ):

14) Քանի որ սեփականության տարանջատումը պահանջում է որոշ դեպքերում տնտեսվարող սուբյեկտների վերակառուցում, անդամ պետություններին, որոնք որոշում են իրականացնել սեփականության տարանջատում, պետք է լրացուցիչ ժամանակ տրամադրել՝ համապատասխան դրույթները կիրառելու համար: Էլեկտրաէներգիայի և գազի ոլորտների միջև ուղղահայաց կապերի լույսի ներքո տարանջատման դրույթները պետք է կիրառվեն երկու ոլորտների միջև:

15) Սեփականության տարանջատման համաձայն մատակարարման և էներգիայի արտադրման շահերից ցանցի գործունեության լիարժեք անկախությունը երաշխավորելու և ցանկացած գաղտնի տեղեկատվության փոխանակումը կանխելու նպատակով՝ միևնույն անձը չպետք է հանդիսանա և փոխանցման համակարգի օպերատորի և փոխանցման

համակարգի և արտադրման կամ մատակարարման գործառույթներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտի կառավարման խորհրդի անդամ: Միևնույն պատճառով նույն անձը չպետք է լիազորված լինի նշանակել փոխանցման համակարգի օպերատորի կամ փոխանցման համակարգի կառավարման խորհրդի անդամներ և վերահսկողություն իրականացնի կամ որևէ իրավունք ունենա արտադրող կամ մատակարարող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ:

16) Համակարգի օպերատորի կամ փոխանցման օպերատորի ստեղծումը, որն անկախ է մատակարարման կամ արտադրման շահերից պետք է հնարավորություն տա ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտներին պահպանելու ցանցի ակտիվների նկատմամբ իրենց սեփականությունը միևնույն ժամանակ ապահովելով շահերի արդյունավետ բաժանումը՝ պայմանով, որ նման անկախ համակարգի օպերատորը կամ նման անկախ փոխանցման օպերատորը իրականացնում է համակարգի օպերատորի բոլոր գործառույթները և մանրամասն կանոնակարգը և գործում են կարգավորիչ վերահսկման ընդարձակ մեխանիզմները:

17) Երբ 2009 թվականի սեպտեմբերի 3-ին փոխանցման համակարգը տիրապետող տնտեսվարող սուբյեկտը ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս է կազմում, անդամ պետությունները պետք է ընտրության հնարավորություն ունենան սեփականության տարանջատման և համակարգի օպերատորի կամ փոխանցման օպերատորի ստեղծման միջև, որն անկախ է մատակարարման և արտադրման շահից:

18) Ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտների բաժնետերերի շահերի լիարժեք պաշտպանության համար անդամ պետությունները պետք է ընտրության հնարավորություն ունենան իրականացնել սեփականության տարանջատում՝ կամ ինտեգրված տնտեսվարող սուբյեկտների բաժնետոմսերի ուղղակի վաճառքի կամ ցանցի տնտեսվարող սուբյեկտների կամ մատակարարող և էլեկտրաէներգիա արտադրող մնացած տնտեսվարող սուբյեկտների բաժնետոմսերի բաժանման միջոցով՝պայմանով, որ սեփականության տարանջատման արդյունքում ծագող պահանջները բավարարվում են:

19) Անկախ համակարգի օպերատորի լիարժեք արդյունավետությունը կամ փոխանցման անկախ օպերատորի լուծումները պետք է ապահովվեն լրացուցիչ հատուկ կանոնների միջոցով: Անկախ փոխանցման օպերատորի վերաբերյալ կանոնները պատշաճ կանոնակարգող շրջանակ են տրամադրում՝ ապահովելով արդար մրցակցություն, բավարար ներդրումներ, շուկայի նոր մասնակիցների մուտքը և էլեկտրաէներգիայի

շուկաների ինտեգրացիան: Արդյունավետ տարանջատումը փոխանցման անկախ օպերատորի ապահովման միջոցով պետք է հիմնված լինի կազմակերպչական միջոցառումների հենասյան վրա և փոխանցման համակարգի օպերատորների կառավարման հետ առնչվող միջոցառումների վրա և ներդրումների հետ առնչվող միջոցառումների հենասյան վրա՝ արտադրության նոր հնարավորությունները կապելով ցանցին և տարածաշրջանային համագործակցության միջոցով շուկայի ինտեգրացիային: Փոխանցման օպերատորի անկախությունը պետք է մասնավորապես ապահովվի որոշակի «սառեցնող շրջաններով, որոնց ընթացքում ոչ մի կառավարում կամ նման այլ գործողություն, որը մատչելի է դարձնում միևնույն տեղեկատվությունը, որը հնարավոր կլինի ձեռք բերել կառավարման պաշտոնում չի իրականացվում ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտում: Արդյունավետ տարանջատման փոխանակման անկախ օպերատորի մոդելը համապատասխանում է 2007 թվականի մարտի 8-ի և 9-ի հանդիպման ժամանակ Եվրոպական խորհրդի կողմից սահմանված պահանջներին:

20) Էլեկտրաէներգիայի ներքին շուկայում մրցակցություն զարգացնելու համար մեծ ոչ կենցաղային սպառողները պետք է կարողանան ընտրել իրենց մատակարարներին և պայմանագրեր կնքել մի քանի մատակարարի հետ՝ էլեկտրաէներգիայի պահանջները ապահովելու համար: Նման սպառողների վրա չպետք է տարածվեն ապրանքը վաճառելու բացառիկ իրավունքի մասին դրոյթները, որոնց արդյունքում մրցակցող կամ լրացուցիչ առաջարկները բացառվում են:

21) Անդամ պետությունը իրավունք ունի նախընտրություն տալ իր տարածքում տիրապետման լիարժեք տարանջատմանը: Երբ անդամ պետությունը իրականացրել է այդ իրավունքը, տնտեսվարող սուբյեկտը իրավունք չունի հիմնել համակարգի անկախ օպերատոր կամ փոխանցման անկախ օպերատոր: Ավելին, էլեկտրաէներգիայի արտադրման կամ մատակարարման ցանկացած գործառույթ իրականացնող տնտեսվարող սուբյեկտը չի կարող ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկողություն իրականացնել կամ իրավունք ունենալ տիրապետման լիարժեք տարանջատմանը նախընտրություն տված անդամ պետության փոխանցման համակարգի օպերատորի նկատմամբ:

22) Սույն Հրահանգի համաձայն շուկայի կազմակերպման տարբեր տեսակներ են գործում էլեկտրաէներգիայի ներքին շուկայում: Այն միջոցառումները, որոնք անդամ պետություններն իրականացնում են հավասար մրցակցային պայմաններ ապահովելու համար պետք է հիմնված լինեն ընդհանուր շահի կարևորագույն պահանջների վրա: Հանձնաժողովի հետ

պետք է խորհրդակցեն միջոցառումների՝ Պայմանագրին և Համայնքի օրենքին համապատասխանության հարցի վերաբերյալ:

23) Արդյունավետ տարանջատում իրականացնելիս պետք է հաշվի առնել պետական և մասնավոր սեկտորի միջև ոչ խտրականության սկզբունքը: Այդ նպատակով միևնույն անձը մենակ կամ համատեղ չպետք է կարողանա վերահսկողություն իրականացնել կամ որևէ իրավունք ունենալ փոխանցման համակարգի օպերատորների կամ փոխանցման համակարգերի, էլեկտրաէներգիա ստեղծող կամ մատակարարող տնտեսվարող սուբյեկտների մարմինների կազմության, քվեարկության կամ որոշումների վրա, որը կարող է խախտել տիրապետման տարանջատման կանոնները կամ համակարգի անկախ օպերատորի տարբերակը: Տիրապետման տարանջատման և համակարգի անկախ օպերատորի լուծման առնչությամբ, պայմանով, որ անդամ պետությունը կարող է ցույց տալ, որ պահանջը բավարարվում է, երկու առանձին պետական մարմիններ պետք է կարողանան վերահսկողություն իրականացնել մի կողմից էլեկտրաէներգիայի արտադրման և մատակարարման գործողությունների, մյուս կողմից փոխանցման գործողությունների նկատմամբ:

24) Ցանցի գործողությունները մատակարարման և էլեկտրաէներգիայի արտադրման գործողություններից լիարժեք արդյունավետ բաժանումը պետք է կիրառվի ողջ Համայնքով՝ և Համայնքի, և ոչ Համայնքի տնտեսվարող սուբյեկտների վրա: Մատակարարման և էլեկտրաէներգիայի արտադրման գործողություններից ցանցի գործողությունների անկախությունը երաշխավորելու համար՝ կանոնակարգող մարմինները պետք է իրավասություն ունենան մերժել վկայագիր տրամադրել տարանջատման կանոններին չհամապատասխանող փոխանցման համակարգի օպերատորներին: Համայնքի ողջ տարածքում այդ կանոնների հետևողական կիրառությունը ապահովելու համար՝ կանոնակարգող մարմինները պետք է զգալիորեն հաշվի առնեն Հանձնաժողովի կարծիքը, երբ այն որոշում է կայացնում վկայագրման մասին: Բացի այդ համայնքի միջազգային պարտականությունների պահպանությունը, Համայնքում համերաշխություն և էլեկտրաէներգիայի անվտանգությունը երաշխավորելու համար Հանձնաժողովը պետք է իրավունք ունենա կարծիք արտահայտել փոխանցման համակարգի սեփականատիրոջ կամ փոխանցման համակարգի օպերատորի վկայագրման մասին, որը վերահսկվում է երրորդ երկրից կամ երրորդ երկրներից անձի կամ անձանց կողմից:

25) Էներգիայի մատակարարման անվտանգությունը պետական անվտանգության կարևոր տարր է և այդ պատճառով ըստ էության կապված է էլեկտրաէներգիայի ներքին շուկայի

արդյունավետ գործունեության հետ և անդամ պետությունների մեկուսացված էլեկտրաէներգիայի շուկաներում ինտեգրացիայի հետ: Էլեկտրաէներգիան կարող է Միության քաղաքացիներին հասնել միայն ցանցի միջոցով: Էլեկտրաէներգիայի շուկաների գործառնությունը և մասնավորապես ցանցերը և այլ ակտիվները, որոնք առնչվում են էլեկտրաէներգիայի մատակարարման հետ կարևոր են պետական անվտանգության, տնտեսության մրցակցության և Միության քաղաքացիների բարօրության համար: Երրորդ երկրներից անձանց պետք է թույլ տալ վերահսկել փոխանցման համակարգը կամ փոխանցման համակարգի օպերատորին, միայն եթե նրանք համապատասխանում են արդյունավետ բաժանման պահանջներին, որոնք կիրառվում են Համայնքից դուրս: Չհակասելով Համայնքի միջազգային պարտավորություններին՝ Համայնքը համարում է, որ էլեկտրաէներգիայի փոխանցման համակարգի սեկտորը չափազանց կարևոր է Համայնքի համար և այդ պատճառով լրացուցիչ երաշխիքներ են անհրաժեշտ Համայնքին էներգիայի մատակարարման անվտանգությունը պահպանելու համար՝ խուսափելով Համայնքում պետական կարգի կամ պետական անվտանգության և Միության քաղաքացիների բարեկեցության նկատմամբ որևէ վտանգից: Համայնքին էներգիայի մատակարարման անվտանգությունը պահանջում է, մասնավորապես, ցանցի գործունեության անկախության, երրորդ երկրների կողմից մատակարարվող էլեկտրաէներգիայից Համայնքի և առանձին անդամ պետությունների կախվածության մակարդակի գնահատում, և տեղական և արտերկրյա առևտրի ուսումնասիրում և որոշ երրորդ երկրում էլեկտրաէներգիայի մեջ ներդրում: Մատակարարման անվտանգությունը պետք է այսպիսով գնահատվի յուրաքանչյուր դեպքի ժամանակ փաստական հանգամանքների, ինչպես նաև միջազգային իրավունքից բխող իրավունքների և պարտականությունների լույսի ներքո, մասնավորապես Համայնքի և համապատասխան երրորդ երկրի միջև կնքված միջազգային պայմանագրերի համաձայն: Անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովը խրախուսվում է առաջարկություններ ներկայացնել երրորդ երկրների հետ Համայնքին էլեկտրաէներգիայի մատակարարման անվտանգության մասին համապատասխան պայմանագրերի բանակցության համար կամ այդ երրորդ երկրների հետ այլ բանակցությունների ժամանակ անհրաժեշտ հարցերի վերաբերյալ:

26) Բաշխման ցանցին ոչ խտրական մուտքը որոշում է մանրաձախ մակարդակում սպառողներին երկրորդային մուտք: Երրորդ անձանց մուտքի և ներդրման վերաբերյալ խտրականության շրջանակը, սակայն, ավելի քիչ կարևոր է բաշխման մակարդակում, քան փոխադրման մակարդակում, որտեղ գերբեռնվածությունը և էլեկտրաէներգիայի

արտադրման ազդեցությունը կամ մատակարարման շահը ավելի մեծ է, քան բաշխման մակարդակում: Ավելին, բաշխման համակարգի օպերատորների իրավական և գործառնական տարանջատումն էր պահանջվում 2003/54/ԵՀ հրահանգի համաձայն միայն 2007 թվականի հուլիսի 1-ից և դրանց ազդեցությունը էլեկտրաէներգիայի ներքին շուկայում դեռևս պետք է գնահատվի: Ներկայումս գործող իրավական և գործառնական տարանջատման կանոնները, կարող են հանգեցնել արդյունավետ տարանջատման՝ պայմանով, որ դրանք ավելի պարզ են սահմանված, պատշաճ կարգով են իրականացվում և ուշադիր դիտարկվում: Մանրաձախ մակարդակում հավասար մրցակցային պայմաններ ստեղծելու համար՝ բաշխման համակարգի օպերատորների գործողությունները պետք է այնուամենայնիվ դիտարկվեն այնպես, որ դրանք կանխեն չարաշահել իրենց ուղղահայաց ինտեգրումը շուկայում մրցակցային դիրքի առումով, մասնավորապես կենցաղային և ոչ կենցաղային սպառողների դեպքում:

27) Անդամ պետությունները պետք է խրախուսեն բաշխման ցանցերի արդիականացումը, օրինակ ինտելեկտուալ ցանցի ներդրման միջոցով, որը պետք է կառուցվի այնպես, որ խրախուսվի ոչ կենտրոնացված էլեկտրաէներգիայի արտադրումը և էլեկտրաէներգիայի արդյունավետությունը:

28) Փոքր համակարգերի դեպքում կարող է անհրաժեշտ լինել, որ լրացուցիչ ծառայությունների տրամադրումը ապահովվի փոխանցման համակարգի օպերատորների կողմից, որոնք կապված են փոքր համակարգերի հետ:

29) Բաշխման փոքր համակարգի օպերատորների վրա ֆինանսական և վարչարարական բեռի անհամաչափ նշանակումից խուսափելու համար՝ անդամ պետությունները պետք է կարողանան, անհրաժեշտության դեպքում, ազատել համապատասխան տնտեսվարող սուբյեկտներին իրավական բաշխման տարանջատման պահանջներից:

30) Երբ օգտագործվում է բաշխման փակ համակարգ ինտեգրված էլեկտրաէներգիայի օպտիմալ արդյունավետությունը ապահովելու համար, որը պահանջում է հատուկ գործառնական չափանիշներ կամ փակ բաշխման համակարգը պահպանվում է հիմնականում համակարգի սեփականատիրոջ օգտագործման համար, պետք է հնարավոր լինի բաշխման համակարգի օպերատորին ազատել այն պարտականություններից, որոնք կարող են համարվել ոչ անհրաժեշտ վարչարարական բեռ՝ բաշխման համակարգի օպերատորի և համակարգի օգտագործողների միջև հարաբերությունների հատուկ բնույթի պատճառով: Արդյունաբերական, առևտրային կամ տարբեր ծառայություններ տրամադրող

վայրերը, օրինակ կայարանները, օդանավակայանները, հիվանդանոցները, ինտեգրված հանգստյան համար նախատեսված համալիրներով մեծ ճամբարները կամ քիմիական արդյունաբերական վայրերը կարող են ընդգրկել բաշխման փակ համակարգեր իրենց գործառնությունների մասնագիտացված բնույթի պատճառով:

31) Արտոնագրման ընթացակարգերը չպետք է հանգեցնեն վարչարարական բեռին, որը կարող է չհամապատասխանել էլեկտրաէներգիայի արտադրողների չափին և պոտենցիալ ազդեցությանը: Անհիմն երկարատև արտոնագրման ընթացակարգերը կարող են խոչընդոտ հանդիսանալ շուկա նոր մուտք գործողների համար:

32) Հետագա քայլեր պետք է ձեռնարկվեն ցանցերին մուտք գործելու համար թափանցիկ ոչ խտրական սակագներ ապահովելու համար: Այս սակագները պետք է կիրառելի լինեն համակարգի բոլոր օգտագործողների համար ոչ խտրական հիմքի հիման վրա:

33) 2003/54/ԵՀ հրահանգը անդամ պետությունների համար պահանջ է ներմուծել հատուկ իրավասությամբ կանոնակարգողներ հիմնելու համար: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հաճախ կանոնակարգումը արդյունավետ չէ կառավարությունից կանոնակարգողների անկախության բացակայության և ոչ բավարար լիազորությունների և հայեցողության պատճառով: Այդ պատճառով 2007 թվականի մարտի 8-ի և 9-ի հանդիպման ժամանակ Եվրոպական խորհուրդը հրավիրեց Հանձնաժողովին օրենսդրական առաջարկներ մշակելու համար՝ երաշխավորելով լիազորությունների հետագա ներդաշնակեցումը և էլեկտրաէներգիայի ազգային կանոնակարգողների անկախության հզորացումը: Այս կարգավորող իշխանությունների համար պետք է հնարավոր լինի ընդգրկել և էլեկտրաէներգիայի և գազի բնագավառները:

34) Անհրաժեշտ է, որ էներգիայի կարգավորողները հնարավորություն ունենան որոշումներ կայացնել համապատասխան կարգավորիչ հարցերի վերաբերյալ, եթե էլեկտրաէներգիայի ներքին շուկան պետք է պատշաճ կերպով գործի և լիարժեք անկախություն ունենա ցանկացած այլ պետական կամ մասնավոր շահերից: Սա չի խանգարում ոչ դատական վերանայումը, ոչ պառլամենտական վերահսկողությունը՝ անդամ պետությունների սահմանադրական օրենքների համապատասխան: Բացի այդ կարգավորողի բյուջեի հաստատումը պետական օրենսդիր մարմնի կողմից չի խոչընդոտում բյուջեի անկախությանը: Կարգավորող մարմնի տրամադրված բյուջեի կատարման անկախության մասին դրույթները պետք է կիրառվեն ազգային բյուջեի մասին օրենքով և կանոններով սահմանված շրջանակում: Նպաստելով քաղաքական կամ տնտեսական շահից պատշաճ

փոփոխվող սխեմայի միջոցով ազգային կանոնակարգող մարմնի անկախությանը՝ պետք է հնարավոր լինի անդամ պետության համար հաշվի առնել մարդկային ռեսուրսների հասանելիությունը և խորհրդի մեծությունը:

35) Շուկայի բոլոր դերակատարների համար շուկայում արդյունավետ մուտքն ապահովելու համար, ներառյալ նոր մուտք գործած դերակատարները, անհրաժեշտ են ոչ խտրական և ծախսերն արտահայտող մեխանիզմները: Երբ էլեկտրաէներգիայի շուկան բավարար իրացվելի է, սա պետք է հասանելի լինի էլեկտրաէներգիայի մատակարարման և գնման համար շուկայի վրա հիմնված թափանցիկ մեխանիզմների ստեղծմամբ, որն անհրաժեշտ է ներդաշնակեցված պահանջների շրջանակում: Նման իրացվելի շուկայի բացակայության դեպքում ազգային կարգավորող մարմինները պետք է ակտիվ դերակատարություն ունենան՝ ապահովելով, որ ներդաշնակեցնող սակագները խտրական չլինեն և արտահայտեն ծախսերը: Միևնույն ժամանակ պատշաճ նախադրյալներ պետք է տրամադրվեն՝ հավասարակշռելով էլեկտրաէներգիայի մուտքն ու ելքը և չվտանգելով համակարգը: Փոխանցման համակարգի օպերատորները պետք է աջակցեն վերջնական սպառողների և վերջնական սպառողների պահուստային ագրեգատների մասնակցությունը և ներդաշնակեցնող շուկաները:

36) Ազգային կարգավորող մարմինները պետք է հնարավորություն ունենան սահմանել և հաստատել սակագները կամ սակագների հաշվարկման մեթոդաբանությունը՝ փոխանցման համակարգի օպերատորի կողմից կամ բաշխման համակարգի օպերատորի (օպերատորների) առաջարկի կամ այդ օպերատորի (օպերատորների) և ցանցի օգտագործողների միջև համաձայնեցված առաջարկի հիման վրա: Այս խնդիրներն իրականացնելիս ազգային կարգավորող մարմինները պետք է ապահովեն, որ փոխանցումը և բաշխման սակագները ոչ խտրական լինեն և արտահայտեն ծախսերը և պետք է հաշվի առնեն բաշխվող էլեկտրաէներգիայի արտադրման և պահանջարկի կողմի կառավարման միջոցառումների երկարատև, նվազագույն, ցանցի անցանկալի ծախսերը:

37) էլեկտրաէներգիայի կարգավորողները պետք է իրավասություն ունենան պարտադիր որոշումներ կայացնել էլեկտրաէներգիայի տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ և արդյունավետ, համամասնական և տարհամոզիչ պատժամիջոցներ նշանակել էլեկտրաէներգիայի տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որոնք չեն կատարում իրենց պարտականությունները կամ առաջարկում են, որ իրավասու դատարանը նման պատժամիջոցներ նշանակի նրանց նկատմամբ: էլեկտրաէներգիայի կարգավորողներին պետք է նաև իրավասություն տրվի անկախ մրցակցության կանոնների կիրառումից որոշել

համապատասխան միջոցառումները՝ ապահովելով սպառողների արտոնությունները էլեկտրաէներգիայի ներքին շուկայի պատշաճ գործունեության համար անհրաժեշտ արդյունավետ մրցակցություն խթանելու միջոցով: Վիրտուալ էներգետիկ կայանների հիմնումը՝ էլեկտրաէներգիայի սպառման հանձնելու ծրագրերը, որոնց դեպքում էլեկտրաէներգիայի տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են վաճառել կամ հասանելի դարձնել էլեկտրաէներգիայի որոշակի ծավալ կամ շահագրգիռ մատակարարներին տրամադրեն իրենց՝ էլեկտրաէներգիայի արտադրման հնարավորության մի մասը որոշակի ժամկետով, հնարավոր միջոցառումներից մեկն է, որը կարող է օգտագործվել արդյունավետ մրցակցություն խթանելու և շուկայի պատշաճ գործունեությունը ապահովելու համար: Էլեկտրաէներգիայի կարգավորողներին պետք է նաև իրավասություն տրվի նպաստել շուկայի բացման ժամանակ համընդհանուր և հանրային ծառայության բարձր չափանիշների ապահովմանը, խոցելի սպառողների պաշտպանությանը և սպառողների պաշտպանության միջոցառումների լիարժեք արդյունավետությանը: Այս դրույթները պետք է չհակասեն ինչպես Հանձնաժողովի լիազորություններին մրցակցության կանոնների կիրառման առումով, ներառյալ Համայնքային ուղղվածություն ունեցող միաձուլումները, այնպես նաև ներքին շուկայի կանոններին, ինչպես օրինակ կապիտալի ազատ շարժը: Անկախ մարմինը, որին այն կողմը, որի շահերը շոշափվում են ազգային կարգավորողի որոշմամբ իրավունք ունի բողոքարկել, կարող է լինել դատարան կամ այլ տրիբունալ, որը լիազորված է դատական վերահսկողություն իրականացնել:

38) Ազգային կարգավորող մարմինների իրավասությունների ներդաշնակեցումը պետք է ներառի էլեկտրաէներգիայի տնտեսվարող սուբյեկտների խրախուսական միջոցների տրամադրումը և արդյունավետ, համաչափ և տարիամոզիչ պատժամիջոցների նշանակումը կամ առաջարկությունը, որ իրավասու դատարանը նշանակի նման պատժամիջոցներ: Ավելին, կարգավորող մարմինները պետք է իրավասու լինեն էլեկտրաէներգիայի տնտեսվարող սուբյեկտներից պահանջել համապատասխան տեղեկատվություն, իրականացնել պատշաճ և բավարար քննություններ և լուծել վեճերը:

39) Էլեկտրաէներգիայի ներքին շուկայում բացակայում է իրացվելիությունն ու թափանցիկությունը՝ խանգարելով ռեսուրսների արդյունավետ բաշխմանը, ռիսկերի ապահովագրմանը և շուկայում նոր մուտք գործելուն: Անհրաժեշտ է ընդլայնել մրցակցությունը և մատակարարման անվտանգությունը բոլոր անդամ պետություններում նոր էներգետիկ կայանների ներգրավման միջոցով՝ մասնավորապես խրախուսելով շուկայում նոր մասնակիցների մուտքը: Անհրաժեշտ է շուկայի նկատմամբ վստահությունը,

դրա իրացվելիությունը և շուկայի մասնակիցների քանակը ավելացնել և այդ պատճառով անհրաժեշտ է ավելացնել էլեկտրաէներգիայի մատակարարման գործում ակտիվ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ պարբերական վերահսկողությունը: Նման պահանջները չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն ֆինանսական շուկաների վերաբերյալ Համայնքի առկա օրենսդրությանը: Անհրաժեշտ է, որ էլեկտրաէներգիայի կարգավորողները և ֆինանսական շուկայի կարգավորողները համագործակցեն՝ մեկը մյուսին հնարավորություն տալով ունենալ նկարագիր տվյալ շուկաների մասին:

40) Հանձնաժողովի կողմից հետագայում տվյալների պահպանման պահանջների մասին ուղեցույցերի ընդունումից առաջ էլեկտրաէներգիայի կարգավորողների համագործակցության գործակալությունը, որն հիմնադրվել է «էլեկտրաէներգիայի կարգավորողների համագործակցության գործակալությունը հիմնելու մասին» [7] («Գործակալություն»), Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 713/2009 կանոնակարգի (ԵՀ) համաձայն և Արժեթղթերի եվրոպական կարգավորողների կոմիտեն («ԱԵԿԿ»), որը հիմնադրվել է 2009/77/ԵՀ [8] Հանձնաժողովի որոշման համաձայն, պետք է խորհուրդ տան Հանձնաժողովին դրանց բովանդակության վերաբերյալ: Գործակալությունը և ԱԵԿԿ-ը պետք է նաև համագործակցեն հետագայում քննելու և խորհրդակցելու, թե արդյոք էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրերից բխող գործարքները և էլեկտրաէներգիայի հետ կապված ածանցյալները պետք է ենթակա լինեն նախնական առևտրի և առևտրից հետո թափանցիկության պահանջներին և նման դեպքում որոնք պետք է լինեն նման պահանջները:

41) Անդամ պետությունները կամ այն դեպքում, երբ անդամ պետությունը նախատեսել է, կարգավորող մարմինը պետք է խրախուսի մատակարարման դադարեցվող պայմանագրերի կազմում:

42) Համայնքի ողջ արդյունաբերությունը և առևտուրը, ներառյալ փոքր և միջին ձեռնարկությունները և ներքին շուկայի տնտեսական շահերից օգտվող Միության բոլոր քաղաքացիները, նույնպես պետք է օգտվեն սպառողների պաշտպանության բարձր մակարդակից, և մասնավորապես կենցաղային սպառողները և այն դեպքում, երբ անդամ պետությունները անհրաժեշտ են համարում, փոքր ձեռնարկությունները նույնպես պետք է հնարավորություն ունենան օգտվել պետական ծառայությունների երաշխիքներից, մասնավորապես մատակարարման անվտանգության և ողջամիտ սակագների հետ կապված՝ արդարության, մրցակցության և անուղղակիորեն աշխատատեղեր ստեղծելու

համար: Սպառողները նույնպես պետք է մուտք ունենան ընտրության, արդարության, ներկայացուցչության և վեճերի լուծման մեխանիզմներին:

43) Գրեթե բոլոր անդամ պետությունները նախընտրել են արտոնագրման թափանցիկ ընթացակարգերի միջոցով էլեկտրաէներգիայի արտադրման շուկայում ապահովել մրցակցություն: Ինչևէ անդամ պետությունները պետք է հնարավորություն ընձեռեն նպաստել մատակարարման անվտանգությանը տեղի տված ընթացակարգերի մեկնարկման միջոցով կամ նմանատիպ ընթացակարգով այն դեպքում, երբ էլեկտրաէներգիայի արտադրման պատշաճ հնարավորություն չի ստեղծվում արտոնագրման ընթացակարգի հիման վրա: Անդամ պետությունները պետք է հնարավորություն ունենան հրապարակված չափանիշի հիման վրա նոր կարողությունների համար տեղեր հայտարարել՝ ելնելով բնապահպանական և նոր տեխնոլոգիաների խթանման շահերից: Նման նոր կարողությունը ընդգրկում է, ի թիվս այլոց, էներգիայի վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիան և համակցված ջերմաէներգիան:

44) Մատակարարման անվտանգության շահից ելնելով՝ առաջարկի և պահանջարկի միջև հավասարակշռությունը առանձին անդամ պետություններում պետք է դիտարկվի և նման դիտարկումից հետո պետք է հաշվետվություն պատրաստվի Համայնքի մակարդակում իրավիճակի վերաբերյալ՝ հաշվի առնելով ոլորտների միջև փոխկապակցվածությունը: Նման դիտարկում պետք է իրականացնել բավականին վաղ՝ հնարավորություն տալով, որ համապատասխան միջոցառումներ ձեռնարկվեն, եթե վտանգվում է մատակարարման անվտանգությունը: Անհրաժեշտ ցանցի ենթակառուցվածքի կառուցումը և պահպանությունը, ներառյալ փոխկապակցվածության կարողությունը, պետք է նպաստի կայուն էլեկտրամատակարարման ապահովմանը: Անհրաժեշտ ցանցի ենթակառուցվածքի կառուցումը և պահպանությունը, ներառյալ փոխկապակցվածության կարողությունը և ապակենտրոնացված էլեկտրաէներգիայի արտադրությունը, կարևոր տարրեր են կայուն էլեկտրամատակարարում ապահովելու համար:

45) Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ կենցաղային սպառողները, և երբ անդամ պետությունները անհրաժեշտ են համարում փոքր ձեռնարկությունները օգտվեն որոշակի որակ ունեցող էլեկտրաէներգիայի մատակարարման իրավունքից հստակ համեմատական, թափանցիկ և ողջամիտ գներով: Համայնքում հանրային ծառայությունների բարձր չափանիշների պահպանությունը ապահովելու համար՝ անդամ պետությունների կողմից սույն Հրահանգի նպատակին հասնելու համար իրականացված միջոցառումների մասին պետք է Հանձնաժողովը պարբերաբար ծանուցվի: Հանձնաժողովը

պետք է պարբերաբար հաշվետվություն հրապարակի՝ վերլուծելով ազգային մակարդակում կատարված միջոցառումները հանրային ծառայության նպատակներին հասնելու համար և համեմատելով դրանց արդյունավետությունը՝ նպատակ հետապնդելով առաջարկություններ կատարել ազգային մակարդակում հանրային ծառայությունների բարձր ստանդարտներին հասնելու համար միջոցառումների վերաբերյալ: Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցառումների կատարեն՝ էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ենթատեքստում խոցելի սպառողներին պաշտպանելու համար: Նման միջոցառումները կարող են տարբերվել տվյալ անդամ պետություններում առկա հատուկ հանգամանքների համաձայն և կարող են ընդգրկել էլեկտրաէներգիայի հաշիվների վճարման հետ առնչվող հատուկ միջոցառումներ կամ ավելի ընդհանուր միջոցառումներ՝ սոցիալական ապահովության համակարգում: Երբ համընդհանուր ծառայությունները նաև տրամադրվում են փոքր ձեռնարկություններին, միջոցառումները, որոնք ուղղված են նման համընդհանուր ծառայությունների ապահովմանը կարող են տարբերվել ելնելով այն բանից, թե դրանք ուղղված են կենցաղային սպառողներին, թե փոքր ձեռնարկություններին:

46) Հանրային ծառայությունների պահանջների պահպանումը սույն Հրահանգի կարևոր պահանջ է և կարևոր է, որ ընդհանուր նվազագույն ստանդարտները, որոնք հարգվում են բոլոր անդամ պետությունների կողմից հստակեցվում են սույն Հրահանգում, որը հաշվի է առնում սպառողների պաշտպանության նպատակները, մատակարարման անվտանգությունը, բնապահպանությունը և բոլոր անդամ պետություններում մրցակցության համապատասխան մակարդակը: Կարևոր է, որ հանրային ծառայությունների պահանջները մեկնաբանվեն ազգային համատեքստում՝ հաշվի առնելով ազգային հանգամանքները և Համայնքի իրավունքը:

47) Անհրաժեշտ է, որ անդամ պետությունները նշանակեն վերջին մակարդակում մատակարարին: Այդ մատակարարը կարող է լինել ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի վաճառքի բաժին, որը նաև իրականացնում է բաշխման գործառույթները՝ պայմանով, որ այն բավարարում է սույն Հրահանգի տարանջատման պահանջները:

48) Անդամ պետությունների կողմից միջոցառումները պետք է հնարավոր դարձնեն հասնել սոցիալական և տնտեսական համերաշխության, մասնավորապես, ներառել համապատասխան տնտեսական խրախուսական միջոցները՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով բոլոր առկա ազգային և Համայնքի գործիքները: Նման գործիքները կարող են ընդգրկել պարտավորությունների մեխանիզմներ՝ երաշխավորելով անհրաժեշտ ներդրումները:

49) Այնքանով, որքանով անդամ պետությունների կողմից իրականացված միջոցառումները՝ ուղղված հանրային ծառայությունների պարտականությունների իրականացմանը համարվում են պետական օգնություն Պայմանագրի 87(1) հոդվածի համաձայն, Պայմանագրի 88(3) հոդվածի համաձայն պարտականություն է ամրագրված դրանց մասին տեղեկացնել Հանձնաժողովին:

50) Հանրային ծառայությունների պահանջները, ներառյալ համընդհանուր ծառայությունը և ընդհանուր նվազագույն ստանդարտները, որոնք բխում են դրանցից, պետք է ավելի շատ ամրապնդվեն՝ ապահովելով, որ բոլոր սպառողները, մասնավորապես խոցելիները, կարողանան օգուտ ստանալ մրցակցությունից և արդար գներից: Հանրային ծառայության պահանջները պետք է սահմանվեն ազգային համատեքստում՝ հաշվի առնելով ազգային հանգամանքները, Համայնքի իրավունքը պետք է, սակայն, հարգվի անդամ պետությունների կողմից: Միության քաղաքացիները և երբ անդամ պետությունները անհրաժեշտ են համարում, փոքր ձեռնարկությունները, պետք է հնարավորություն ունենան օգտվել հանրային ծառայությունների պարտականություններից, մասնավորապես մատակարարման անվտանգության և ողջամիտ գների հետ կապված: Մատակարարող սպառողների հիմնական ասպեկտն է օբյեկտիվ և թափանցիկ սպառման տվյալներին մուտք ունենալը: Այսպիսով, սպառողները պետք է մուտք ունենան իրենց սպառման տվյալներին և առնչվող գներին և ծառայությունների ծախսերին այնպես, որ նրանք կարողանան մրցակիցների հրավիրել՝ այդ տվյալների հիման վրա առաջարկություն անելու համար: Սպառողները պետք է նաև իրավունք ունենան պատշաճ կերպով տեղեկացվել էներգիայի սպառման մասին: Նախնական վճարումները պետք է արտահայտեն էլեկտրաէներգիայի հնարավոր սպառումը, և վճարման տարբեր համակարգերը չպետք է խտրական լինեն: Էներգիայի ծախսերի վերաբերյալ սպառողներին բավականին հաճախ տրամադրվող տեղեկատվությունը խթան է ստեղծում էներգիայի խնայողության համար, որովհետև այն սպառողներին ուղղակիորեն հետադարձ կապ է ապահովում էներգիայի արդյունավետության մեջ ներդրում անելու և վարքագծի փոփոխման ազդեցության վերաբերյալ: Այս առումով «Էներգիայի վերջնական սպառման արդյունավետության և էներգակիրների մատակարարման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 5-ի 2006/32/ԵՀ հրահանգի [9] լիարժեք իրականացումը կօգնի սպառողներին նվազեցնել էներգիայի ծախսերը:

51) Սպառողների շահերը չպետք է լինեն սույն Հրահանգի կենտրոնում և ծառայությունների որակը պետք է լինի էլեկտրաէներգիայի տնտեսվարող սուբյեկտների հիմնական

պարտականությունը: Սպառողների առկա իրավունքները պետք է ամրապնդվեն և երաշխավորվեն և պետք է ավելի մեծ թափանցիկություն ունենան: Սպառողների պաշտպանությունը պետք է ապահովի, որ բոլոր սպառողները Համայնքի ավելի լայն շրջանակում օգտվեն մրցակցային շուկայից: Սպառողների իրավունքները պետք է իրականացվեն անդամ պետությունների կողմից կամ եթե անդամ պետությունը նախատեսել է, կարգավորող մարմինների կողմից:

52) Սպառողներին պետք է մատչելի լինի էներգիայի ոլորտի հետ կապված իրենց իրավունքների վերաբերյալ պարզ և հասկանալի տեղեկատվություն: Հանձնաժողովը պետք է համապատասխան շահառուների, ներառյալ անդամ պետությունների, ազգային կարգավորող մարմինների, սպառողների կազմակերպությունների և էլեկտրաէներգիայի տնտեսվարող սուբյեկտների հետ խորհրդակցելուց հետո հիմնադրի հասանելի, հասկանալի էներգիայի սպառողների ցուցակ՝ սպառողներին իրենց իրավունքների մասին գործնական տեղեկատվություն տրամադրելով: Այդ ցուցակը պետք է տրամադրվի բոլոր սպառողներին և պետք է հանրորեն մատչելի լինի:

53) էներգիայի անբավարարությունը Համայնքում հասունացող խնդիր է: Անդամ պետությունները, որոնց վրա ներազդում է և որոնք դեռևս չեն մշակել, պետք է այդուհանդերձ մշակեն ազգային գործողությունների պլան կամ համապատասխան այլ շրջանակներ՝ պայքարելով էներգիայի անբավարարության դեմ, նպատակ ունենալով նվազեցնել այս իրավիճակից տուժող մարդկանց քանակը: Բոլոր դեպքերում անդամ պետությունները պետք է խոցելի սպառողների համար ապահովեն անհրաժեշտ էներգիայի մատակարարում: Այդ անելով ինտեգրված մոտեցում, ինչպիսին է սոցիալական քաղաքականության շրջանակում, կարող է օգտագործվել և միջոցառումները կարող են ներառել սոցիալական քաղաքականությունը կամ բնակարաններում էներգիայի արդյունավետության բարելավումը: Սույն Հրահանգը նվազագույնը պետք է թույլ տա այն ազգային քաղաքականությունը, որը հօգուտ խոցելի սպառողների է:

54) Սպառողների ավելի մեծ պաշտպանություն է երաշխավորվում բոլոր սպառողների համար վեճերի լուծման մատչելի արդյունավետ միջոցների շնորհիվ: Անդամ պետությունները պետք է ներկայացնեն բողոքների քննության արագ և արդյունավետ ընթացակարգեր:

55) Պետք է հնարավոր լինի տնտեսական գնահատման վրա հիմնել գրագետ չափման համակարգերի ներմուծումը: Եթե այդ գնահատումը եզրակացնի, որ գրագետ չափման

նման համակարգերի ներմուծումը տնտեսական տեսանկյունից ողջամիտ է և ծախսարդյունավետ միայն էլեկտրաէներգիայի որոշակի քանակություն սպառողների համար, անդամ պետությունները պետք է կարողանան սա հաշվի առնել գրագետ չափման համակարգերի իրականացման ժամանակ:

56) Շուկայական գները պետք է խրախուսանքի ճիշտ միջոց տրամադրեն ցանցի զարգացման և էլեկտրաէներգիայի նոր արտադրության մեջ ներդրում անելու համար:

57) Տարբեր մատակարարների համար արդար մրցակցություն և ազատ մուտք խթանելը և էլեկտրաէներգիայի նոր արտադրության կարողությունը ուժեղացնելը անդամ պետությունների համար պետք է շատ կարևոր լինի, որպեսզի թույլ տա, որ սպառողները լիարժեք օգտվեն էլեկտրաէներգիայի ազատականացված ներքին շուկայի բոլոր հնարավորություններից:

58) էլեկտրաէներգիայի ներքին շուկա ստեղծելու նպատակով անդամ պետությունները պետք է խրախուսեն նրանց ազգային շուկաների ինտեգրումը և համակարգի օպերատորների համագործակցությունը Համայնքի և տարածաշրջանային մակարդակում, ինչպես նաև ներառելով մեկուսացված համակարգերի էլեկտրաէներգիայի «կղզյակներ», որոնք մնում են Համայնքում:

59) էլեկտրաէներգիայի իրական ներքին շուկա ստեղծելը Համայնքում ցանցով կապված լինելու միջոցով, պետք է լինի սույն Հրահանգի հիմնական նպատակներից մեկը և միջսահմանային փոխհարաբերությունները և տարածաշրջանային շուկաները կարգավորող հարցերն այդ պատճառով պետք է լինեն կարգավորող մարմինների հիմնական խնդիրներից մեկը՝ համապատասխան դեպքում Գործակալության հետ համագործակցելով:

60) Իրական ներքին շուկայի համար ընդհանուր կանոններ ապահովելու և բոլորի համար մատչելի էլեկտրաէներգիայի լայնորեն մատակարարումը նույնպես պետք է կինի սույն Հրահանգի հիմնական նպատակներից մեկը: Այդ նպատակով շուկայի անխաթար գները պետք է խթան հանդիսանան միջսահմանային փոխկապակցվածության և էլեկտրաէներգիայի նոր արտադրության մեջ ներդրումների համար՝ միևնույն ժամանակ երկարատև ժամկետով հանգեցնելով գների համապատասխանեցմանը:

61) Կարգավորող մարմինները պետք է նաև տեղեկատվություն տրամադրեն շուկայի վերաբերյալ՝ թույլ տալով Հանձնաժողովին իրականացնել իր դիտարկման և դիտանցման դերը էլեկտրաէներգիայի ներքին շուկայի նկատմամբ և դրա կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարատև զարգացումը, ներառյալ արտադրման ունակության,

էլեկտրաէներգիայի արտադրության տարբեր աղբյուրների, ենթակառուցվածքի փոխանցման և բաշխման, ծառայությունների որակի, միջսահմանային առևտրի, գերբեռնվածության կառավարման, ներդրումների, մեծածախ և սպառողական գները, շուկայի իրացվելիությունը և շրջակա միջավայրի և արդյունավետության զարգացումները: Ազգային կարգավորող մարմինները պետք է հաշվետու լինեն մրցակցային մարմիններին և Հանձնաժողովին, այն անդամ պետություններին, որտեղ գները բացասական ազդեցություն ունեն մրցակցության և շուկայի պատշաճ գործունեության վրա:

62) Քանի որ սույն Հրահանգի նպատակը, այն է՝ լիարժեք գործող էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ստեղծումը, չի կարող բավարար կերպով իրականացվել անդամ պետությունների կողմից և, հետևաբար, կարող է առավել լավ իրականացվել Համայնքի մակարդակով, Համայնքը կարող է միջոցներ ընդունել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակին հասնելու համար:

63) «էլեկտրականության փոխանակման միջսահմանային ցանցին միանալու պայմանների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի թիվ 714/2009 (ԵՀ) կանոնակարգի համաձայն Հանձնաժողովը կարող է ուղեցույցեր ընդունել՝ ներդաշնակության համապատասխան աստիճանի հասնելու համար: Նման ուղեցույցերը, որոնք համարվում են պարտադիր իրականացվող միջոցառումներ նույնպես համապատասխանում են սույն Հրահանգի որոշ դրույթներին՝ օգտակար գործիք, որն անհրաժեշտության դեպքում արագ կարող է ընդունվել:

64) Սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը [11] համապատասխան:

65) Մասնավորապես, Հանձնաժողովը պետք է իրավասու լինի ընդունել Կանոնակարգի նպատակներն իրականացնելու համար պահանջվող ներդաշնակեցման նվազագույն աստիճանն ապահովելու համար անհրաժեշտ ուղեցույցներ: Քանի որ այդ ակտերն ընդհանուր բնույթ են կրում և նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար՝ լրացնելով այն նոր, ոչ էական տարրերով, ապա դրանք պետք է

ընդունվեն թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա հոդվածով նախատեսված մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորման ընթացակարգի համաձայն:

66) Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետին համապատասխան [12]՝ անդամ պետություններին պետք է խրախուսել, իրենց և Համայնքի շահերից ելնելով, կազմել աղյուսակներ, որոնք հնարավորինս կհամեմատեն սույն Հրահանգի և փոխատեղման միջոցները և հրապարակել դրանք:

67) Հաշվի առնելով թիվ 2003/54/ԵՀ հրահանգում կատարվող փոփոխությունների շրջանակը՝ պարզության և ռացիոնալիզացման նպատակներով ցանկալի է, որ տվյալ դրույթները վերամշակվեն՝ դրանք համախմբելով մեկ միասնական տեքստում՝ նոր հրահանգում:

68) Սույն Հրահանգը պահպանում է հիմնարար իրավունքները և հետևում է, մասնավորապես, Եվրոպական միության հիմնարար իրավունքների մասին խարտիայով ճանաչված սկզբունքներին,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ 1

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Հոդված 1

Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

Սույն Հրահանգը սահմանում է ընդհանուր կանոններ էլեկտրաէներգիայի արտադրման, փոխանցման, բաշխման և էլեկտրաէներգիայի մատակարարման համար, ներառյալ սպառողների պաշտպանության մասին դրույթները՝ նպատակ ունենալով Համայնքում զարգացնել և ինտեգրել էլեկտրաէներգիայի մրցակցային շուկաները: Այն սահմանում է կանոններ, որոնք վերաբերում են էլեկտրաէներգիայի ոլորտի կազմակերպմանը և գործունեությանը, շուկային բաց մուտքին, տեղերների հայտարարման չափանիշներին և

ընթացակարգերին և արտոնագրերի տրամադրմանը և համակարգերի գործունեությանը: Այն նաև սահմանում է էլեկտրաէներգիայի սպառողների համընդհանուր ծառայությունների հետ կապված պարտավորություններ և իրավունքներ և պարզաբանում է մրցակցության պահանջները:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1. «արտադրություն» նշանակում է էլեկտրաէներգիայի արտադրություն,
2. «արտադրող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը էլեկտրաէներգիա է արտադրում,
3. «փոխանցում» նշանակում է չափազանց բարձր լարման և բարձր լարման համակցված համակարգով էլեկտրաէներգիայի փոխանցումը վերջնական սպառողներին կամ առաքիչներին, բայց չի ներառում մատակարարումը,
4. «փոխանցման համակարգի օպերատոր» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով պատասխանատու է շահագործման համար՝ ապահովելով տվյալ տարածքում փոխանցման համակարգի պահպանությունը և անհրաժեշտության դեպքում զարգացումը և առկայության դեպքում դրա փոխկապակցվածությունը այլ համակարգերի հետ և ապահովելով համակարգի երկարատև հնարավորությունը բավարարել էլեկտրաէներգիայի փոխանցման համար ողջամիտ պահանջներ,
5. «բաշխում» նշանակում է բարձր լարման, միջին լարման և ցածր լարման բաշխման համակարգով էլեկտրաէներգիայի տրամադրումը սպառողներին, բայց չի ներառում մատակարարումը,
6. «բաշխման համակարգի օպերատոր» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով պատասխանատու է շահագործման համար՝ ապահովելով տվյալ տարածքում բաշխման համակարգի պահպանությունը և անհրաժեշտության դեպքում զարգացումը և առկայության դեպքում դրա փոխկապակցվածությունը այլ համակարգերի հետ և ապահովելով համակարգի երկարատև հնարավորությունը բավարարել էլեկտրաէներգիայի փոխանցման համար ողջամիտ պահանջներ,

7. «սպառող» նշանակում է էլեկտրաէներգիայի մեծածախ կամ վերջնական սպառողը,
8. «մեծածախ սպառող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով էլեկտրաէներգիա է գնում համակարգի, որտեղ այն գրանցված է, ներսում կամ դրսում վերավաճառքի համար,
9. «վերջնական սպառող» նշանակում է սպառող, ով էլեկտրաէներգիա է գնում իր սեփական օգտագործման համար,
10. «կենցաղային սպառող» նշանակում է սպառող, ով էլեկտրաէներգիա է գնում իր սեփական կենցաղային սպառման համար, բացառությամբ առևտրային կամ մասնագիտական գործունեությունը,
11. «ոչ կենցաղային սպառող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ովքեր էլեկտրաէներգիա են գնում, որը իրենց սեփական կենցաղային օգտագործման համար չէ և ընդգրկում է արտադրողների և մեծածախ սպառողներին,
12. «որակյալ սպառող» նշանակում է սպառող, ով ազատ է իր ընտրությամբ մատակարարից էլեկտրաէներգիա գնել 33-րդ հոդվածի իմաստով,
13. «էլեկտրահաղորդման գիծ» նշանակում է սարքավորում, որն օգտագործվում է էլեկտրաէներգիայի համակարգերը կապելու համար,
14. «փոխկապակցված համակարգ» նշանակում է փոխանցման և բաշխման մի շարք համակարգեր, որոնք կապված են իրար հետ մեկ կամ ավելի էլեկտրական գծերով,
15. «ուղիղ գիծ» նշանակում է կամ էլեկտրաէներգիայի գիծ, որը կապում է առանձնացված արտադրման տարածքը առանձին սպառողին կամ էլեկտրաէներգիայի գիծ, որը կապում է էլեկտրաէներգիայի արտադրողին և էլեկտրաէներգիայի մատակարարման տնտեսվարող սուբյեկտին, որպեսզի ուղղակիորեն մատակարարեն իրենց սեփական տարածքներին, մասնաճյուղերին և համապատասխան սպառողներին,
16. «տնտեսական նախադեպ» նշանակում է էլեկտրաէներգիայի մատակարարման աղբյուրների աստիճանավորումը՝ տնտեսական չափանիշի համաձայն,
17. «օժանդակ ծառայություն» նշանակում է ծառայություն, որն անհրաժեշտ է փոխանցման կամ բաշխման համակարգի գործունեության համար,

18. «համակարգի օգտագործող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով մատակարարում է կամ ում մատակարարում են փոխանցման կամ բաշխման համակարգի միջոցով,

19. «մատակարարում» նշանակում է էլեկտրաէներգիայի վաճառքը ներառյալ վերավաճառքը սպառողներին,

20. «էլեկտրաէներգիայի ինտեգրված տնտեսվարող սուբյեկտ» նշանակում է ուղղահայաց կամ հորիզոնական ինտեգրված տնտեսվարող սուբյեկտ,

21. «ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտ» նշանակում է էլեկտրաէներգիայի տնտեսվարող սուբյեկտ կամ էլեկտրաէներգիայի տնտեսվարող սուբյեկտների խումբ, որտեղ նույն անձը կամ նույն անձինք լիազորված են ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկողություն իրականացնել և որտեղ տնտեսվարող սուբյեկտը կամ տնտեսվարող սուբյեկտների խումբը իրականացնում են փոխանցման կամ բաշխման գործառույթներից առնվազն մեկը և էլեկտրաէներգիայի արտադրության կամ մատակարարման գործառույթներից առնվազն մեկը,

22. «առնչվող տնտեսվարող սուբյեկտ» նշանակում է փոխկապակցված կազմակերպություններ, 1983 թվականի հունիսի 13-ի 83/349/ԵՏՀ Խորհրդի յոթերորդ հրահանգի 41-րդ հոդվածի իմաստով, որը հիմնված է «Համախմբված ֆինանսական հաշվետվությունների [14], և/կամ կապակցված տնտեսվարող սուբյեկտների այդ հրահանգի 33(1) հոդվածի իմաստով և/կամ նույն շահառուներին պատկանող տնտեսվարող սուբյեկտների մասին» Պայմանագրի 44(2)(է) հոդվածի վրա:

23. «հորիզոնական ինտեգրված տնտեսվարող սուբյեկտ» նշանակում է տնտեսվարող սուբյեկտ, որն իրականացնում է արտադրության գործառույթներից առնվազն մեկը՝ վաճառքի, փոխանցման կամ բաշխման կամ էլեկտրաէներգիայի մատակարարման և էլեկտրաէներգիայի հետ կապ չունեցող այլ գործողությունների համար,

24. «տեղերի ընթացակարգ» նշանակում է ընթացակարգ, որի միջոցով նախատեսված լրացուցիչ պահանջները և փոխարինող կարողությունը կարգավորվում են նոր կամ գոյություն ունեցող արտադրման կարողություն ունեցող մատակարարների կողմից,

25. «երկարատև նախագծում» նշանակում է արտադրման և փոխանցման և բաշխման կարողությունների մեջ երկարատև ներդրում կատարելու անհրաժեշտության նախագծումը,

26. «փոքր առանձնացված համակարգ» նշանակում է ցանկացած համակարգ 1996 թվականին 3000 ԳՎտ/ժամից քիչ էներգասպառմամբ, որտեղ տարեկան մինչև 5 % սպառումը ձեռք է բերվում այլ համակարգերի հետ փոխկապակցվածության միջոցով,

27. «փոքր առանձնացված համակարգ» նշանակում է ցանկացած համակարգ 1996 թվականին 500 ԳՎտ/ժամից քիչ էներգասպառմամբ, որտեղ այլ համակարգերի հետ փոխկապակցվածություն չկա,

28. «անվտանգություն» նշանակում է և էլեկտրաէներգիայի մատակարարման, տրամադրման անվտանգությունը և տեխնիկական անվտանգությունը,

29. «էներգիայի արդյունավետություն/պահանջարկի կառավարում» նշանակում է ընդհանուր կամ ինտեգրված մոտեցում, որը նպատակաուղղված է ազդեցություն ունենալ էներգասպառման քանակի և ժամանակի վրա՝ էներգիայի առաջնային սպառումը և գերծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար՝ նախընտրություն տալով էներգիայի արդյունավետության միջոցառումներում ներդրումներին և այլ միջոցառումներին, ինչպիսին են մատակարարման դադարեցվող պայմանագրերը, արտադրման կարողությունը մեծացնող ներդրումների համեմատ, եթե սրանք ամենաարդյունավետ և խնայող տարբերակ են՝ հաշվի առնելով կրճատված էներգասպառման բնապահպանական դրական ազդեցությունը և մատակարարման անվտանգությունը և դրա հետ առնչվող բաշխման ծախսերը,

30. «վերականգնվող աղբյուրներից ստացվող էներգիա» նշանակում է էներգիա, որը ստացվում է վերականգնվող ոչ հանածո աղբյուրներից (քամու, արեգակնային, կենսաջերմային, ալիքի, մակընթացության, հիդրոջերմային և օվկիանոսային էներգիա, հիդրոէներգիա, կենսազանգվածից, աղբավայրերից արտանետվող գազ, կեղտաջրերի մաքրման կայանից ստացվող գազ և բիոգազեր),

31. «Բաշխված արտադրություն» նշանակում է արտադրող կայաններ, որոնք կապված են բաշխման համակարգի հետ:

32. «էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագիր» նշանակում է պայմանագիր էլեկտրաէներգիայի մատակարարման մասին, սակայն չի ընդգրկում էլեկտրաէներգիայի ածանցյալներ,

33. «էլեկտրաէներգիայի բաշխիչ» նշանակում է ֆինանսական գործիք, որը նշված է «Ֆինանսական գործիքների շուկայի մասին»[15] Եվրոպական պառլամենտի և Խորհրդի

2004 թվականի ապրիլի 21-ի 2004/39/ԵՀ հրահանգի I հավելվածի Գ բաժնի 5,6 կամ 7-րդ կետերում, երբ այդ գործիքները վերաբերում են էլեկտրաէներգիային,

34. «վերահսկում» նշանակում է իրավունքներ, պայմանագրեր կամ որևէ այլ միջոց, որոնք առանձին-առանձին կամ միասին, ինչպես նաև հաշվի առնելով առկա փաստերը և օրենսդրությունը, կազմակերպությունում որոշում կայացնելու հնարավորություն են տալիս՝ մասնավորապես հետևյալի միջոցով՝

ա). կազմակերպության ակտիվների կամ դրանց մի մասի սեփականության իրավունքով տնօրինման կամ օգտագործման իրավունքի,

բ). իրավունքներ կամ պայմանագրեր, որոնք որոշիչ ազդեցություն են ունենում կազմակերպության կազմի, մասնաճյուղերի քվեարկության կամ որոշումների կայացման վրա:

35. «էլեկտրաէներգիայի տնտեսվարող սուբյեկտ» նշանակում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է հետևյալ գործառույթներից առնվազն մեկը՝ էլեկտրաէներգիայի արտադրություն, փոխանցում, բաշխում, մատակարարում կամ էլեկտրաէներգիայի գնում, որը պատասխանատու է այդ գործառույթների հետ կապված առևտրային, տեխնիկական կամ շահագործման աշխատանքների համար, բայց չի ներառում վերջնական սպառողներին:

ԳԼՈՒԽ II

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ

Հոդված 3

Հանրային ծառայության պարտականություններ և սպառողների պաշտպանություն

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ իրենց ինստիտուցիոնալ կառուցվածքի հիման վրա և ենթակայության սկզբունքի համաձայն, չհակասելով 2-րդ պարբերությանը, էլեկտրաէներգիայի տնտեսվարող սուբյեկտները գործեն սույն Հրահանգի սկզբունքների համաձայն՝ նպատակ ունենալով ստեղծել էլեկտրաէներգիայի մրցակցային, ապահով և բնապահպանական տեսանկյունից կայուն շուկա և չպետք է խտրականություն դնեն այս

տնտեսվարող սուբյեկտների միջև կամ իրավունքների կամ պարտականությունների առումով:

2. Լիարժեքորեն հաշվի առնելով պայմանագրի համապատասխան դրույթները՝ մասնավորապես դրա 86-րդ հոդվածը՝ անդամ պետությունները կարող են էլեկտրաէներգիայի բնագավառում ընդհանուր տնտեսական շահի վրա գործող տնտեսվարող սուբյեկտների վրա դնել հանրային ծառայության պարտականություններ, որոնք կարող են վերաբերել անվտանգությանը, ներառյալ մատակարարման անվտանգությանը, ապրանքների պարբերականությանը, որակին և գնին և բնապահպանությանը, ներառյալ էլեկտրաէներգիայի արդյունավետությունը, վերականգնվող աղբյուրներից էներգիային և կլիմայի պաշտպանությանը: Նման պարտականությունները պետք է պարզ սահմանվեն, լինեն թափանցիկ, ոչ խտրական, ստուգման ենթակա և պետք է երաշխավորեն Համայնքի էլեկտրաէներգիայի տնտեսվարող սուբյեկտների հավասար մուտքը ազգային սպառողներին: Մատակարարման անվտանգության հետ կապված, էլեկտրաէներգիայի արդյունավետության/պահանջարկի կողմի կառավարումը և բնապահպանական նպատակների և վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիայի ստացման նպատակների իրագործման համար, ինչպես նշված է այս պարբերությունում, անդամ պետությունները կարող են կիրառել երկարաժամկետ պլանը՝ հաշվի առնելով երրորդ կողմերի՝ համակարգի նկատմամբ մուտք ունենալու հնարավորությունը:

3. Անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որ բոլոր կենցաղային սպառողները և երբ անդամ պետությունները նպատակահարմար են համարում, փոքր տնտեսվարող սուբյեկտները (մասնավորապես տնտեսվարող սուբյեկտները, որոնք ունեն 50-ից քիչ աշխատող և տարեկան շրջանառություն կամ հաշվապահական հաշվեկշիռ, որը չի գերազանցում 10 միլիոն եվրոն), օգտվում են համընդհանուր ծառայությունից, այն է իրենց տարածքում ողջամիտ, հեշտությամբ և պարզորեն համեմատվող, թափանցիկ և խտրականությունը բացառող գներով որոշակի որակ ունեցող էլեկտրաէներգիա ստանալու իրավունքից: Համընդհանուր ծառայության տրամադրումը ապահովելու համար անդամ պետությունները կարող են նշանակել վերջնական մատակարարներին: Անդամ պետությունները պետք է բաշխող կազմակերպությունների վրա պարտականություն դնեն սպառողներին իրենց ցանցին միացնելու համար 37(6) հոդվածով սահմանված ընթացակարգով պայմանների, պահանջների և սակագների համաձայն: Սույն Հրահանգում ոչինչ չի կանխարգելում անդամ պետություններին ուժեղացնել կենցաղային,

փոքր և միջին չափի սպառողների դիրքը շուկայում՝ խթանելով այդ դասի սպառողների ներկայացուցիչների կամավոր կերպով միավորվելու հնարավորությունները:

Առաջին ենթապարբերությունը պետք է իրականացվի թափանցիկ և խտրականությունը բացառող կերպ և չպետք է վտանգի 33 հոդվածով նախատեսված շուկայի բացումը:

4. Անդամ պետությունները ապահովում են, որ բոլոր սպառողները իրավունք ունենան էլեկտրաէներգիա ստանալ մատակարարի կողմից ըստ մատակարարի հետ կնքված պայմանագրի, անկախ, թե որ անդամ պետությունում է մատակարարը գրանցված, եթե մատակարարը պահպանում է առևտրային և հավասարակշռման կանոնները: Այս կապակցությամբ, անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր միջոցներ, որոնք անհրաժեշտ են ապահովելու, որ վարչական ընթացակարգերը խտրականություն չդնեն մատակարարման տնտեսվարող սուբյեկտներին, որոնք արդեն գրանցված են մեկ այլ անդամ պետությունում:

5. Անդամ պետություններն ապահովում են, որ՝

եթե սպառողը, որ պահպանում է պայմանագրի պայմանները, ցանկանում է փոխել մատակարարին, փոփոխությունը պետք է կատարվի համապատասխան օպերատորի(ների) կողմից երեք շաբաթվա ընթացքում և

ա) սպառողները իրավունք ունեն ստանալ սպառման մասին բոլոր համապատասխան տվյալները:

բ) Անդամ պետությունները ապահովում են, որ սպառողներն ունենան (ա) և (բ) կետերում նշված իրավունքները՝ ծախսի, ջանքերի և ժամանակի հետ կապված խտրականությունը բացառող կերպ:

6. Ֆինանսական փոխհատուցումը, այլ տեսակի փոխհատուցումը և բացառիկ իրավունքները, որոնք անդամ պետությունը տրամադրում է 2-րդ և 3-րդ պարբերություններով սահմանված պարտականությունների կատարման համար, պետք է իրականացվեն խտրականությունը բացառող և թափանցիկ կերպով:

7. Անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցառումներ վերջնական սպառողներին պաշտպանելու համար և, մասնավորապես, ապահովում են բավարար երաշխիքներ խոցելի սպառողներին պաշտպանելու համար: Այս համատեքստում յուրաքանչյուր անդամ պետություն սահմանում է խոցելի սպառողներ հասկացությունը, որը կարող է վերաբերել էներգիայի անբավարարությանը և այդ թվում՝ նման սպառողներին

էլեկտրաէներգիա կրիտիկական պահերին կտրելու արգելքին: Անդամ պետություններն ապահովում են, որ խոցելի սպառողների հետ կապված իրավունքներն ու պարտականությունները կիրառվեն: Մասնավորապես, նրանք միջոցառումներ են ձեռնարկում պաշտպանելու վերջնական սպառողներին հեռավոր վայրերում: Նրանք ապահովում են սպառողների պաշտպանության բարձր մակարդակ, մասնավորապես պայմանագրերի պայմանների թափանցիկության, ընդհանուր բնույթի տեղեկությունների և վեճերի լուծման մեխանիզմների առումով: Անդամ պետությունները ապահովում են, որ իրավասու սպառողը իրականում կարողանա հեշտ փոխել մատակարարին: Առնվազն կենցաղային սպառողների առումով, այդ միջոցառումները ներառում են I հավելվածում սահմանվածները:

8. Անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, օրինակ կազմում են էներգիայի ազգային գործողությունների պլաններ՝ տրամադրելով սոցիալական ապահովության արտոնություններ, խոցելի սպառողներին ապահովելով անհրաժեշտ էլեկտրաէներգիայի մատակարարմամբ կամ նպաստում են էներգիայի արդյունավետության բարձրացմանը՝ սահմանված վայրերում էներգիայի անբավարարության խնդիրը լուծելու համար՝ այդ հարցը դիտելով էներգիայի անբավարարության լայն համատեքստում: Նման միջոցառումները չպետք է խոչընդոտեն 33-րդ հոդվածում սահմանված շուկայի արդյունավետ բացմանը կամ շուկայի գործունեությանը և պետք է Հանձնաժողովին տեղեկացնեն, անհրաժեշտության դեպքում, սույն հոդվածի 15-րդ պարբերության համաձայն: Նման ծանուցման մեջ մտնում է նաև այն միջոցառումները, որոնք ձեռնարկվում են ընդհանուր սոցիալական ապահովության համակարգի համատեքստում:

9. Անդամ պետությունները ապահովում են, որ էլեկտրաէներգիայի մատակարարները հաշիվներում կամ դրանց հետ և գովազդային նյութերում, որոնք հասանելի են վերջնական սպառողներին նշեն՝

ա) էլեկտրաէներգիայի յուրաքանչյուր աղբյուրի կողմից նախորդ տարվա ընթացքում արված ներդրումը մատակարարի վառելիքի կազմում՝ հասկանալի կերպով և ազգային մակարդակում, պարզ համադրելի կերպով,

բ) առնվազն առկա հղման աղբյուրների նշում, ինչպիսին են ինտերնետային կայքերը, որտեղ հանրությանը ներկայացվում է տեղեկատվություն նախորդ տարվա ընթացքում մատակարարի վառելիքի կազմից արտադրված էլեկտրաէներգիայից առաջացող առնվազն

CO2 արտանետումների և ռադիոակտիվ թափոնների կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ,

գ) Տեղեկատվություն վեճերի ժամանակ դրանց լուծման միջոցներից օգտվելու իրենց իրավունքների մասին:

Առաջին ենթապարբերության (ա) և (բ) կետերի առումով էլեկտրաէներգիայի փոխանակման միջոցով ստացված կամ Համայնքից դուրս գտնվող տնտեսվարող սուբյեկտից ներմուծված էլեկտրաէներգիայի դեպքում կարող են նախորդ տարվա համար փոխանակման միջոցով կամ տվյալ ձեռնարկության ընդհանուր տվյալները օգտագործվեն:

Կարգավորող մարմինը կամ այլ իրավասու ազգային մարմինը անհրաժեշտ քայլեր է ձեռնարկում ապահովելու, որ տեղեկատվությունը, որը մատակարարների կողմից տրամադրվում է իրենց սպառողներին սույն հոդվածի համաձայն վստահելի է և տրամադրվում է ազգային մակարդակում պարզ համադրելի կերպով:

10. Անդամ պետություններն իրականացնում են համապատասխան միջոցառումներ սոցիալական և տնտեսական համախմբվածության և շրջակա միջավայրի պաշտպանության նպատակներին հասնելու համար, որը կարող է համապատասխան դեպքում ներառել էներգիայի արդյունավետության /պահանջարկի կողմի կառավարման միջոցառումներ և կլիմայական փոփոխությունների դեմ պայքարող միջոցների և մատակարարման անվտանգությանն ուղղված միջոցառումներ: Նման միջոցառումները կարող են, մասնավորապես, ներառել, տնտեսական բավարար խթանների մասին դրույթներ, հարկ եղած դեպքում, օգտագործելով ազգային և Համայնքի բոլոր գործող գործիքները կապված ենթակառուցվածքների անհրաժեշտ ցանցի շահագործման և կառուցման, այդ թվում՝ փոխկապակցության կարողություններ հետ:

11. Էներգիայի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անդամ պետությունները կամ եթե անդամ պետությունը սահմանել է, կարգավորող մարմինը առաջարկում է, որ էլեկտրաէներգիայի տնտեսվարող սուբյեկտները օպտիմալացնեն էլեկտրաէներգիայի օգտագործումը, օրինակ, էներգիայի կառավարման ծառայությունների, նորարարական գնային բանաձևերի մշակման կամ ողջամիտ չափման համակարգերի կամ հարկ եղած դեպքերում՝ ինտելեկտուալ էներգահամակարգի ներմուծման միջոցով:

12. Անդամ պետություններն ապահովում են, որպեսզի գոյություն ունենան կոնտակտային ընդհանուր կետեր, որոնք սպառողներին անհրաժեշտ տեղեկություններ կտրամադրեն իրենց իրավունքների, գործող օրենսդրության և վեճերի լուծման միջոցների մասին, որոնց

իրենք կարող են դիմել վեճ առաջանալու դեպքում: Նման տեղեկատուները կարող են լինել սպառողներին տեղեկություններ տրամադրող ավելի մեծ տեղեկատուների մաս:

13. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ գոյություն ունենա անկախ մեխանիզմ, օրինակ էներգիայի հարցերով օմբուդսման կամ սպառողների պաշտպանության մարմին, որը կապահովի բողոքների արդյունավետ ընթացակարգ և վեճերի կարգավորում արտադատական կարգով:

14. Անդամ պետությունները կարող են որոշել չկիրառել 7, 8, 32 և (կամ) 34-րդ հոդվածների դրույթները, եթե դրանց կիրառությունը կարող է իրավաբանորեն կամ գործնականում խոչընդոտել ընդհանուր տնտեսական շահերից ելնելով էլեկտրաէներգիայի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների վրա դրված պարտավորությունների իրականացումը և եթե առևտրի զարգացումները ազդեցության չեն ենթարկվի այնպես, որ հակասեն Համայնքի շահերին: Համայնքի շահերը, ի թիվս այլ բաների, ներառում է իրավասու սպառողների համար մրցակցություն սույն Հրահանգի և Պայմանագրի 86-րդ հոդվածի համաձայն:

15. Անդամ պետությունները, սույն Հրահանգը կիրառելիս, տեղեկացնում են Հանձնաժողովին բոլոր այն միջոցառումների մասին, որոնք իրենք ընդունել են հանրային ծառայության պարտավորությունները կատարելու համար, ներառյալ՝ սպառողների և շրջակա միջավայրի պաշտպանության մասով և ազգային և միջազգային մրցակցության վրա այդ պաշտպանության հնարավոր ազդեցությունների մասով, անկախ այն բանից, թե այդ միջոցները պահանջում են սույն Հրահանգի դրույթներից շեղում, թե ոչ: Յուրաքանչյուր հաջորդ երկու տարին մեկ նրանք Հանձնաժողովին տեղեկացնում են նման միջոցների գծով կատարված բոլոր փոփոխությունների մասին, անկախ այն բանից, թե դրանք պահանջում են սույն Հրահանգից շեղում, թե ոչ:

16. Հանձնաժողովը պետք է համապատասխան շահառուների, ներառյալ անդամ պետությունների, ազգային կարգավորող մարմինների, սպառողների կազմակերպությունների և էլեկտրաէներգիայի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների և հիմնվելով մինչ օրս արձանագրված առաջընթացի վրա, սոցիալական գործընկերների հետ խորհրդակցելուց հետո, էներգիայի սպառման պարզ և հստակ տեղեկագիր կազմի՝ էներգիա սպառողներին գործնական տեղեկատվություն տրամադրելով իրենց իրավունքների մասին: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ էլեկտրաէներգիայի մատակարարները կամ բաշխման համակարգի օպերատորները կարգավորող մարմնի հետ համագործակցության պայմաններում անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն՝ իրենց

բաժանորդներին էներգիայի սպառման տեղեկագրի պատճենը տրամադրելու և և այդ տեղեկագիրը հանրորեն հասանելի դարձնելու համար:

Հոդված 4

Մատակարարման անվտանգության դիտանցումը

Անդամ պետությունները ապահովում են մատակարարման անվտանգության հարցերի դիտանցումը: Երբ անդամ պետությունները ճիշտ են համարում, նրանք կարող են այդ պարտականությունը փոխանցել 35-րդ հոդվածում նշված կարգավորող մարմնի վրա: Նման դիտանցումը, մասնավորապես, վերաբերում է ազգային շուկայում պահանջարկի և առաջարկի հավասարակշռությանը, հետագայում ակնկալվող պահանջարկի մակարդակին և առկա մատակարարումներին, ակնկալվող լրացուցիչ կարողություններին, որոնք պլանավորվում կամ կազմման փուլում են և ցանցերի շահագործման որակին և մակարդակին, ինչպես նաև առավելագույն պահանջարկի և մեկ կամ մի քանի մատակարարների դեֆիցիտի դեպքում ձեռնարկվող միջոցներին: Յուրաքանչյուր երկու տարին մեկ մինչև հուլիսի 31-ը իրավասու մարմինները պետք է հրապարակեն այդ հարցերի դիտանցման արդյունքները, ինչպես նաև դրանց լուծմանն ուղղված միջոցները ամփոփող հաշվետվություն և ուղարկում են հաշվետվությունը Հանձնաժողովին:

Հոդված 5

Տեխնիկական կանոններ

Կարգավորող մարմինները, երբ անդամ պետությունները նախատեսում են կամ անդամ պետությունները ապահովում են, որ սահմանվեն տեխնիկական անվտանգության չափանիշները և որ մշակվեն և հրապարակվեն տեխնիկական կանոնները, որոնք սահմանում են տեխնիկական նախագծի և շահագործման նվազագույն պահանջները՝ էլեկտրականության արտադրման կայանների համակարգին, բաշխման համակարգերին, սպառողների ուղղակիորեն միացող սարքավորումներին, էլեկտրահաղորդման և ուղղակի գծերին միանալու համար: Այս տեխնիկական կանոնները ապահովում են համակարգերի փոխգործողությունը և պետք է լինեն օբյեկտիվ և ոչ խտրական: Գործակալությունը, հարկ եղած դեպքում, կարող է հանդես գալ համապատասխան առաջարկներով՝ այդ կանոններին համապատասխանելու նպատակով: Այդ կանոնները ծանուցվում են Հանձնաժողովին

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի՝ տեխնիկական ստանդարտների և կարգավորումների ու Տեղեկատվական հասարակության ծառայություններին վերաբերող կանոնների ոլորտում տեղեկատվության տրամադրման համար ընթացակարգ սահմանող 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն [16],

Հոդված 6

Տարածաշրջանային համագործակցության խթանում

1. Անդամ պետությունները, ինչպես նաև կարգավորող մարմինները, պետք է համագործակցեն միմյանց հետ իրենց ազգային շուկաները մեկ կամ մի քանի տարածաշրջանային մակարդակներով ինտեգրելու նպատակով, որպես լիովին ազատականացված ներքին շուկա ստեղծելու ուղղությամբ առաջին քայլ: Մասնավորապես, եթե անդամ պետությունները սահմանել են, կարգավորող մարմինները կամ անդամ պետությունները իրենք խթանում և նպաստում են տարածաշրջանային մակարդակով փոխադրման համակարգի օպերատորների համագործակցությանը, ներառյալ՝ միջսահմանային խնդիրների մասով՝ նպատակ հետապնդելով ստեղծել էլեկտրաէներգիայի մրցակցային ներքին շուկա, խթանել իրավական, կարգավորիչ և տեխնիկական շրջանակի հետևողականությանը և նպաստել էլեկտրաէներգիայի կղզյակներ կազմող մեկուսացված համակարգերի ինտեգրմանը, որոնք դեռևս գոյություն ունեն Համայնքում: Նման տարածաշրջանային համագործակցության մեջ մտնող աշխարհագրական տարածքները ներառում են թիվ 714/2009 կանոնակարգի (ԵՀ) 12(3) հոդվածի համաձայն սահմանված աշխարհագրական տարածքները: Նման համագործակցության մեջ կարող են մտնել այլ աշխարհագրական տարածքներ:

2. Գործակալությունը համագործակցում է ազգային կարգավորող մարմինների և փոխադրման համակարգի օպերատորների հետ ապահովելու համար տարբեր տարածաշրջանների միջև կարգավորիչ շրջանակների համապատասխանությունը, նպատակ ունենալով ստեղծել էլեկտրաէներգիայի ներքին մրցակցային շուկա: Եթե Գործակալությունը գտնում է, որ նման համագործակցության համար անհրաժեշտ են պարտադիր կանոններ, այդ դեպքում այն հանդես է գալիս համապատասխան առաջարկներով:

3. Անդամ պետությունները սույն Հրահանգի իրականացման միջոցով ապահովում են, որ փոխադրման համակարգի օպերատորները տարածաշրջանային մակարդակով ունենան

մեկ կամ մի քանի ինտեգրված համակարգ (համակարգեր), որը գործում է երկու և ավելի անդամ պետություններում՝ կարողությունների բաշխման և ցանցի անվտանգությունը ստուգելու նպատակով:

4. Եթե ուղղահայաց ինտեգրված փոխադրման համակարգի օպերատորները մասնակցում են նման համագործակցություն իրականացնելու նպատակով ձեռնարկված որևէ համատեղ միջոցառմանը, այդ համատեղ միջոցառման շրջանակում պետք է կազմվի և իրականացվի պարտավորությունների կատարման ծրագիր, որը սահմանում է այն միջոցառումները, որոնք պետք է ձեռնարկվեն՝ ապահովելու, որպեսզի խտրական և հակամրցակցային գործողություններ տեղի չունենան: Պարտավորությունների կատարման ծրագրով սահմանվում են աշխատակիցների՝ ոչ խտրական և հակամրցակցային գործողությունները բացառելու նպատակին հասնելուն ուղղված հատուկ պարտավորությունները: Այն ենթակա է հաստատման Գործակալության կողմից: Ծրագրի պարտավորությունների կատարումը անկախ դիտանցման է ենթարկվում ուղղահայաց ինտեգրված փոխադրման համակարգի օպերատորների վերահսկող պաշտոնատար անձանց կողմից:

ԳԼՈՒԽ III

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 7

Նոր կարողության արտոնագրման ընթացակարգ

1. Արտադրման նոր կարողություն ստեղծելու համար՝ անդամ պետությունները ընդունում են արտոնագրման ընթացակարգ, որն իրականացվում է օբյեկտիվ, թափանցիկ և ոչ խտրական չափանիշի համաձայն:

2. Անդամ պետությունները սահմանում են չափանիշները արտոնագրումների տրամադրման համար իրենց տարածքում արտադրման կարողություններ ստեղծելու համար: Համապատասխան չափանիշ սահմանելիս անդամ պետությունները հաշվի են առնում՝

ա. էլեկտրաէներգիայի համակարգի ապահովությունը և անվտանգությունը, կայանները և դրանց առնչվող սարքավորումները,

բ. հանրային առողջապահության պաշտպանությունը և ապահովությունը,

գ. շրջակա միջավայրի պաշտպանությունը,

դ. հողի օգտագործումը և տեղակայումը,

ե. հանրային տարածքի օգտագործումը,

զ. Էներգաարդյունավետությունը,

է. առաջնային աղբյուրների բնույթը,

Հայտատուին բնորոշ առանձնահատկությունները, ինչպիսին են տեխնիկական, տնտեսական և ֆինանսական կարողությունները,

ը. 3-րդ հոդվածի համաձայն ընդունված միջոցառումներին համապատասխանելը,

թ. Արտադրման կարողության ներդրումները ուղղված Համայնքի 2020 թվականին վերջնական համընդհանուր էլեկտրաէներգիայի սպառման մեջ ողջ համայնքի վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիայի առնվազն 20 % մասնաբաժնին՝ նշված 2009 թվականի ապրիլի 23-ի Եվրոպական պառլամենտի և Խորհրդի «Վերականգնվող աղբյուրներից էլեկտրաէներգիայի օգտագործման խրախուսման մասին» [17] 2009/28/ԵՀ հրահանգի 3(1) հոդվածում:

ժ. Արտանետումների կրճատմանն ուղղված արտադրական կարողությունների ներդրումը:

3. Անդամ պետությունները ապահովում են, որ արտոնագրման հատուկ ընթացակարգեր գործեն փոքր ապակենտրոնացված և (կամ) բաշխված արտադրության համար, որոնք հաշվի են առնում դրանց սահմանափակ չափը և պոտենցիալ ներգործությունը:

Անդամ պետությունները կարող են ուղեցույցեր սահմանել այդ հատուկ արտոնագրման ընթացակարգերի համար: Ազգային կարգավորող մարմինները կամ այլ իրավասու ազգային մարմինները, ներառյալ նախագծող մարմինները վերանայում են այդ ուղեցույցերը և կարող են դրանց մեջ փոփոխություններ առաջարկել:

Եթե անդամ պետությունները հիմնել են հողի օգտագործման թույլտվության հատուկ ընթացակարգեր, որոնք կիրառվում են արտադրման կարողությունների առումով հիմնական նոր ենթակառուցվածքների ծրագրերի դեպքում, անդամ պետությունները, անհրաժեշտության դեպքում, ներառում են նոր արտադրման կարողությունների ստեղծումը այդ ընթացակարգերի շրջանակում և դրանք իրականացնում են խտրականությունը բացառող կերպով և համապատասխան ժամանակահատվածում:

4. Արտոնագրման ընթացակարգերը և չափանիշները պետք է հրապարակվեն: Հայտատուներին տեղեկացնում են արտոնագրման տրամադրման մերժման պատճառների մասին: Այդ պատճառները օբյեկտիվ են, խտրականությունը բացառող, պատշաճ կերպով հիմնավորված: Բողոքարկման ընթացակարգերը պետք է մատչելի դարձվեն հայտատուի համար:

Հոդված 8

Նոր կարողությունների համար տենդեր

1. Անդամ պետությունները ապահովում են, մատակարարման անվտանգության շահից ելնելով, նոր կարողությունների տրամադրման հնարավորություն կամ էներգիայի արդյունավետության/պահանջարկի կողմի կառավարման միջոցառումներ տենդերի միջոցով կամ թափանցիկության և խտրականությունը բացառելու առումով նմանատիպ այլ ընթացակարգով՝ հրապարակված չափանիշի հիման վրա: Այդ ընթացակարգերը կարող են սակայն սկսել միայն երբ արտոնագրման ընթացակարգի հիման վրա, արտադրման կարողությունը, որը պետք է ստեղծվի կամ էներգիայի արդյունավետության/պահանջարկի կողմի կառավարման միջոցառումները, որոնք պետք է ձեռնարկվեն, բավարար չեն մատակարարման անվտանգությունը ապահովելու համար:

2. Անդամ պետությունները կարող են ապահովել հրապարակված չափանիշի հիման վրա նոր կարողությունների համար տենդերի հնարավորությունը՝ ելնելով բնապահպանական և նոր տեխնոլոգիաների խթանման շահերից: Նման տենդերը կարող է վերաբերել նոր կարողություններին կամ էներգիայի արդյունավետության/պահանջարկի կողմի կառավարման միջոցառումներին: Տենդերի ընթացակարգը կարող է սակայն, սկիզբ դրվել միայն երբ արտոնագրման ընթացակարգի հիման վրա, արտադրման կարողությունը, որը պետք է ստեղծվի կամ միջոցառումները, որոնք պետք է ձեռնարկվեն, բավարար չեն այդ նպատակներին հասնելու համար:

3. Տենդերի ընթացակարգի մանրամասները արտադրման կարողությունների միջոցների և էներգիայի արդյունավետության/պահանջարկի կողմի կառավարման միջոցառումների համար հրապարակվում են Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում տենդերների վերջնաժամկետից առնվազն 6 ամիս առաջ:

Տենդերի առանձնահատկությունները հասանելի են ցանկացած շահագրգիռ ձեռնարկության համար, որը հիմնվել է անդամ պետության տարածքում այնպես, որ այն բավարար ժամանակ ունենա տենդերին դիմելու համար:

Թափանցիկությունը և խտրականության բացառումը ապահովելու նպատակով՝ տենդերի բնութագիրը պետք է պարունակի պայմանագրի առանձնահատկությունների մանրամասն նկարագրություն և այն ընթացակարգը, որին պետք է հետևեն բոլոր հայտատուները և չափանիշների ցուցակը, որոնցով առաջնորդվում են հայտատուների ընտրության և պայմանագրի կնքման ժամանակ, ներառյալ խրախուսական միջոցները, ինչպիսին են սուբսիդավորումը, որոնք տրամադրվում են տենդերով: Այդ բնութագրերը կարող են նաև վերաբերել 7(2) հոդվածում նշված ոլորտներին:

4. Անհրաժեշտ կարողությունների համար տենդեր հայտարարելիս պետք է նաև հաշվի առնել էլեկտրաէներգիայի մատակարարման առաջարկները առկա արտադրող միավորումներից երկարատև երաշխիքներով՝ պայմանով, որ այս կերպ լրացուցիչ պահանջները կբավարարվեն:

5. Անդամ պետությունները մարմին են նշանակում կամ հանրային կամ մասնավոր մարմին, որն անկախ է էլեկտրաէներգիայի արտադրությունից, փոխանցման, բաշխման և մատակարարման գործողություններից, որոնք կարող են 35(1) հոդվածում նշված կարգավորիչ մարմին հանդիսանալ, որը պատասխանատու է տենդերի ընթացակարգի կազմակերպման, դիտանցման և հսկողության համար՝ սույն հոդվածի 1-ից 4 պարբերությունների համաձայն: Երբ փոխանցման համակարգի օպերատորը լիովին անկախ է այլ գործողություններից, որոնք կապված չեն փոխանցման համակարգին սեփականության տեսանկյունից, փոխանցման համակարգի օպերատորը կարող է նշանակվել որպես մի մարմին, որը պատասխանատու է տենդերի ընթացակարգի կազմակերպման, դիտանցման և հսկողության համար: Այդ մարմինը բոլոր անհրաժեշտ քայլերն է ձեռնարկում՝ ապահովելով տենդերներում տեղեկատվության գաղտնիությունը:

ԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

Հոդված 9

Փոխադրման համակարգերի և փոխադրման համակարգի օպերատորների տարանջատումը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ 2012 թվականի մարտի 3-ից սկսած՝

ա. յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտ, որն ունի փոխադրման համակարգ, գործի որպես փոխադրման համակարգի օպերատոր,

բ. միևնույն անձը կամ անձինք իրավունք չունենան ոչ

(i) ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկողություն իրականացնել արտադրության կամ մատակարարման գործառույթներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ կամ ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկողություն իրականացնել կամ որևէ իրավունք ունենա փոխադրման համակարգի օպերատորի կամ փոխադրման համակարգի նկատմամբ, կամ

(ii) ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկողություն իրականացնել փոխադրման համակարգի օպերատորի կամ փոխադրման համակարգի նկատմամբ կամ ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկողություն իրականացնել կամ որևէ իրավունք ունենալ արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ ունեցող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ,

գ. միևնույն անձը կամ անձինք իրավունք չունեն նշանակել փոխադրման համակարգի օպերատորի կամ փոխադրման համակարգի վերահսկիչ խորհրդի, վարչական խորհրդի կամ տնտեսվարող սուբյեկտը իրավաբանորեն ներկայացնող մարմինների անդամներ կամ ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկողություն իրականացնել կամ որևէ իրավունք ունենալ արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ ունեցող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ և

դ. միևնույն անձը կամ անձինք իրավունք չունեն նշանակել թե արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ ունեցող տնտեսվարող սուբյեկտի և թե փոխադրման համակարգի օպերատորի կամ փոխադրման համակարգի վերահսկիչ խորհրդի, վարչական խորհրդի կամ տնտեսվարող սուբյեկտը իրավաբանորեն ներկայացնող մարմինների անդամներ:

2. 1-ին պարբերության բ) և գ) կետերում նշված իրավունքները, մասնավորապես, ներառում են՝

ա. ընտրելու իրավունք իրականացնելու լիազորությունը,

բ. վերահսկիչ խորհրդի, վարչական խորհրդի կամ տնտեսվարող սուբյեկտը օրինական կերպով ներկայացնող մարմինների անդամներ նշանակելու լիազորություն կամ

գ. բաժնետոմսերի մեծամասնություն ունենալու իրավունք:

3. 1(բ) պարբերության նպատակով «արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ իրականացնող տնտեսվարող սուբյեկտ» հասկացությունը նշանակում է «արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ իրականացնող տնտեսվարող սուբյեկտ»՝ «Բնական գազի ներքին շուկայի ընդհանուր կանոններ մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի 2009/73/ԵՀ հրահանգի իմաստով [18] և «փոխադրման համակարգի օպերատոր» և «փոխադրման համակարգ» եզրույթները նշանակում է «փոխադրման համակարգի օպերատոր» և «փոխադրման համակարգ»՝ նույն հրահանգի իմաստով:

4. Անդամ պետությունները կարող են թույլ տալ շեղում կատարել 1-ին պարբերության բ) և գ) կետերից մինչև 2013 թվականի մարտի 3-ը՝ պայմանով, որ փոխադրման համակարգի օպերատորները ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս չլինեն:

5. Սույն հոդվածի 1(ա) պարբերության մեջ սահմանված պարտավորությունը համարվում է կատարված, եթե փոխադրման համակարգեր ունեցող երկու կամ ավելի տնտեսվարող սուբյեկտներ ստեղծել են համատեղ ձեռնարկություն, որը գործում է որպես փոխադրման համակարգի օպերատոր երկու կամ ավելի անդամ պետություններ համապատասխան փոխադրման համակարգերում: Այդ համատեղ ձեռնարկության մաս չի կարող լինել ոչ մի այլ տնտեսվարող սուբյեկտ, եթե միայն 13-րդ հոդվածի համաձայն այն հաստատված չէ որպես անկախ համակարգի օպերատոր կամ անկախ փոխադրման օպերատոր IV գլխի նպատակներով:

6. Սույն հոդվածի իրականացման նպատակներով, եթե 1-ին պարբերության (բ), (գ) և (դ) կետերում նշված անձը անդամ պետություն է կամ մեկ այլ պետական մարմին, փոխադրման համակարգի օպերատորի նկատմամբ կամ մի կողմից՝ փոխադրման համակարգի և մյուս կողմից՝ արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ իրականացնող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ վերահսկողություն իրականացնող երկու առանձին պետական մարմիններ են, այդ դեպքում այդ մարմինները չեն համարվում միևնույն անձը կամ անձինք:

7. Անդամ պետությունները ապահովում են, որ ո՛չ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող փոխադրման համակարգի մոտ պահվող՝ 16-րդ հոդվածում նշված առևտրային գաղտնի տեղեկությունները, ո՛չ փոխադրման համակարգի օպերատորի աշխատակազմը չփոխադրվեն արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ կատարող տնտեսվարող սուբյեկտների մոտ:

8. Եթե 2009 թվականի սեպտեմբերի 3-ի դրությամբ փոխադրման համակարգը պատկանում է ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի, այդ դեպքում անդամ պետությունը կարող է որոշել չկիրառել 1-ին պարբերությունը:

Նման դեպքում համապատասխան անդամ պետությունը կամ

ա. նշանակում է անկախ համակարգի օպերատոր 13-րդ հոդվածի համաձայն, կամ

բ. պահպանում է V գլխի դրույթները:

9. Եթե 2009 թվականի սեպտեմբերի 3-ի դրությամբ, փոխադրման համակարգը պատկանում է ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի, և գոյություն ունեն պայմանավորվածություններ, որոնք երաշխավորում են փոխադրման համակարգի օպերատորի առավել արդյունավետ անկախություն, քան V գլխի դրույթներն են, այդ դեպքում անդամ պետությունը կարող է որոշել չկիրառել 1-ին պարբերությունը:

10. Նախքան տնտեսվարող սուբյեկտ հաստատվում կամ նշանակվում է որպես փոխադրման համակարգի օպերատոր սույն հոդվածի 9-րդ պարբերության համաձայն, այն պետք է արտոնագրվի սույն Հրահանգի 10(4), (5) և (6) հոդվածներում սահմանված ընթացակարգերի և թիվ 714/2009 կանոնակարգի (ԵՀ) 3-րդ հոդվածի համաձայն, որի դեպում Հանձնաժողովը պետք է վավերացնի, որ գործող պայմանավորվածությունները հստակ երաշխավորում են փոխադրման համակարգի օպերատորի առավել արդյունավետ անկախություն, քան V գլխի դրույթները:

11. Ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտներին, որոնք հանդիսանում են փոխադրման համակարգի սեփականատեր, ոչ մի դեպքում չպետք է խոչընդոտեն 1-ին պարբերության պահանջները կատարելուն ուղղված քայլեր ձեռնարկելուց:

12. Արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ կատարող տնտեսվարող սուբյեկտները ոչ մի դեպքում չպետք է ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկեն կամ որևէ իրավունք ունենան համակցված/տարանջատված փոխադրման համակարգի օպերատորների նկատմամբ այն անդամ պետություններում, որոնք կիրառում են 1-ին պարբերությունը:

Հոդված 10

Փոխադրման համակարգի օպերատորների նշանակումը և արտոնագրումը

1. Նախքան տնտեսվարող սուբյեկտի հաստատումը և նրա նշանակումը որպես փոխադրման համակարգի օպերատոր, այն պետք է արտոնագրվի սույն հոդվածի 4, 5 և 6 պարբերություններում և թիվ 714/2009 կանոնակարգի (ԵՀ) 3-րդ հոդվածում սահմանված ընթացակարգերի համաձայն:

2. Այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք ունեն փոխանցման համակարգ և որոնք արտոնագրվել են ազգային կարգավորող մարմնի կողմից որպես 9-րդ հոդվածի պահանջներին բավարարող՝ արտոնագրման ընթացակարգի համաձայն, անդամ պետությունների կողմից հաստատվում և նշանակվում են որպես փոխադրման համակարգի օպերատորներ: Փոխանցման համակարգի օպերատորների նշանակումը ծանուցվում է Հանձնաժողովին և հրապարակվում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:

3. Փոխանցման համակարգի օպերատորները ծանուցում են կարգավորող մարմնի ցանկացած պլանավորված գործարքի մասին, որի արդյունքում կարող է պահանջվել 9-րդ հոդվածի պահանջների հետ նրանց համապատասխանության վերազնահատում:

Կարգավորող մարմինները դիտանցում են փոխանցման համակարգի օպերատորների շարունակական համապատասխանությունը 9-րդ հոդվածի պահանջներին: Նրանք նախաձեռնում են արտոնագրման ընթացակարգ՝ նման համապատասխանություն ապահովելու համար՝

ա. փոխադրման համակարգի օպերատորի կողմից ծանուցման դեպքում 3-րդ պարբերության համաձայն,

բ. իրենց սեփական նախաձեռնությամբ, եթե նրանք տեղեկացվում են, որ փոխադրման համակարգի սեփականատերերի կամ փոխադրման համակարգի օպերատորների նկատմամբ իրավունքների կամ նրանց վրա ազդեցության պլանավորված փոփոխությունը կարող է հանգեցնել 9-րդ հոդվածի խախտման կամ եթե նրանք պատճառ ունեն կարծելու, որ նման խախտում կարող է տեղի ունենալ. կամ

գ. Հանձնաժողովի կողմից հիմնավորված պահանջի դեպքում:

5. Կարգավորող մարմինները որոշում են ընդունում փոխադրման համակարգի օպերատորի արտոնագրման մասին փոխադրման համակարգի օպերատորի կողմից ծանուցում ստանալուց հետո կամ Հանձնաժողովի կողմից պահանջ ստանալուց հետո չորս ամսվա ընթացքում: Այդ ժամկետի ավարտից հետո արտոնագրումը համարվում է տրամադրված: Կարգավորող մարմնի հստակ կամ բանավոր որոշումը ուժի մեջ է մտնում, միայն երբ 6-րդ պարբերության մեջ սահմանված ընթացակարգը ավարտվում է:

6. Փոխադրման համակարգի օպերատորի արտոնագրման մասին հստակ ձևակերպված կամ բանավոր որոշումը առանց հապաղման ծանուցվում է Հանձնաժողովին կարգավորող մարմնի կողմից, որին կից ուղարկվում է համապատասխան բոլոր այն տեղեկությունները, որոնք առնչություն ունեն այդ որոշման հետ: Հանձնաժողովը գործում է թիվ 714/2009 կանոնակարգի (ԵՀ) 3-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

7. Կարգավորող մարմինները և Հանձնաժողովը փոխադրման համակարգի օպերատորներից արտադրության կամ մատակարարման որևէ գործառույթ իրականացնող տնտեսավարող սուբյեկտից կարող է պահանջել իրենց առաջադրանքների կատարման հետ կապված ցանկացած տեղեկություն՝ համաձայն սույն հոդվածի:

8. Կարգավորող մարմինները և Հանձնաժողովը պահպանում են առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիությունը:

Երրորդ երկրների առնչությամբ արտոնագրումը

1. Եթե արտոնագրման պահանջ է ներկայացվել երրորդ երկրի կամ երրորդ երկրների անձի կամ անձանց կողմից վերահսկվող փոխադրման համակարգի սեփականատիրոջ կամ փոխադրման համակարգի օպերատորի կողմից, կարգավորող մարմինը ծանուցում է Հանձնաժողովին:

Կարգավորող մարմինը առանց հապաղման ծանուցում է Հանձնաժողովին նաև բոլոր այն հանգամանքների մասին, որոնք կարող են հանգեցնել մի իրավիճակի, երբ երրորդ երկրի կամ երրորդ երկրների անձը կամ անձինք կարող են վերահսկողություն սահմանել փոխադրման համակարգի կամ փոխադրման համակարգի օպերատորի նկատմամբ:

2. Փոխադրման համակարգի օպերատորը ծանուցում է կարգավորող մարմինն ցանկացած հանգամանքի մասին, որը կարող է հանգեցնել մի իրավիճակի, երբ երրորդ երկրի կամ երրորդ երկրների անձը կամ անձինք կարող են վերահսկողություն սահմանել փոխադրման համակարգի կամ փոխադրման համակարգի օպերատորի նկատմամբ:

3. Կարգավորող մարմինները որոշման նախագիծ է ընդունում փոխադրման համակարգի օպերատորի արտոնագրման մասին փոխադրման համակարգի օպերատորի կողմից ծանուցում ստանալուց հետո չորս ամիսների ընթացքում: Կարգավորող մարմինը կարող է մերժել արտոնագրումը, եթե ցույց տրված չէ, որ

- ա. համապատասխան սուբյեկտը համապատասխանում է 9-րդ հոդվածի պահանջներին և
- բ. կարգավորող մարմինն կամ անդամ պետության կողմից նշանակված այլ իրավասու մարմին, որ արտոնագրի տրամադրումը չի վտանգի այդ անդամ պետության և Համայնքի էներգիայի մատակարարման անվտանգությունը: Այդ հարցը քննելիս՝ կարգավորող մարմինը կամ այդ նպատակով նշանակված այլ իրավասու մարմին հաշվի են առնում՝

(i) այդ երրորդ երկրի նկատմամբ միջազգային իրավունքից բխող Համայնքի իրավունքները և պարտականությունները, ներառյալ մեկ կամ մի քանի երրորդ երկրների հետ կնքված պայմանագրերը, որոնց կողմ է հանդիսանում Համայնքը և որոնք վերաբերում են էներգիայի մատակարարման անվտանգության խնդիրներին,

(ii) այդ երրորդ երկրի նկատմամբ անդամ պետության իրավունքները և պարտավորությունները, որոնք բխում են այդ երկրի հետ կնքված պայմանագրերից, եթե դրանք համապատասխանում են Համայնքի իրավունքին և

(iii) տվյալ գործի և համապատասխան երրորդ երկրի այլ հատուկ փաստեր և հանգամանքներ:

4. Կարգավորող մարմինն անհապաղ ծանուցում է որոշման մասին Հանձնաժողովին՝ ներկայացնելով նաև այդ որոշման հետ կապված բոլոր համապատասխան տեղեկությունները:

5. Նախքան կարգավորող մարմինը որոշում կընդունի արտոնագրման մասին, անդամ պետությունները պահանջում են 3(բ) պարբերության մեջ նշված կարգավորող մարմնից կամ նշանակված իրավասու մարմնից Հանձնաժողովից պահանջել կարծիք ներկայացնել, թե արդյոք՝

ա. տվյալ սուբյեկտը համապատասխանում է 9-րդ հոդվածի պահանջներին և

բ. արտոնագրի տրամադրումը չի վտանգի Համայնքում էներգիայի մատակարարման անվտանգությունը:

6. Հանձնաժողովը ուսումնասիրում է 5-րդ պարբերության մեջ նշված պահանջը, հենց ստանում է այն: Պահանջը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում այն ներկայացնում է իր եզրակացությունը ազգային կարգավորող մարմնին կամ եթե պահանջը ներկայացվել է նշանակված իրավասու մարմնին, այդ մարմնին: Եզրակացությունը նախապատրաստելիս՝ Հանձնաժողովը կարող է պահանջել Գործակալությանը, համապատասխան անդամ պետությանը և շահագրգիռ կողմերին ներկայացնել իրենց տեսակետները: Եթե Հանձնաժողովը նման պահանջ է ներկայացնում, երկու ամսվա ժամկետը երկարաձգվում է ևս երկու ամսով:

Հանձնաժողովի եզրակացության բացակայության դեպքում համարվում է, որ առաջին և երկրորդ ենթապարբերություններում նշված ժամանակահատվածներում Հանձնաժողովը չպետք է կարգավորող մարմնի կայացրած որոշման վերաբերյալ առարկություններ բարձրացնի:

7. Երբ գնահատվում է, թե արդյոք երրորդ երկրից կամ երրորդ երկրներից անձի կամ անձանց կողմից վերահսկումը վտանգում է Համայնքին էլեկտրաէներգիայի մատակարարման անվտանգությունը, Հանձնաժողովը հաշվի է առնում՝

ա. տվյալ գործի և համապատասխան երրորդ երկրի կամ երրորդ երկրների հատուկ հանգամանքները և

բ. այդ երրորդ երկրի կամ երկրների նկատմամբ միջազգային իրավունքից բխող Համայնքի իրավունքները և պարտականությունները, ներառյալ մեկ կամ մի քանի երրորդ երկրների հետ կնքված պայմանագրերը, որոնց կողմ է հանդիսանում Համայնքը և որոնք վերաբերում են էներգիայի մատակարարման անվտանգության խնդիրներին:

8. Ազգային կարգավորող մարմինը, երկու ամսվա ընթացքում 6-րդ պարբերությունում նշված ժամկետը լրանալուց հետո, ընդունում է արտոնագրման մասին իր վերջնական որոշումը: Վերջնական որոշումը ընդունելիս ազգային կարգավորող մարմինը մեծ ուշադրություն է դարձնում Հանձնաժողովի եզրակացությանը: Բոլոր դեպքերում անդամ պետությունները իրավունք ունեն մերժել արտոնագրումը, երբ արտոնագրման տրամադրումը վտանգի տակ է դնում անդամ պետության՝ էլեկտրաէներգիայի մատակարարման անվտանգությունը կամ այլ անդամ պետության՝ էլեկտրաէներգիայի մատակարարման անվտանգությունը: Երբ անդամ պետությունը այլ իրավասու մարմին է նշանակել 3(բ) պարբերությունը գնահատելու համար, այն կարող է ազգային կարգավորող մարմինն պահանջ ներկայացնել ընդունել վերջնական որոշում՝ այդ իրավասու մարմնի կողմից կատարված գնահատման համաձայն: Կարգավորող մարմնի վերջնական որոշումը և Հանձնաժողովի եզրակացությունը պետք է հրապարակվեն միասին: Երբ վերջնական որոշումը տարբերվում է Հանձնաժողովի եզրակացությունից, տվյալ անդամ պետությունը պետք է տրամադրի և հրապարակի այդ որոշման հետ միաժամանակ, նման որոշման հիմնավորումը:

9. Այս հոդվածում ոչինչ չի ազդի անդամ պետությունների իրավունքի վրա, Համայնքի իրավունքի համաձայն, իրականացնել ազգային իրավական հսկողություն հանրային անվտանգության շահերի օրինականությունը պաշտպանելու համար:

10. Հանձնաժողովը կարող է ընդունել սույն հոդվածի կիրառման համար անհրաժեշտ ընթացակարգի մանրամասները սահմանող ուղեցույցներ: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 46(2) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

11. Այս հոդվածը, բացառությամբ 3(ա) պարբերության, պետք է նաև կիրառվի անդամ պետությունների նկատմամբ, որոնք կարող են 44-րդ հոդվածից շեղվել:

Փոխանցման համակարգի օպերատորների խնդիրները

Փոխանցման համակարգի օպերատորը պատասխանատու է՝

ա. ապահովել համակարգի երկարաժամկետ ունակությունը՝ բավարարել էլեկտրաէներգիայի փոխանցման ողջամիտ պահանջները, տնտեսական պահանջների համաձայն ապահով անվտանգ և արդյունավետ փոխանցման համակարգերի շահագործման, պահպանման և զարգացման պահանջները՝ հաշվի առնելով շրջակա միջավայրը,

բ. ապահովելով պատշաճ միջոցները՝ ծառայության պարտականությունները կատարելու համար,

գ. նպաստել մատակարարման անվտանգությանը՝ համապատասխան փոխանցման կարողության և համակարգի վստահելիության միջոցով,

դ. կառավարել համակարգում էլեկտրաէներգիայի հոսքերը՝ հաշվի առնելով այլ փոխկապակցված համակարգերի հետ փոխանակումը: Այդ նպատակով փոխանցման համակարգի օպերատորը պետք է պատասխանատու լինի ապահով, վստահելի և արդյունավետ էլեկտրաէներգիայի համակարգ ապահովելու համար և այդ համատեքստում անհրաժեշտ բոլոր օժանդակ ծառայությունների մատչելիությունը ապահովելու համար, ներառյալ նրանք, որոնք տրամադրվում են պահանջարկին ի պատասխան, այնքանով, որքանով, որ այս մատչելիությունը անկախ է ցանկացած այլ փոխանցման համակարգից, որի հետ կապված է իր համակարգը.

ե. ցանկացած այլ համակարգի օպերատորին, որով իր համակարգը կապված է, տրամադրելով բավարար տեղեկատվություն՝ ապահովելով անվտանգ և արդյունավետ շահագործումը, փոխկապակցված համակարգի համակարգված զարգացումը և փոխազդեցությունը:

զ. ապահովելով խտրականության բացառումը, ինչպես համակարգն օգտագործողների կամ համակարգն օգտագործողների դասերի միջև, մասնավորապես՝ իր հետ փոխկապակցված տնտեսվարող սուբյեկտների օգտին:

է. համակարգի օգտագործողներին տրամադրել տեղեկատվություն, որը նրանց անհրաժեշտ է համակարգին արդյունավետ մուտք ունենալու համար և

ը. գերբեռնվածության վարձերի և վճարների հավաքագրումը փոխադրման համակարգի օպերատորի փոխհատուցման մեխանիզմը, թիվ 714/2009 (ԵՀ) կանոնակարգի 13-րդ հոդվածի համաձայն երրորդ կողմի մուտքը տրամադրելը և կառավարելը, և պատճառաբանված բացատրություններ տալը, երբ նման մուտքը մերժվում է, որը պետք է մոնիտորինգի ենթարկվի ազգային կանոնակարգող մարմինների կողմից, փոխանցման համակարգի օպերատորները սույն հոդվածի համաձայն իրենց պարտականությունները կատարելիս հիմնականում պետք է աջակցեն շուկայի ինտեգրմանը:

Հոդված 13

Անկախ համակարգի օպերատոր

1. Երբ փոխանցման համակարգը պատկանում է ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտին 2009թ.-ի սեպտեմբերի 3-ին անդամ պետությունները կարող են որոշել չկիրառել 9(1) հոդվածը և նշանակել անկախ համակարգի օպերատոր՝ փոխանցման համակարգի սեփականատիրոջ առաջարկի դեպքում: Նման նշանակումը ենթակա է հաստատման Հանձնաժողովի կողմից:

2. Անդամ պետությունը կարող է հաստատել և նշանակել անկախ համակարգի օպերատոր միայն երբ

ա. Թեկնածու օպերատորը ցույց է տվել, որ այն համապատասխանում է 9(1)(բ), (գ) և (դ) հոդվածի պահանջներին:

բ. Թեկնածու օպերատորը ցույց է տվել, որ այն իր տրամադրության տակ ունի ֆինանսական, տեխնիկական, ֆիզիկական և մարդկային ռեսուրսներ 12-րդ հոդվածով նախատեսված իր խնդիրներն իրականացնելու համար:

գ. Թեկնածու օպերատորը պատասխանատվություն է վերցրել համապատասխանել 10 տարի տևողությամբ ցանցի զարգացման պլանին, որը մոնիտորինգի է ենթարկվում կարգավորող մարմնի կողմից:

դ. Փոխանցման համակարգի օպերատորը ցուցաբերել է կարողություն՝ իրականացնել իր պարտավորությունները 5-րդ պարբերության համաձայն: Այդ նպատակով այն տրամադրում է պայմանագրային բոլոր նախնական պայմանավորվածությունները թեկնածու տնտեսվարող սուբյեկտի և այլ համապատասխան ձեռնարկությանը հետ և .

ե. Թեկնածու օպերատորը իր կարողությունն է ցուցաբերել թիվ 714/2009 կանոնակարգի (ԵՀ) համաձայն պարտավորությունների իրականացման համար՝ ներառյալ փոխանցման համակարգի օպերատորների միջև համագործակցությունը՝ եվրոպական և տարածաշրջանային մակարդակում:

3. Այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք արտոնագրվել են ազգային կարգավորող մարմնի կողմից որպես 11-րդ հոդվածի և սույն հոդվածի 2-րդ պարբերության պահանջներին բավարարող՝ անդամ պետությունների կողմից հաստատվում և նշանակվում են որպես փոխադրման համակարգի օպերատորներ: Կիրառվում է սույն Հրահանգի 10-րդ հոդվածում և թիվ 714/2009 կանոնակարգի (ԵՀ) 3-րդ հոդվածում կամ սույն Հրահանգի 11-րդ հոդվածում սահմանված արտոնագրման ընթացակարգը:

4. Անկախ համակարգի յուրաքանչյուր օպերատոր պատասխանատու է երրորդ կողմի մուտքի տրամադրման և կառավարման համար, ներառյալ մուտքի վճարների հավաքագրումը, գերբեռնվածության վճարները և թիվ 714/2009 կանոնակարգի (ԵՀ) 13-րդ հոդվածի համաձայն միջփոխանցման համակարգի օպերատորի փոխհատուցման մեխանիզմի համաձայն վճարները, ինչպես նաև պատասխանատու է փոխանցման համակարգի շահագործման, պահպանման և զարգացման համար և ներդրումների պլանավորման միջոցով ողջամիտ պահանջը բավարարելու համակարգի երկարատև կարողությունը ապահովելու համար: Երբ մշակվում է փոխանցման համակարգը, անկախ համակարգի օպերատորը պետք է պատասխանատու լինի նախագծման համար (ներառյալ արտոնագրման ընթացակարգը), նոր ենթակառուցվածքի կառուցումը և լիազորումը: Այդ նպատակով անկախ համակարգի օպերատորը գործում է որպես փոխանցման համակարգի օպերատոր սույն գլխի համաձայն: Փոխանցման համակարգի սեփականատերը պատասխանատու չէ երրորդ կողմին մուտք տրամադրելու կամ կառավարելու կամ ներդրման նախագծման համար:

5. Երբ նշանակվել է անկախ համակարգի օպերատոր, փոխանցման համակարգի սեփականատերը պետք է

ա. համապատասխան համագործակցություն և աջակցություն տրամադրի անկախ համակարգի օպերատորին իր պարտավորություններն իրականացնելու համար, ներառյալ մասնավորապես համապատասխանաբար ողջ տեղեկատվությունը,

բ. ֆինանսավորել ներդրումները, որոնք նշանակվում են անկախ համակարգի օպերատորի կողմից և հաստատվում են կարգավորող մարմնի կողմից կամ իր համաձայնությունն է

տալիս ցանկացած շահագրգիռ կողմից ֆինանսավորման համար՝ ներառյալ անկախ համակարգի օպերատորը: Համապատասխան ֆինանսական ընթացակարգերը ենթակա են հաստատման կարգավորող մարմնի կողմից: Մինչև նման հաստատումը կարգավորող մարմինը խորհրդակցում է փոխանցման համակարգի սեփականատիրոջ և այլ շահագրգիռ կողմերի հետ,

գ. տրամադրում է ցանցի ակտիվների հետ կապված պատասխանատվության շրջանակը՝ բացառելով անկախ համակարգի օպերատորի խնդիրների հետ կապված պատասխանատվությունը և

դ. տրամադրում է երաշխիքներ, աջակցելով ցանցի ցանկացած ընդլայնման ֆինանսավորմանը, բացառությամբ այն ներդրումներին, որոնց դեպքում (բ) կետի համաձայն այն համաձայնություն է տվել ֆինանսավորվել ցանկացած շահագրգիռ կողմից՝ ներառյալ անկախ համակարգի օպերատորը:

6. Կարգավորող մարմնի հետ սերտ համագործակցությամբ համապատասխան ազգային մրցակցության պաշտպանության մարմնին տրվում են բոլոր պատշաճ լիազորությունները՝ փոխանցման համակարգի սեփականատիրոջ՝ 5-րդ պարբերությամբ սահմանված իր պարտականությունների իրականացումը արդյունավետորեն մոնիտորինգի ենթարկելու համար:

Հոդված 14

Փոխանցման համակարգի օպերատորների տարանջատումը

1. Փոխանցման համակարգի օպերատորը, երբ անկախ համակարգի օպերատոր է նշանակվում, որն ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս է կազմում, պետք է փոխանցման հետ կապ չունեցող այլ գործողություններից անկախ լինի՝ առնվազն իր կազմակերպահրավական ձևով, կառուցվածքով և որոշումների կայացման գործառույթով:

2. 1-ին պարբերությունում նշված փոխանցման համակարգի սեփականատիրոջ անկախությունը ապահովելու համար՝ կիրառվում են հետևյալ նվազագույն չափանիշները՝

ա. փոխանցման համակարգի օպերատորի կառավարման համար պատասխանատու անձինք չպետք է մասնակցեն էլեկտրաէներգիայի արտադրության, փոխանցման կամ մատակարարման ամենօրյա շահագործման համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն

պատասխանատու էլեկտաէներգիայի բնագավառի ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի ընկերության կառուցվածքի կազմմանը,

բ. պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ ապահովելու, որ փոխանցման համակարգի օպերատորի կառավարման համար պատասխանատու անձանց մասնագիտական շահերը հաշվի են առնված այնպես, որ նրանք կարող են գործել անկախ և

գ. փոխանցման համակարգի օպերատորը պետք է հաստատի պարտավորությունների կատարման ծրագիրը, որով սահմանվում են խտրական վարքագծի բացառումն ապահովելու համար ձեռնարկված միջոցառումները և ապահովում են, որ դրա կատարման մոնիտորինգը պատշաճ կերպով իրականացվի: Պարտավորությունների կատարման ծրագրով սահմանվում են աշխատակիցների՝ այդ նպատակներին հասնելուն ուղղված հատուկ պարտավորությունները: Տարեկան զեկույցը, որը սահմանում է իրականացված միջոցառումները, ներկայացվում է այն անձի կամ մարմնի կողմից, պատասխանատու է կարգավորող մարմնի պարտավորությունների կատարման ծրագրի դիտանցման համար և պետք է հրապարակվի:

3. Հանձնաժողովը կարող է ուղեցույցեր ընդունել՝ ապահովելու փոխանցման համակարգի սեփականատիրոջ կողմից սույն հոդվածի 2-րդ պարբերության լիարժեք և արդյունավետ իրականացումը: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ ակտերը պետք է ընդունվեն՝ 46(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան:

Հոդված 15

Առաքումը/մատակարարումը և հավասարակշռությունը

1. Չհակասելով պայմանագրային պարտավորությունների հիման վրա էլեկտրաէներգիայի մատակարարմանը, ներառյալ նրանք, որոնք ծագում են տեղերի առանձնահատկություններից ելնելով, փոխանցման համակարգի օպերատորը պետք է, երբ այն ունի նման պարտավորություն, պատասխանատու լինի իր տարածքում արտադրող կայանների առաքման համար և այլ համակարգերի հետ էլեկտրահաղորդման գծերի օգտագործումը որոշելու համար:

2. Արտադրող կայանների առաքումը և էլեկտրահաղորդման գծերի օգտագործումը սահմանվում է չափանիշի հիման վրա, որը պետք է հաստատվի իրավասու ազգային կարգավորող մարմնի կողմից և որը պետք է լինի օբյեկտիվ, խտրականությունը բացառող կերպով հրապարակվի և կիրառվի՝ ապահովելով էլեկտրաէներգիայի ներքին շուկայի պատշաճ գործունեությունը: Չափանիշը հաշվի է առնում էլեկտրաէներգիայի տնտեսական նախապատվության սկզբունքը արտադրող կայաններից կամ էլեկտրահաղորդման գծերից և համակարգում տեխնիկական սահմանափակումները:

3. Անդամ պետությունը պահանջում է, որ համակարգի օպերատորները գործեն 2009/28/ԵՀ հրահանգի 16-րդ հոդվածի համաձայն, երբ արտադրող կայաններն են առաքվում՝ օգտագործելով վերականգնվող էներգիայի աղբյուրները: Նրանք նաև կարող են պահանջել, որ համակարգի օպերատորը առաջնայնություն տա, երբ առաքվում են արտադրող կայանները, որոնք համատեղ արտադրում են ջերմային և էլեկտրական էներգիա:

4. Անդամ պետությունը կարող է մատակարարման անվտանգությունից ելնելով, ուղղորդել, որ առաջնայնություն տրվի տեղական ծագում ունեցող էներգիայի հիմնական աղբյուրներ օգտագործող արտադրող կայանների առաքմանը, այն աստիճանով, որ չգերազանցի ցանկացած օրացույցային տարի, հիմնական էներգիայի 15 %, որն անհրաժեշտ է տվյալ անդամ պետությունում սպառվող էլեկտրաէներգիայի արտադրության համար:

5. Կարգավորող մարմինները, երբ անդամ պետությունները նման լիազորություն են նրանց տվել կամ անդամ պետությունները պետք է պահանջեն, որ փոխանցման համակարգի օպերատորները պահպանեն նվազագույն ստանդարտները փոխանցման համակարգի պահպանության և զարգացման համար՝ ներառյալ փոխկապակցման կարողությունը:

6. Փոխանցման համակարգի օպերատորները պետք է գնեն իրենց կողմից օգտագործվող էլեկտրաէներգիան՝ էներգիայի կորուստները և պահուստային հզորությունն իրենց համակարգում փոխհատուցելու համար՝ համաձայն թափանցիկ, ոչ խտրական և շուկայի վրա հիմնված ընթացակարգերի՝ նման գործառույթ ունենալու դեպքում:

7. Փոխանցման համակարգի օպերատորների կողմից ընդունված կանոնները էլեկտրաէներգիայի համակարգը հավասարակշռելու համար պետք է լինեն օբյեկտիվ, թափանցիկ և խտրականությունը բացառող՝ ներառյալ իրենց ցանցի օգտագործողներից էլեկտրաէներգիայի անհավասարակշռության համար գանձելու մասին կանոնները: Փոխանցման համակարգի օպերատորների կողմից նման ծառայությունների տրամադրման

ժամկետները և պայմանները՝ ներառյալ կանոնները և սակագները պետք է սահմանվեն այնպես, որ դրանք լինեն ոչ խտրական և արտացոլեն ծախսերը՝ համաձայն հոդված 37(6)-ի և հրապարակվեն:

Հոդված 16

Փոխանցման համակարգի օպերատորների և փոխանցման համակարգի օգտագործողների համար գաղտնիություն

1. Առանց հակասելու 30-րդ հոդվածին կամ խախտելու տեղեկությունների հրապարակման՝ օրենքով սահմանված որևէ այլ իրավական պարտականությունը՝ փոխանցման համակարգի օպերատորը պետք է պահպանի իր գործունեության իրականացման ընթացքում ձեռք բերված առևտրային կարևորություն ունեցող տեղեկությունների գաղտնիությունը և կանխի սեփական գործողությունների վերաբերյալ այն տեղեկությունների հրապարակումը, որոնք, խտրական ձևով հրապարակվելու դեպքում, կարող են շահեկան լինել առևտրային տեսանկյունից: Մասնավորապես այն առևտրային կարևորություն ունեցող տեղեկությունների գաղտնիությունը տնտեսվարող սուբյեկտի մնացած մասին չպետք է տրամադրի, եթե դա անհրաժեշտ չէ առևտրային գործարք իրականացնելու համար: Տեղեկատվության տարանջատման մասին կանոնների լիարժեք պահպանությունը ապահովելու համար՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ փոխանցման համակարգի սեփականատերը և տնտեսվարող սուբյեկտի մնացած մասը չօգտագործեն համատեղ ծառայություններ, ինչպիսին են համատեղ իրավաբանական ծառայությունները՝ բացի միայն վարչարարական կամ SS գործառույթները:

2. Փոխանցման համակարգի օպերատորները չպետք է չարաշահեն համակարգին մուտքի տրամադրման համատեքստում ստացված առևտրային կարևորություն ունեցող տեղեկությունների գաղտնիությունը, համապատասխան տնտեսվարող սուբյեկտների կողմից էլեկտրաէներգիայի վաճառքի և գնման համատեքստում: 3. Շուկայի արդյունավետ մրցակցության և գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվությունը պետք է հրապարակվի: Այդ պարտականությունը չի հակասում առևտրային կարևորություն ունեցող տեղեկությունների գաղտնիության պահպանությանը:

ՀԱՂՈՐԴՄԱՆ ԱՆԿԱԽ ՕՊԵՐԱՏՈՐ

Հոդված 17

Ակտիվները, սարքավորումները, աշխատակազմը և ինքնությունը

1. Հաղորդման համակարգի օպերատորները պետք է զինվեն սույն Հրահանգով սահմանված իրենց պարտավորությունների կատարման և էլեկտրականության հաղորդման գործողության իրականացման համար անհրաժեշտ բոլոր՝ մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներով, մասնավորապես՝

ա. էլեկտրականության հաղորդման գործողության համար անհրաժեշտ ակտիվները՝ ներառյալ հաղորդման համակարգը տնօրինում է հաղորդման համակարգի օպերատորը,

բ. էլեկտրականության հաղորդման գործողության՝ ներառյալ բոլոր կորպորատիվ խնդիրների իրագործման համար անհրաժեշտ անձնակազմին վարձում է հաղորդման համակարգի օպերատորը,

գ. արգելվում է անձնակազմի վարձակալության հանձնումը և ծառայությունների տրամադրումը ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող որևէ այլ սուբյեկտին կամ անձնակազմի վարձակալությունը և ծառայությունների ստացումը նման տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող որևէ այլ սուբյեկտից: Այնուամենայնիվ, հաղորդման համակարգի օպերատորը կարող է ծառայություններ տրամադրել ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտին, քանի դեռ՝

(i) այդ ծառայությունների տրամադրումը չի առաջացնում խտրականության դրսևորում համակարգն օգտագործողների միջև, միևնույն ժամկետներով և պայմաններով մատչելի է բոլոր համակարգն օգտագործողներին և չի սահմանափակում, խաթարում կամ կանխում մրցակցությունը արտադրության կամ մատակարարման ընթացում, և

(ii) այդ ծառայությունների տրամադրման ժամկետները և պայմանները հաստատվում են կարգավորող մարմնի կողմից,

դ. առանց հակասելու 20-րդ հոդվածով սահմանված վերահսկիչ մարմնի որոշումներին՝ հաղորդման համակարգի օպերատորի կողմից համապատասխան հայցը ստանալուց հետո, ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի կողմից հաղորդման համակարգի

օպերատորի համար պատշաճ ժամկետում ապահովվում է համապատասխան ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը հետագա ներդրումային ծրագրերի և (կամ) առկա ակտիվների փոխարինման համար:

2. Էլեկտրականության հաղորդման գործողությունը, ի հավելումն 12-րդ հոդվածում թվարկվածների, ներառում է առնվազն հետևյալ խնդիրները.

ա. որպես հաղորդման համակարգի օպերատորի ներկայացուցիչ հանդես գալը և երրորդ կողմերի և կարգավորող մարմինների հետ կապերի ապահովումը,

բ. որպես հաղորդման համակարգի օպերատորի ներկայացուցիչ հանդես գալը Էլեկտրականության հաղորդման համակարգի օպերատորների եվրոպական ցանցի (Էլեկտրականության ՀՀՕԵՑ) շրջանակներում,

գ. համակարգն օգտագործողների կամ համակարգն օգտագործողների դասերի միջև, ոչ խտրական հիմունքներով, երրորդ կողմերի մատչելիության շնորհումը և կառավարումը,

դ. հաղորդման համակարգի հետ կապված բոլոր տեսակի վճարների հավաքումը՝ ներառյալ մատչելիության վճարներ, օժանդակ ծառայությունների, ինչպես օրինակ՝ ծառայությունների գնման համար հավասարակշռող վճարներ (հավասարակշռող ծախսեր, էներգետիկ կորուստներ),

ե. ապահով, արդյունավետ և տնտեսապես շահավետ հաղորդման համակարգի շահագործումը, տեխնիկական սպասարկումը և զարգացումը,

զ. համակարգի՝ հիմնավորված պահանջը բավարարելու երկարաժամկետ կարողությունն ապահովող և մատակարարման անվտանգությունը երաշխավորող ներդրումների պլանավորումը,

է. համապատասխան համատեղ ձեռնարկությունների ստեղծում՝ ներառյալ մեկ կամ մի քանի հաղորդման օպերատորների, էներգիայի բորսաների և համապատասխան այլ սուբյեկտների հետ՝ հետամուտ լինելով տարածքային շուկաների զարգացման կամ ազատականացման գործընթացի աջակցման նպատակների իրականացմանը, և

ը. բոլոր կորպորատիվ ծառայությունները՝ ներառյալ իրավաբանական ծառայությունները, հաշվապահական հաշվառումը և ՏՏ ծառայությունները:

3. Խորհրդի 68/151/ԵՏՀ հրահանգի [19] 1-ին հոդվածի համաձայն՝ հաղորդման համակարգի օպերատորների գործունեությունը պետք է կազմակերպվի իրավական ձևով:

4. Հաղորդման համակարգի օպերատորն, իր կորպորատիվ ինքնության ստեղծման, հաղորդակցության, ապրանքանշանի մեջ կամ իր տարածքներում, չպետք է շփոթություն ստեղծի կապված՝ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի առանձին ինքնության կամ դրա մաս կազմող որևէ սուբյեկտի հետ:

5. Հաղորդման համակարգի օպերատորը SS համակարգերը կամ սարքավորումները, ֆիզիկական տարածքները և մատչելիության անվտանգության համակարգերը չպետք է կիսի ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող որևէ սուբյեկտի հետ, և կամ SS համակարգերի կամ սարքավորումների և մատչելիության անվտանգության համակարգերի համար չպետք է օգտվի միևնույն խորհրդատուների կամ արտաքին կապալառուների ծառայություններից:

6. Հաղորդման համակարգի օպերատորների հաշիվների աուդիտն իրականացվում է այն աուդիտորի կողմից, որն ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի կամ դրա մաս կազմող որևէ սուբյեկտի համար չի իրականացրել աուդիտ:

Հոդված 18

Հաղորդման համակարգի օպերատորի անկախությունը

1. Առանց հակասելու 20–րդ հոդվածով սահմանված վերահսկիչ մարմնի որոշումներին՝ հաղորդման համակարգի օպերատորն ունի.

ա. հաղորդման համակարգի շահագործման, տեխնիկական սպասարկման և զարգացման համար անհրաժեշտ ակտիվների հետ կապված որոշումների կայացման գործող իրավունքներ՝ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտից անկախ, և

բ. կապիտալի շուկայում դրամական միջոցների հայթայթման լիազորություն, մասնավորապես՝ փոխառություն վերցնելու և կապիտալի մեծացման միջոցով:

2. Հաղորդման համակարգի օպերատորը պետք է մշտապես գործի այնպես, որ ապահովի հաղորդման գործողության պատշաճ և արդյունավետ իրականացման համար իրեն անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը և զարգացնի ու պահպանի արդյունավետ, ապահով և տնտեսապես շահավետ հաղորդման համակարգ:

3. Ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի՝ արտադրության կամ մատակարարման գործառույթներ իրականացնող դուստր ձեռնարկությունները որևէ

ուղղակի կամ անուղղակի մասնաբաժին չունեն հաղորդման համակարգի օպերատորի կապիտալում: Հաղորդման համակարգի օպերատորը որևէ ուղղակի կամ անուղղակի մասնաբաժին չունի ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի արտադրության կամ մատակարարման գործառույթներ իրականացնող որևէ դուստր ձեռնարկության կապիտալում, ինչպես նաև շահաբաժիններ կամ որևէ այլ ֆինանսական շահույթ չի ստանում այդ դուստր ձեռնարկությունից:

4. Հաղորդման համակարգի օպերատորի կառավարման ընդհանուր կառուցվածքը և կորպորատիվ կանոնադրությունն ապահովում են հաղորդման համակարգի օպերատորի արդյունավետ անկախությունը՝ համաձայն սույն գլխի: Ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտը, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, չի սահմանում հաղորդման համակարգի օպերատորի՝ մրցակցային վարքագիծը՝ կապված վերջինիս՝ ամենօրյա գործունեության և ցանցի կառավարման կամ, 22-րդ հոդվածի համաձայն մշակված՝ ցանցի զարգացման տասնամյա ծրագրի նախապատրաստման համար անհրաժեշտ գործողությունների հետ:

5. Սույն Հրահանգի 12-րդ հոդվածում և հոդված 17(2)-ում նշված իրենց խնդիրներն իրագործելիս՝ և թիվ 714/2009 կանոնակարգի (ԵՀ) 14-րդ, 15-րդ և 16-րդ հոդվածներին համապատասխան՝ հաղորդման համակարգի օպերատորը խտրականություն չի դնում տարբեր անձանց և մարմինների միջև և չի սահմանափակում, խաթարում կամ կանխում մրցակցությունը արտադրության կամ մատակարարման գործընթացներում:

6. Հաղորդման համակարգի օպերատորի և ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի միջև առևտրային կամ ֆինանսական բոլոր հարաբերություններում՝ ներառյալ հաղորդման համակարգի օպերատորի կողմից ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտին վարկեր տրամադրելիս, պետք է ապահովվի համապատասխանությունը շուկայի պայմաններին: Հաղորդման համակարգի օպերատորը մանրամասն տվյալներ է վարում նմանատիպ առևտրային կամ ֆինանսական հարաբերությունների վերաբերյալ և, պահանջի դեպքում, ապահովում դրանց մատչելիությունը կարգավորող մարմնի համար:

7. Հաղորդման համակարգի օպերատորը կարգավորող մարմնի հաստատմանն է ներկայացնում ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի հետ առևտրային կամ ֆինանսական հարաբերությունների մասին բոլոր համաձայնագրերը:

8. Հաղորդման համակարգի օպերատորը կարգավորող մարմնին տեղեկացնում է հետագա ներդրումային ծրագրերի և (կամ) գոյություն ունեցող ակտիվների փոխարինման համար առկա՝ հոդված 17(1)(դ)–ում նշված ֆինանսական ռեսուրսների մասին:

9. Ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտը զերծ է մնում հաղորդման համակարգի օպերատորի՝ սույն գլխում նշված իր պարտավորությունները կատարելուն խոչընդոտող կամ հակասող որևէ գործողությունից, և հաղորդման համակարգի օպերատորից չի պահանջում այդ պարտավորություններն իրականացնելիս թույլտվություն հայցել ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտից:

10. Այն տնտեսվարող սուբյեկտը, որին կարգավորող մարմինը հավաստել է որպես սույն գլխի պահանջները բավարարող, հաստատվում և նշանակվում է տվյալ Անդամ պետության կողմից որպես հաղորդման համակարգի օպերատոր: Կիրառվում է սույն Հրահանգի 10–րդ հոդվածում և թիվ 714/2009 կանոնակարգի (ԵՀ) 3–րդ հոդվածում կամ սույն Հրահանգի 11–րդ հոդվածում սահմանված հավաստման ընթացակարգը:

Հոդված 19

Աշխատակազմի անկախությունը և հաղորդման համակարգի օպերատորի կառավարումը

1. Հաղորդման համակարգի օպերատորի՝ կառավարման համար պատասխանատու անձանց և (կամ) վարչական մարմինների անդամների նշանակման և աշխատանքային ժամկետի երկարաձգման, աշխատանքային պայմանների՝ ներառյալ վարձատրության, և պաշտոնավարման ժամկետի դադարեցման հետ կապված որոշումները կայացվում են 20–րդ հոդվածի համաձայն նշանակված հաղորդման համակարգի օպերատորի վերահսկիչ մարմնի կողմից:

2. Վերահսկիչ մարմնի կողմից նշանակման և աշխատանքային ժամկետի երկարաձգման համար որպես գործադիր կառավարման համար պատասխանատու անձինք և (կամ) որպես հաղորդման համակարգի օպերատորի վարչական մարմինների անդամներ նշանակված անձանց ինքնության և նրանց աշխատանքային ժամկետը, տևողությունը և պաշտոնավարման ժամկետի դադարեցումը կարգավորող պայմանների և նման պաշտոնավարման ժամկետը դադարեցնող առաջարկվող որևէ որոշման համար հիմք հանդիսացող պատճառների մասին տեղեկացվում է կարգավորող մարմնին: 1–ին

պարբերությունում նշված այդ պայմանները և որոշումները պարտադիր են դառնում միայն, եթե կարգավորող մարմինը առարկություններ չի ներկայացնում իրեն՝ այդ մասին տեղեկացնելուց հետո երեք շաբաթվա ընթացքում:

Կարգավորող մարմինը կարող է առարկություններ ներկայացնել 1-ին պարբերությունում նշված որոշումների վերաբերյալ այն դեպքում, երբ՝

ա. կասկածներ են առաջանում՝ կապված կառավարման համար պատասխանատու նշանակված անձի և (կամ) վարչական մարմինների անդամի մասնագիտական անկախության հետ, կամ

բ. պաշտոնավարման ժամկետի վաղաժամ դադարեցման դեպքում կասկածներ են առաջանում՝ կապված նման վաղաժամ դադարեցման հիմնավորման հետ:

3. Արգելվում է ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի կամ դրա մաս կազմող որևէ սուբյեկտի կամ դրա՝ վերահսկիչ փաթեթ ունեցող բաժնետերերի հետ՝ բացառությամբ հաղորդման համակարգի օպերատորի, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, մասնագիտական որևէ պաշտոնի լիազորությունների կամ պատասխանատվության, շահի կամ գործարար հարաբերությունների իրականացումը սույն պարբերությունով նախատեսված կառավարման համար պատասխանատու անձանց և (կամ) հաղորդման համակարգի օպերատորի վարչական մարմինների անդամների նշանակումից հետո, երեք տարի ժամկետով:

4. Կառավարման համար պատասխանատու անձինք և (կամ) հաղորդման համակարգի օպերատորի վարչական մարմինների անդամները և հաղորդման համակարգի օպերատորի աշխատակիցները, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, չեն ստանձնում մասնագիտական որևէ պաշտոն կամ պատասխանատվություն, չունեն շահ կամ գործարար հարաբերություն ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող որևէ այլ սուբյեկտի կամ դրա՝ վերահսկիչ փաթեթ ունեցող բաժնետերերի հետ:

5. Կառավարման համար պատասխանատու անձինք և (կամ) հաղորդման համակարգի օպերատորի վարչական մարմինների անդամները և հաղորդման համակարգի օպերատորի աշխատակիցները, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, չեն ստանձնում մասնագիտական որևէ պաշտոն կամ պատասխանատվություն, չունեն շահ կամ գործարար հարաբերություն ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող որևէ այլ սուբյեկտի կամ դրա՝ վերահսկիչ փաթեթ ունեցող բաժնետերերի հետ: Նրանց վարձատրությունը կախված չէ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի գործունեությունից կամ

արդյունքներից՝ ի տարբերություն հաղորդման համակարգի օպերատորի գործունեության կամ արդյունքների:

6. Կառավարման համար պատասխանատու անձանց և (կամ) հաղորդման համակարգի օպերատորի վարչական մարմինների անդամների կողմից իրենց պաշտոնավարման ժամկետի վաղաժամ դադարեցման դեմ որևէ բողոքի դեպքում, երաշխավորվում են կարգավորող մարմինն բողոքարկելու գործող իրավունքները:

7. Հաղորդման համակարգի օպերատորի ներսում իրենց պաշտոնավարման ժամկետի դադարեցումից հետո ոչ պակաս, քան չորս տարվա ընթացքում, դրա կառավարման համար պատասխանատու անձինք և (կամ) դրա վարչական մարմինների անդամները չպետք է ստանձնեն որևէ մասնագիտական պաշտոն կամ պատասխանատվություն, ունենան որևէ շահ կամ գործարար հարաբերություն ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս կազմող որևէ սուբյեկտի՝ բացառությամբ հաղորդման համակարգի օպերատորի, կամ դրա՝ վերահսկիչ փաթեթ ունեցող բաժնետերերի հետ:

8. 3-րդ պարբերությունը կիրառելի է կառավարման համար պատասխանատու անձանց և (կամ) հաղորդման համակարգի օպերատորի վարչական մարմինների անդամների մեծ մասի համար:

Կառավարման համար պատասխանատու այն անձինք և (կամ) հաղորդման համակարգի օպերատորի վարչական մարմինների այն անդամները, որոնք նախատեսված չեն 3-րդ պարբերությունով, իրենց նշանակումից առնվազն վեց ամիս առաջ, ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի ներսում պետք է իրականացրած չլինեն կառավարման կամ համապատասխան որևէ այլ գործունեություն:

Սույն պարբերության առաջին ենթապարբերությունը և 4-7-րդ պարբերությունները կիրառելի են գործադիր կառավարման անդամ հանդիսացող բոլոր անձանց և ցանցի շահագործման, տեխնիկական սպասարկման կամ զարգացման հետ կապված հարցերի վերաբերյալ նրանց ուղղակիորեն հաշվետու անձանց համար:

Հոդված 20

Վերահսկիչ մարմինը

1. Հաղորդման համակարգի օպերատորն ունի վերահսկիչ մարմին, որը պատասխանատու է այն որոշումների կայացման համար, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ հաղորդման համակարգի օպերատորի ներսում բաժնետերերի ակտիվների արժեքի վրա, մասնավորապես՝ այն որոշումների, որոնք կապված են տարեկան և երկարաժամկետ ֆինանսական պլանների, հաղորդման համակարգի օպերատորի պարտքային պարտավորության մակարդակի և բաժնետերերին բաշխվող շահաբաժինների չափի հաստատման հետ: Վերահսկիչ մարմնի իրավասությունների շրջանակներում ընդգրկվող որոշումները չեն ներառում բոլոր այն որոշումները, որոնք կապված են հաղորդման համակարգի օպերատորի ամենօրյա գործունեության և ցանցի կառավարման և 22-րդ հոդվածի համաձայն մշակված՝ ցանցի զարգացման տասնամյա ծրագրի նախապատրաստման համար անհրաժեշտ գործողությունների հետ:

2. Վերահսկիչ մարմինը բաղկացած է ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտը ներկայացնող անդամներից, երրորդ կողմի բաժնետերերին ներկայացնող անդամներից և, Անդամ պետությունների համապատասխան օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, այլ շահագրգիռ կողմեր, ինչպես օրինակ՝ հաղորդման համակարգի օպերատորի աշխատակիցներին ներկայացնող անդամներից:

3. Հոդված 19(2)-ի առաջին ենթապարբերությունը և հոդված 19(3)-(7)-ը կիրառելի են վերահսկիչ մարմնի անդամների առնվազն կեսի համար՝ չհաշված մեկին:

Հոդված 19(2)-ի երկրորդ ենթապարբերության կետ բ)-ն կիրառելի է վերահսկիչ մարմնի բոլոր անդամների համար:

Հոդված 21

Պարտավորությունների կատարման ծրագիրը և պարտավորությունների կատարման համար պատասխանատուն

1. Անդամ պետություններն ապահովում են, որ հաղորդման համակարգի օպերատորը կազմի և իրականացնի պարտավորությունների կատարման ծրագիր, որով սահմանվում են խտրական վարքագծի բացառումն ապահովելու նպատակով ձեռնարկված միջոցները և ապահովի, որ այդ ծրագրին համապատասխանությունը դիտանցվի պատշաճ կերպով:

Պարտավորությունների կատարման ծրագրով սահմանվում են աշխատակիցների՝ այդ նպատակներին հասնելուն ուղղված հատուկ պարտավորությունները: Այն ենթակա է հաստատման կարգավորող մարմնի կողմից: Առանց հակասելու ազգային կարգավորող մարմնի լիազորություններին՝ ծրագրին համապատասխանությունը, անկախ կերպով, դիտանցվում է պարտավորությունների կատարման համար պատասխանատուի կողմից:

2. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն նշանակվում է վերահսկիչ մարմնի կողմից՝ ստանալով կարգավորող մարմնի հաստատումը: Կարգավորող մարմինը կարող է հրաժարվել պարտավորությունների կատարման համար պատասխանատուի նշանակումը հաստատելուց միայն վերջինիս անկախության կամ մասնագիտական կարողությունների բացակայության պատճառով: Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն կարող է լինել ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Հոդված 19(2)–(8)–ը կիրառվում են պարտավորությունների կատարման համար պատասխանատուի համար:

3. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն պատասխանատու է.

ա. պարտավորությունների կատարման ծրագրի իրականացման դիտանցման,

բ. տարեկան հաշվետվության մշակման, պարտավորությունների կատարման ծրագրի իրականացման նպատակով ձեռնարկված միջոցների սահմանման և դրա՝ կարգավորող մարմնին ներկայացման,

գ. վերահսկիչ մարմնին զեկուցման և պարտավորությունների կատարման ծրագրի և դրա իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման,

դ. կարգավորող մարմնին պարտավորությունների կատարման ծրագրի իրականացման ընթացքում կատարված էական խախտումների մասին տեղեկացման, և

ե. կարգավորող մարմնին ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի և հաղորդման համակարգի օպերատորի միջև առևտրային և ֆինանսական հարաբերությունների մասին զեկուցման համար:

4. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն կարգավորող մարմնին է ներկայացնում ներդրումային պլանի կամ ցանցում առանձին ներդրումների մասին առաջարկվող որոշումները: Այս գործառույթը կատարվում է առնվազն, երբ հաղորդման համակարգի օպերատորի կառավարման և (կամ) իրավասու վարչական մարմինը նշված որոշումները ներկայացնում է վերահսկիչ մարմնին:

5. Եթե ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտը ընդհանուր ժողովում կամ վերահսկիչ մարմնի՝ իր կողմից նշանակված անդամների քվեարկությամբ, կանխել է որոշման կայացումը՝ արդյունքում կանխելով կամ ուշացնելով այն ներդրումների կատարումը, որոնք, ցանցի զարգացման տասնամյա ծրագրով, նախատեսվում էին իրականացվել հաջորդ երեք տարիների ընթացքում, ապա պարտավորությունների կատարման համար պատասխանատուն այդ մասին զեկուցում է կարգավորող մարմնին, որն, այնուհետև, գործում է 22-րդ հոդվածի համաձայն:

6. Մանդատը կարգավորող պայմանները կամ պարտավորությունների կատարման համար պատասխանատուի աշխատանքի ընդունման պայմանները՝ ներառյալ վերջինիս մանդատի տևողությունը, ենթական են կարգավորող մարմնի հաստատմանը: Այդ պայմանները՝ ներառյալ պարտավորությունների կատարման համար պատասխանատուին՝ իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ բոլոր ռեսուրսների տրամադրումն ապահովում են նրա անկախությունը: Իր մանդատի ընթացում, պարտավորությունների կատարման համար պատասխանատուն, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, չի ստանձնում մասնագիտական որևէ այլ պաշտոն, պարտավորություն կամ չի հետապնդում որևէ շահ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի կամ դրա մաս կազմող որևէ սուբյեկտի ներսում կամ դրա՝ վերահսկիչ փաթեթ ունեցող բաժնետերերի հետ:

7. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն, պարբերաբար, բանավոր կամ գրավոր զեկուցում է կարգավորող մարմնին և իրավունք ունի, պարբերաբար, բանավոր կամ գրավոր զեկուցելու հաղորդման համակարգի օպերատորի վերահսկիչ մարմնին:

8. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն կարող է մասնակցել հաղորդման համակարգի օպերատորի կառավարման և (կամ) իրավասու վարչական մարմինների և վերահսկիչ մարմնի բոլոր հանդիպումներին և ընդհանուր ժողովին: Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն մասնակցում է այն բոլոր հանդիպումներին, որոնք առնչվում են հետևյալ հարցերի քննարկմանը.

ա. ցանցի մատչելիության պայմաններ, ինչպես սահմանված է թիվ 714/2009 կանոնակարգում (ԵՀ), մասնավորապես՝ սակագների, երրորդ կողմի մատչելիության ծառայությունների, կարողությունների բաշխման և գերբեռնվածության կառավարման, թափանցիկության, հավասարակշռող և երկրորդային շուկաների վերաբերյալ,

բ. հաղորդման համակարգի շահագործման, տեխնիկական սպասարկման և զարգացման նպատակով իրականացված ծրագրեր՝ ներառյալ փոխմիացման և միացման հետ կապված ներդրումներ,

գ. հաղորդման համակարգի շահագործման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի գնում կամ վաճառք:

9. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն դիտանցում է հաղորդման համակարգի օպերատորի պարտավորությունների կատարումը՝ համաձայն 16-րդ հոդվածի:

10. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուի համար պետք է մատչելի լինեն համապատասխան բոլոր տվյալները և հաղորդման համակարգի օպերատորի գրասենյակները, ինչպես նաև իր առջև դրված խնդիրների իրագործման համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները:

11. Կարգավորող մարմնի կողմից նախնական հաստատում ստանալուց հետո վերահսկիչ մարմինը կարող է ազատել պարտավորությունների կատարման համար պատասխանատուին: Այն ազատում է պարտավորությունների կատարման համար պատասխանատուին անկախության կամ մասնագիտական կարողությունների բացակայության պատճառով՝ կարգավորող մարմնի պահանջով:

12. Պարտավորությունների կատարման համար պատասխանատուն իրավունք ունի մուտք գործել հաղորդման համակարգի օպերատորի գրասենյակներ՝ առանց այդ մասին նախապես տեղեկացնելու:

Հոդված 22

Ցանցի զարգացումը և ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման լիազորությունները

1. Յուրաքանչյուր տարի, հաղորդման համակարգի օպերատորը, համապատասխան շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելուց հետո, կարգավորող մարմնին է ներկայացնում գոյություն ունեցող և կանխատեսվող առաջարկի և պահանջարկի հիման վրա կազմված ցանցի զարգացման տասնամյա ծրագիրը: Ցանցի զարգացման ծրագրում ընդգրկված են արդյունավետ միջոցառումներ՝ նպատակաուղղված համակարգի համապատասխանության և մատակարարման անվտանգության երաշխավորմանը:

2. Ցանցի զարգացման տասնամյա ծրագիրը, մասնավորապես.

ա. շուկայի մասնակիցներին ցույց է տալիս հաղորդման այն հիմնական ենթակառուցվածքը, որը պետք է կառուցել կամ կատարելագործել հաջորդ տաս տարիների ընթացքում,

բ. ընդգրկում է արդեն վճռված բոլոր ներդրումները և բացահայտում այն նոր ներդրումները, որոնք պետք է կատարվեն հաջորդ երեք տարիների ընթացքում, և

գ. բոլոր ներդրումային ծրագրերի համար նախատեսում է ժամկետներ:

3. Ցանցի զարգացման տասնամյա ծրագիրը մշակելիս՝ հաղորդման համակարգի օպերատորը խելամիտ ենթադրություններ է անում արտադրության, մատակարարման, սպառման և այլ երկրների հետ փոխանակման զարգացման մասին՝ հաշվի առնելով տարածաշրջանային և Համայնքի մասշտաբով ցանցերի ներդրումային պլանները:

4. Կարգավորող մարմինը, հստակ և թափանցիկ կերպով, ցանցի զարգացման տասնամյա ծրագրի մասին խորհրդակցում է բոլոր իրական և պոտենցիալ համակարգն օգտագործողների հետ: Իրենց պոտենցիալ համակարգն օգտագործող հայտարարող անձանցից կամ տնտեսվարող սուբյեկտներից կարող է պահանջվել հիմնավորել իրենց այդպիսին լինելը: Կարգավորող մարմինը հրապարակում է խորհրդակցության գործընթացի արդյունքը, մասնավորապես՝ ներդրումների կատարման հնարավոր կարիքները:

5. Կարգավորող մարմինը ստուգում է, թե արդյոք ցանցի զարգացման տասնամյա ծրագիրն անդրադառնում է խորհրդակցության գործընթացի ընթացքում բացահայտված բոլոր ներդրումային կարիքներին, և թե արդյոք այն համապատասխանում է թիվ 714/2009 (ԵՀ) կանոնակարգի 8(3)(բ) հոդվածում նշված ոչ պարտադիր, Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման տասնամյա ծրագրին (Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման ծրագիր): Եթե որևէ կասկած է առաջանում՝ կապված Համայնքի մասշտաբով ցանցի զարգացման ծրագրին անհամապատասխանության հետ, ապա կարգավորող մարմինը խորհրդակցում է Գործակալության հետ: Կարգավորող մարմինը կարող է հաղորդման համակարգի օպերատորից պահանջել փոփոխել իր՝ ցանցի զարգացման տասնամյա ծրագիրը:

6. Կարգավորող մարմինը դիտանցում և գնահատում է ցանցի զարգացման տասնամյա ծրագրի իրականացումը:

7. Այն դեպքերում, երբ հաղորդման համակարգի օպերատորը չի կատարում այն ներդրումը, որը ցանցի զարգացման տասնամյա ծրագրով նախատեսվում էր իրականացնել հետագա երեք տարիների ընթացքում, բացառությամբ գերակա անկառավարելի պատճառների

առկայությամբ դեպքերի, ապա անդամ պետություններն ապահովում են կարգավորող մարմնից պահանջվող հետևյալ միջոցառումներից առնվազն մեկի իրականացումը՝ ապահովելու, որ տվյալ ներդրումը կատարված է, եթե նման ներդրումը, ցանցի զարգացման տասնամյա ամենավերջին ծրագրից ելնելով, դեռևս ունի էական նշանակություն.

ա. հաղորդման համակարգի օպերատորից պահանջել կատարել տվյալ ներդրումները.

բ. կազմակերպել մրցութային ընթացակարգ տվյալ ներդրման հետ կապված, որը բաց կլինի ցանկացած ներդրողի համար, կամ

գ. հաղորդման համակարգի օպերատորից պահանջել ընդունել կապիտալի ավելացումը՝ անհրաժեշտ ներդրումները ֆինանսավորելու նպատակով և անկախ ներդրողներին թույլատրել մասնակցել կապիտալի ձևավորմանը:

Եթե կարգավորող մարմինն իրականացրել է առաջին ենթապարբերության կետ բ)-ում նշված իր լիազորությունները, ապա այն համակարգի օպերատորից կարող է պահանջել համաձայնել ստորև նշվածներից մեկի կամ մի քանիսի հետ.

ա. ֆինանսավորում որևէ երրորդ անձի կողմից,

բ. կառուցում որևէ երրորդ անձի կողմից,

գ. դրան առնչվող նոր ակտիվների ստեղծում,

դ. դրան առնչվող նոր ակտիվների շահագործում:

Հաղորդման համակարգի օպերատորը պետք է ներդրողներին տրամադրի ներդրման կատարման համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները, հաղորդման ցանցին միացնի նոր ակտիվները և, առհասարակ, առավելագույնս ջանք գործադրի ներդրումային ծրագրի իրականացմանն օժանդակելու համար:

Համապատասխան ֆինանսական ընթացակարգերը ենթակա են հաստատման կարգավորող մարմնի կողմից:

8. Եթե կարգավորող մարմինն իրականացրել է 7-րդ պարբերության առաջին ենթապարբերությունով սահմանված լիազորությունները, ապա համապատասխան սակագնային կարգավորումները ներառում են տվյալ ներդրումների ծախսերը:

Հոդված 23

Նոր էլեկտրակայանը հաղորդման համակարգին միացնելու հետ կապված որոշումների կայացման լիազորությունները

1. Հաղորդման համակարգի օպերատորը սահմանում և հրապարակում է թափանցիկ և արդյունավետ ընթացակարգեր նոր էլեկտրակայանները հաղորդման համակարգին ոչ խտրական հիմունքներով միացնելու համար: Այդ ընթացակարգերը ենթակա են հաստատման ազգային կարգավորող մարմինների կողմից:

2. Հաղորդման համակարգի օպերատորն իրավունք չունի մերժել նոր էլեկտրակայանի միացումը գոյություն ունեցող ցանցի կարողությունների հնարավոր հետագա սահմանափակումների, ինչպես օրինակ՝ հաղորդման համակարգի հեռավոր մասերում գերբեռնվածության, հիմքով:

Հաղորդման համակարգի օպերատորը ապահովում է անհրաժեշտ տեղեկությունների տրամադրումը:

3. Հաղորդման համակարգի օպերատորն իրավունք չունի մերժել նոր միացման կետի ստեղծումն այն հիմքով, որ այն կհանգեցնի համակարգի տարրերի անհրաժեշտ կարողության ընդլայնման հետ կապված լրացուցիչ ծախսերի միացման կետին հարող կառուցվածքներում:

ԳԼՈՒԽ VI

ԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

Հոդված 24

Բաշխման համակարգի օպերատորների նշանակումը

Անդամ պետությունները նշանակում են կամ այն տնտեսվարող սուբյեկտներից, որոնք ունեն բաշխման համակարգեր կամ պատասխանատու են դրանց համար, պահանջում են նշանակել մեկ կամ ավելի բաշխման համակարգի օպերատորներ Անդամ պետությունների կողմից սահմանվող ժամանակահատվածով՝ հաշվի առնելով արդյունավետության և տնտեսական հավասարակշռության նկատառումները: Անդամ պետություններն ապահովում

են, որ բաշխման համակարգի օպերատորները գործեն 25-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածներին համապատասխան:

Հոդված 25

Բաշխման համակարգի օպերատորների խնդիրները

1. Բաշխման համակարգի օպերատորը պատասխանատու է էլեկտրաէներգիայի բաշխման, իր տարածքում տնտեսական պայմաններում էլեկտրականության բաշխման ապահով, հուսալի և արդյունավետ համակարգի շահագործման, տեխնիկական սպասարկման և զարգացման խելամիտ պահանջները բավարարելու համակարգի երկարաժամկետ կարողությունն ապահովելու համար՝ պատշաճ կերպով հաշվի առնելով շրջակա միջավայրը և էներգաարդյունավետությունը:
2. Ամեն դեպքում, այն չպետք է խտրականություն դրսևորի համակարգն օգտագործողների կամ համակարգն օգտագործողների դասերի միջև, մասնավորապես՝ իր հետ փոխկապակցված տնտեսվարող սուբյեկտների օգտին:
3. Բաշխման համակարգի օպերատորը պետք է համակարգն օգտագործողներին տրամադրի նրանց՝ համակարգի արդյունավետ մատչելիության՝ ներառյալ դրա օգտագործման համար անհրաժեշտ տեղեկությունները:
4. Էլեկտրական էներգիա արտադրող կայանքներն առաքելիս՝ Անդամ պետությունը կարող է բաշխման համակարգի օպերատորից պահանջել նախապատվությունը տալ վերականգնվող էներգիայի աղբյուրներ կամ թափոններ օգտագործող կամ համակցված ջերմություն և էլեկտրաէներգիա արտադրող էլեկտրական էներգիա արտադրող կայանքներին:
5. Բաշխման համակարգի յուրաքանչյուր օպերատոր պետք է գնի իր կողմից օգտագործվող էլեկտրաէներգիան՝ էներգիայի կորուստները և պահուստային հզորությունն իր համակարգում փոխհատուցելու համար՝ համաձայն թափանցիկ, ոչ խտրական և շուկայի վրա հիմնված ընթացակարգերի՝ նման գործառույթ ունենալու դեպքում: Այդ պահանջը չի հակասում մինչև 2002 թվականի հունվարի 1-ը կնքված պայմանագրերի շրջանակներում ձեռք բերված էլեկտրաէներգիայի օգտագործմանը:
6. Երբ բաշխման համակարգի օպերատորը պատասխանատու է բաշխման համակարգի հավասարակշռման համար, ապա այդ նպատակով նրա կողմից ընդունված կանոնները՝

ներառյալ իրենց ցանցերի համակարգն օգտագործողներից էլեկտրաէներգիայի անհավասարակշռության համար վճարների գանձման կանոնները պետք է լինեն օբյեկտիվ, թափանցիկ և ոչ խտրական: Բաշխման համակարգի օպերատորների կողմից նման ծառայությունների տրամադրման ժամկետները և պայմանները՝ ներառյալ կանոնները և սակագները պետք է սահմանվեն այնպես, որ դրանք լինեն ոչ խտրական և արտացոլեն ծախսերը՝ համաձայն հոդված 37(6)-ի և հրապարակվեն:

7. Բաշխման ցանցի զարգացումը պլանավորելիս՝ բաշխման համակարգի օպերատորը պետք է հաշվի առնի էլեկտաէներգիայի արդյունավետության/ պահանջարկի կողմի կառավարմանն ուղղված միջոցառումները կամ բաշխվող արտադրությունը, ինչը կարող է փոխարինել էլեկտրաէներգիայի հաղորդման կարողությունը բարելավելու կամ փոխարինելու անհրաժեշտությանը:

Հոդված 26

Բաշխման համակարգի օպերատորների տարանջատումը

1. Եթե բաշխման համակարգի օպերատորն ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս է կազմում, ապա այն պետք է լինի անկախ՝ առնվազն իր կազմակերպահրավական ձևով, կառուցվածքով և որոշումների կայացման գործառույթով և չներգրավվի բաշխման հետ կապ չունեցող այլ գործողություններում: Այդ կանոնները պարտավորություն չեն առաջացնում՝ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտից առանձնացնելու բաշխման համակարգի օպերատորի ակտիվների տնօրինումը:

2. 1-ին պարբերությունում սահմանված պահանջներից բացի, եթե բաշխման համակարգի օպերատորն ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս է կազմում, ապա այն պետք է լինի անկախ՝ իր կառուցվածքով և որոշումների կայացման գործառույթով և չներգրավվի բաշխման հետ կապ չունեցող այլ գործողություններում: Վերոնշյալի ապահովման համար կիրառելի են հետևյալ նվազագույն չափորոշիչները.

ա. բաշխման համակարգի օպերատորի կառավարման համար պատասխանատու անձինք չպետք է մասնակցեն էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման կամ մատակարարման ամենօրյա շահագործման համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատասխանատու էլեկտաէներգիայի բնագավառի ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի ընկերության կառուցվածքի կազմմանը,

բ. պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ ապահովելու, որ բաշխման համակարգի օպերատորի կառավարման համար պատասխանատու անձանց մասնագիտական շահերը հաշվի են առնված այնպես, որ նրանք կարող են գործել անկախ,

գ. բաշխման համակարգի օպերատորը պետք է ունենա ցանցի շահագործման, տեխնիկական սպասարկման և զարգացման համար անհրաժեշտ ակտիվների հետ կապված որոշումների կայացման գործող իրավունքներ՝ էլեկտաէներգիայի բնագավառի ինտեգրված տնտեսվարող սուբյեկտից անկախ: Այդ խնդիրներն իրագործելու համար բաշխման համակարգի օպերատորն իր տրամադրության տակ ունի բոլոր անհրաժեշտ ռեսուրսները՝ ներառյալ մարդկային, տեխնիկական, ֆիզիկական և ֆինանսական ռեսուրսները: Սա չպետք է խոչընդոտի համակարգման համապատասխան մեխանիզմների գոյությանը՝ ապահովելու, որ դուստր ձեռնարկությունում հոդված 37(6)-ի համաձայն անուղղակիորեն կարգավորվող ակտիվների եկամտաբերության հետ կապված մայր ընկերության տնտեսական և կառավարման վերահսկման իրավունքները պաշտպանված են: Մասնավորապես, սա մայր ընկերությանը հնարավորություն կընձեռի հաստատելու բաշխման համակարգի օպերատորի տարեկան ֆինանսական պլանը կամ որևէ այլ համարժեք գործիք և սահմանելու իր դուստր ձեռնարկության պարտքային պարտավորության մակարդակների համընդհանուր սահմանաչափերը: Դա մայր ընկերությանը թույլ չի տալիս տալ այնպիսի հրահանգներ՝ կապված ամենօրյա գործողությունների, ինչպես նաև բաշխման գծերի կառուցման և բարելավման վերաբերյալ առանձին որոշումների հետ, որոնք կատարվում են հաստատված ֆինանսական պլանի կամ որևէ այլ համարժեք գործիքի պայմաններին համապատասխան, և

դ. բաշխման համակարգի օպերատորը պետք է հաստատի պարտավորությունների կատարման ծրագիրը, որով սահմանվում են խտրական վարքագծի բացառումն ապահովելու համար ձեռնարկված միջոցները և ապահովի, որ դրա կատարումը դիտանցվի պատշաճ կերպով: Պարտավորությունների կատարման ծրագրով սահմանվում են աշխատակիցների՝ այդ նպատակին հասնելուն ուղղված հատուկ պարտավորությունները: Պարտավորությունների կատարման ծրագրի, բաշխման համակարգի օպերատորի պարտավորությունների կատարման համար պատասխանատուի դիտանցման համար պատասխանատու անձի կամ մարմնի կողմից հոդված 35(1)-ում նշված կարգավորող մարմնին ներկայացվում և հրապարակվում է ձեռնարկված միջոցները սահմանող տարեկան հաշվետվություն: Բաշխման համակարգի օպերատորի պարտավորությունների կատարման համար պատասխանատուն գործում է ամբողջովին անկախ և իր առջև դրված խնդիրների

իրագործման համար բաշխման համակարգի օպերատորի և փոխկապակցված որևէ այլ տնտեսվարող սուբյեկտի հետ կապված անհրաժեշտ բոլոր տեղեկությունները պետք է մատչելի լինեն նրա համար:

3. Եթե բաշխման համակարգի օպերատորը ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մաս է կազմում, ապա անդամ պետություններն ապահովում են, որ բաշխման համակարգի օպերատորի գործողությունները դիտանցվեն կարգավորող կամ այլ իրավասու մարմինների կողմից այնպես, որ այն, օգտվելով իր՝ ուղղահայաց ինտեգրման առավելությունից, չկարողանա խաթարել մրցակցությունը: Մասնավորապես, ուղղահայաց ինտեգրված բաշխման համակարգի օպերատորն իր հաղորդակցության և ապրանքանշանի մեջ շփոթություն չի ստեղծում՝ կապված ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի մատակարարման ճյուղի առանձին ինքնության հետ:

4. Անդամ պետությունները կարող են որոշել 100000–ից պակաս միացված բաժանորդներ կամ փոքր, մեկուսացված համակարգեր սպասարկող էլեկտաէներգիայի բնագավառի ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի համար չկիրառել 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները:

Հոդված 27

Բաշխման համակարգի օպերատորների՝ գաղտնիության ապահովման պարտավորությունը

Առանց հակասելու 30-րդ հոդվածին կամ խախտելու տեղեկությունների հրապարակման՝ օրենքով սահմանված որևէ այլ իրավական պարտականությունը՝ բաշխման համակարգի օպերատորը պետք է պահպանի իր գործունեության իրականացման ընթացքում ձեռք բերված առևտրային կարևորություն ունեցող տեղեկությունների գաղտնիությունը և կանխի սեփական գործողությունների վերաբերյալ այն տեղեկությունների հրապարակումը, որոնք, խտրական ձևով հրապարակվելու դեպքում, կարող են շահեկան լինել առևտրային տեսանկյունից:

Բաշխման փակ համակարգեր

1. Անդամ պետությունները ազգային կարգավորող կամ այլ իրավասու մարմիններին կարող են հնարավորություն տալ առանձնացնելու մի համակարգ, որը էլեկտրաէներգիա է բաշխում աշխարհագրորեն սահմանափակ արդյունաբերական, առևտրային կամ միասնական ծառայությունների տարածքների սահմաններում և, առանց հակասելու 4-րդ պարբերությանը, որպես բաշխման փակ համակարգ չի մատակարարում կենցաղային սպառում ունեցող բաժանորդներին, եթե.

ա. հատուկ տեխնիկական կամ անվտանգության նկատառումներից ելնելով՝ համակարգն օգտագործողների գործողությունները կամ արտադրության գործընթացը ինտեգրված են, կամ

բ. այդ համակարգն էլեկտրաէներգիա է բաշխում հիմնականում համակարգը տնօրինողին կամ համակարգի օպերատորին կամ դրանց հետ փոխկապակցված տնտեսվարող սուբյեկտներին:

2. Անդամ պետությունները ազգային կարգավորող մարմիններին կարող են հնարավորություն տալ՝ բաշխման փակ համակարգի օպերատորին ազատելու.

ա. հոդված 25(5)-ով սահմանված պահանջից՝ գնելու իր կողմից օգտագործվող էլեկտրաէներգիան՝ էներգիայի կորուստները և պահուստային հզորությունն իր համակարգում փոխհատուցելու համար՝ համաձայն թափանցիկ, ոչ խտրական և շուկայի վրա հիմնված ընթացակարգերի:

բ. հոդված 32(1)-ով սահմանված պահանջից, համաձայն որի՝ սակագները կամ դրանց հաշվարկման հիմքում ընկած մեթոդաբանությունը հաստատվում են 37-րդ հոդվածի համաձայն՝ նախքան դրանց ուժի մեջ մտնելը:

3. Եթե ազատումը շնորհվել է 2-րդ պարբերության համաձայն, ապա կիրառելի սակագները կամ դրանց հաշվարկման հիմքում ընկած մեթոդաբանությունը վերանայվում և հաստատվում են 37-րդ հոդվածի համաձայն՝ բաշխման փակ համակարգն օգտագործողի կողմից պահանջի դեպքում:

4. Բաշխման համակարգը տնօրինողի հետ աշխատանքային հարաբերությունների կամ նմանատիպ ընկերակցության մեջ գտնվող, բաշխման փակ համակարգի կողմից

սպասարկվող տարածքի սահմաններում տեղակայված քիչ թվով տնտեսությունների կողմից չնախատեսված օգտագործումը չի խոչընդոտում 2-րդ պարբերության համաձայն շնորհվող ազատմանը:

Հոդված 29

Համակցված օպերատոր

Հոդված 26(1)-ը չի խոչընդոտում հաղորդման և բաշխման համակցված համակարգի շահագործմանը, պայմանով, որ օպերատորը գործի հոդված 9(1)-ին, կամ 13-րդ և 14-րդ հոդվածներին, կամ Գլուխ V-ին համապատասխան կամ նրա գործունեությունը կարգավորվի Հոդված 44(2)-ով:

ԳԼՈՒԽ VII

ՀԱՇԻՎՆԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

Հոդված 30

Հաշիվների մատչելիության իրավունքը

1. Անդամ պետությունները կամ նրանց կողմից նշանակված որևէ իրավասու մարմին՝ ներառյալ 35-րդ հոդվածում նշված կարգավորող մարմիններն ունեն, այնքանով որքանով դա անհրաժեշտ է իրենց գործառույթների իրականացման համար, էլեկտաէներգիայի բնագավառի տնտեսվարող սուբյեկտի հաշիվների մատչելիության իրավունք՝ 31-րդ հոդվածում սահմանվածի համաձայն:
2. Անդամ պետությունները կամ նշանակված որևէ իրավասու մարմին՝ ներառյալ կարգավորող մարմինները, պահպանում են առևտրային կարևորություն ունեցող տեղեկությունների գաղտնիությունը: Անդամ պետությունները կարող են նախատեսել նման տեղեկությունների հրապարակումը, երբ դա անհրաժեշտ է իրավասու մարմիններին՝ իրենց գործառույթներն իրականացնելու համար:

Հաշիվների տարանջատումը

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ քայլերն՝ ապահովելու որ էլեկտաէներգիայի բնագավառի տնտեսվարող սուբյեկտի հաշիվների վարումն իրականացվի 2-րդ և 3-րդ պարբերություններին համապատասխան:

2. էլեկտաէներգիայի բնագավառի տնտեսվարող սուբյեկտներն, անկախ իրենց սեփականության կամ կազմակերպարավական ձևից, կազմում, աուդիտին են ներկայացնում և հրապարակում են իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների տարեկան հաշվետվությունների վերաբերյալ Պայմանագրի հոդված 44(2)(է) []-ի վրա հիմնված՝ «Որոշակի տեսակի ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասին» Խորհրդի 1978 թվականի հուլիսի 25-ի 78/660/ԵՏՀ Չորրորդ հրահանգի [21] համաձայն ընդունված ազգային օրենքի կանոններին համապատասխան:

Այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք իրավաբանորեն պարտավոր չեն հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները, իրենց գլխավոր գրասենյակում պահում և հանրությանն են տրամադրում դրանց պատճենները:

3. էլեկտաէներգիայի բնագավառի տնտեսվարող սուբյեկտներն, իրենց ներքին հաշվապահական հաշվառումն իրականացնելիս, հաղորդման և բաշխման իրենց յուրաքանչյուր գործողության համար վարում են առանձին հաշիվներ, գործելով այնպես, ինչպես իրենցից կպահանջվեր այն դեպքում, երբ նշված գործողություններն իրականացվեին առանձին տնտեսվարող սուբյեկտի կողմից՝ խտրականության դրսևորումներից, խաչաձև սուբսիդավորումից և մրցակցության խաթարումից խուսափելու նպատակով: Նրանք պետք է վարեն նաև այնպիսի հաշիվներ, որոնք կարող են համախմբվել հաղորդման կամ բաշխման հետ կապ չունեցող՝ էլեկտրաէներգիայի բնագավառի այլ գործողությունների համար: Մինչև 2007 թվականի հուլիսի 1-ը, դրանք պետք է առանձին հաշիվներ վարեն պահանջները բավարարող բաժանորդների համար մատակարարման գործողությունների և պահանջները չբավարարող բաժանորդների համար մատակարարման գործողությունների համար: Հաղորդման և բաշխման համակարգը տնօրինելուց ստացված եկամուտը պետք է նշվի հաշիվներում: Հարկ եղած դեպքում, դրանք վարում են համախմբված հաշիվներ էլեկտրաէներգիայի հետ կապ չունեցող այլ գործողությունների համար: Ներքին ֆինանսական հաշվետվությունները

ներառում են հաշվապահական հաշվեկշիռը և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը յուրաքանչյուր գործողության համար:

4. 2-րդ պարբերությունում նշված աուդիտը, մասնավորապես, ստուգում է 3-րդ պարբերությունում նշված խտրականության դրսևորումներից և խաչաձև սուբսիդավորումից խուսափելու պարտավորության պահպանումը:

ԳԼՈՒԽ VIII

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 32

ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Անդամ պետություններն ապահովում են հաղորդման և բաշխման համակարգերի՝ երրորդ կողմերի մատչելիությունն ապահովող համակարգի իրագործումը հրապարակված սակագների հիման վրա, որոնք կիրառելի են պահանջները բավարարող բոլոր բաժանորդների համար և կիրառվում են օբյեկտիվորեն՝ առանց համակարգն օգտագործողների միջև խտրականության դրսևորման: Անդամ պետություններն ապահովում են, որ այդ սակագները կամ դրանց հաշվարկման հիմքում ընկած մեթոդաբանությունը հաստատվեն նախքան դրանց՝ 37-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ մտնելը, և որ այդ սակագները և մեթոդաբանությունը, միայն մեթոդաբանության հաստատման դեպքում, հրապարակվեն նախքան դրանց ուժի մեջ մտնելը:

2. Հաղորդման և բաշխման համակարգի օպերատորը կարող է մերժել մատչելիությունն անհրաժեշտ կարողության բացակայության դեպքում: Նման մերժման համար պետք է ներկայացվեն պատշաճ կերպով հիմնավորված պատճառներ, մասնավորապես՝ հաշվի առնելով 3-րդ հոդվածը և հիմնվելով նպատակի և տեխնիկապես և տնտեսապես հիմնավորված չափորոշիչների վրա: Անդամ պետությունների կողմից այդպես նախատեսված լինելու դեպքում, կարգավորող մարմինները կամ Անդամ պետություններն ապահովում են, որ այդ չափորոշիչները կիրառվեն հետևողականորեն և որ այդ համակարգն օգտագործողները, ում մերժվել է մատչելիությունը, կարողանան կիրառել վեճերի լուծման ընթացակարգը: Կարգավորող մարմիններն ապահովում են նաև, հարկ եղած դեպքում և այն դեպքում, երբ մերժվել է մատչելիությունը, որ հաղորդման և բաշխման

համակարգի օպերատորը տրամադրի համապատասխան տեղեկություններ ցանցի ուժեղացման համար անհրաժեշտ միջոցների վերաբերյալ: Նման տեղեկություններ պահանջող կողմից կարող է գանձվել նման տեղեկությունների տրամադրման արժեքն արտացոլող խելամիտ վճար:

Հոդված 33

Շուկայի բացումը և փոխադարձությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ պահանջները բավարարող բաժանորդներ համարվեն.

ա) մինչև 2004 թվականի հուլիսի 1-ը՝ 96/92/ԵՀ հրահանգի հոդված 19 (1)–(3)–ում նշված՝ պահանջները բավարարող բաժանորդները: Անդամ պետությունները, յուրաքանչյուր տարի, մինչև հունվարի 31-ը հրապարակում են չափորոշիչներ այդ՝ պահանջները բավարարող բաժանորդներին սահմանելու համար,

բ) 2004 թվականի հուլիսի 1-ից՝ ոչ կենցաղային սպառում ունեցող բոլոր բաժանորդները,

գ) 2007 թվականի հուլիսի 1-ից՝ բոլոր բաժանորդները:

2. Էլեկտրաէներգիայի շուկաների բացման անհավասարակշռությունից խուսափելու համար.

ա) մեկ այլ Անդամ պետության համակարգում պահանջները բավարարող բաժանորդի հետ Էլեկտրաէներգիայի մատակարարման համար պայմանագրերի կնքումը չի արգելվում, եթե բաժանորդը ներգրավված երկու համակարգերում համարվում է պահանջները բավարարող, և

բ) կետ ա)–ում նկարագրված գործարքները մերժվում են այն պատճառով, որ բաժանորդը պահանջները բավարարում է երկու համակարգերից միայն մեկի մասով, ապա Հանձնաժողովը կարող է, հաշվի առնելով շուկայում տիրող իրավիճակը և ընդհանուր շահը, մերժող կողմին պարտադրել իրականացնել պահանջվող մատակարարումը այն Անդամ պետության կողմից պահանջի դեպքում, որտեղ գտնվում է պահանջները բավարարող բաժանորդը:

Ուղիղ գծեր

1. Անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու.

ա) իրենց տարածքում ստեղծված էլեկտրաէներգիա արտադրող բոլոր ընկերությունների և էլեկտրաէներգիա մատակարարող տնտեսվարող սուբյեկտների կողմից՝ իրենց սեփական տարածքներում, դուստր ձեռնարկություններին և պահանջները բավարարող բաժանորդներին ուղիղ գծի միջոցով մատակարարման իրականացումը, և

բ) իրենց տարածքում գտնվող՝ պահանջները բավարարող բոլոր բաժանորդներին արտադրողի կամ մատակարարող տնտեսվարող սուբյեկտի կողմից ուղիղ գծի միջոցով մատակարարման իրականացումը:

2. Անդամ պետությունները սահմանում են իրենց տարածքում ուղիղ գծերի կառուցման համար լիցենզիաների շնորհման չափորոշիչները: Այդ չափորոշիչները պետք է լինեն օբյեկտիվ և բացառեն խտրական դրսևորումները:

3. Սույն հոդվածի առաջին պարբերությունում նշված ուղիղ գծի միջոցով էլեկտրաէներգիայի մատակարարման հնարավորությունը չպետք է ազդի 32-րդ հոդվածի համաձայն էլեկտրաէներգիայի մատակարարման համար պայմանագրերի կնքման հնարավորության վրա:

4. Անդամ պետությունները կարող են լիցենզիա տրամադրել ուղիղ գծի կառուցման համար, ինչի արդյունքում կարող է, նպատակահարմարության դեպքում, 32-րդ հոդվածի հիման վրա՝ մերժվել համակարգի մատչելիությունը կամ 37-րդ հոդվածի համաձայն՝ սկսվել վեճերի լուծման ընթացակարգ:

5. Անդամ պետությունները կարող են հրաժարվել ուղիղ գծի համար լիցենզիա տրամադրելուց, եթե նման լիցենզիայի շնորհումը կարող է խոչընդոտել 3-րդ հոդվածի դրույթների կատարմանը:

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հոդված 35

Կարգավորող մարմինների նշանակումը և անկախությունը

1. Յուրաքանչյուր Անդամ պետություն ազգային մակարդակում նշանակում է մեկ ազգային կարգավորող մարմին:
2. Սույն հոդվածի 1-ին պարբերությունը չպետք է հակասի Անդամ պետությունների շրջանակներում տարածքային մակարդակում այլ կարգավորող մարմինների նշանակմանը՝ պայմանով, որ թիվ 713/2009 կանոնակարգի (ԵՀ) հոդված 14(1)-ի համաձայն՝ Համայնքի մակարդակով Գործակալության կարգավորողների խորհրդի շրջանակներում ներկայացուցչության և կապի հաստատման նպատակներով լինի ղեկավար կազմի մեկ ներկայացուցիչ:
3. Շեղում կատարելով սույն հոդվածի 1-ին պարբերությունից՝ Անդամ պետությունը կարող է կարգավորող մարմիններ նշանակել աշխարհագրորեն առանձին շրջանում տեղակայված փոքր համակարգերի համար, որոնց սպառումը 2008 թվականին կազմել է ավելի քիչ, քան այն Անդամ պետության ընդհանուր սպառման 3 %-ը, որի մաս է կազմում այն: Այս շեղումը կատարվում է՝ չհակասելով թիվ 713/2009 կանոնակարգի (ԵՀ) հոդված 14(1)-ի համաձայն՝ Համայնքի մակարդակով Գործակալության կարգավորողների խորհրդի շրջանակներում ներկայացուցչության և կապի հաստատման նպատակներով ղեկավար կազմի մեկ ներկայացուցչի նշանակմանը:
4. Անդամ պետությունները երաշխավորում են կարգավորող մարմինների անկախությունը և ապահովում, որ այն իր լիազորություններն իրականացնի անկողմնակալ և ոչ խտրական ձևով: Այս նպատակով, Անդամ երկիրն ապահովում է, որ սույն Հրահանգով և հարակից օրենսդրությամբ իրեն վերապահված օրենսդրական կարգավորման խնդիրներն իրագործելիս՝ կարգավորող մարմինը.
 - ա) իրավաբանորեն առանձին և գործառույթային առումով լինի անկախ որևէ այլ պետական կամ մասնավոր ձեռնարկությունից,

բ) ապահովի, որ իր աշխատակազմը և իր կառավարման համար պատասխանատու անձինք՝

i) գործեն անկախ՝ չհետապնդելով շուկայական որևէ շահույթ, և

ii) օրենսդրական կարգավորման խնդիրներն իրագործելիս՝ անմիջական ցուցումներ չհայցեն կամ չընդունեն որևէ կառավարությունից կամ այլ պետական կամ մասնավոր ձեռնարկությունից: Այս պահանջը չի հակասում համապատասխան ազգային այլ մարմինների հետ, նպատակահարմարության դեպքում, սերտ համագործակցությանը կամ 37-րդ հոդվածով սահմանված՝ կարգավորող լիազորությունների և պարտականությունների հետ կապ չունեցող կառավարության կողմից տրամադրված քաղաքականության ընդհանուր ուղենիշներին:

5. Կարգավորող մարմնի անկախությունը պաշտպանելու համար, Անդամ պետությունները, մասնավորապես, ապահովում են, որ.

ա) կարգավորող մարմինը կարողանա ինքնուրույն որոշումներ կայացնել՝ անկախ որևէ քաղաքական մարմնից և ունենա տարեկան բյուջեի առանձին հատկացումներ՝ անկախ կերպով կատարելով հատկացված բյուջեն, և բավարար մարդկային ու ֆինանսական ռեսուրսներ իր պարտականությունները կատարելու համար, և

բ) կարգավորող մարմնի խորհրդի անդամները կամ, խորհրդի բացակայության դեպքում, կարգավորող մարմնի բարձրաստիճան ղեկավարները նշանակվեն հինգից յոթ տարի ֆիքսված ժամկետով՝ մեկ անգամ վերանշանակման իրավունքով:

Ինչ վերաբերում է առաջին ենթապարբերության բ) կետին՝ Անդամ պետությունները պետք է ռոտացիայի համապատասխան սխեմա ապահովեն խորհրդի կամ բարձրաստիճան ղեկավարների համար: Խորհրդի անդամները կամ, խորհրդի բացակայության դեպքում, բարձրաստիճան ղեկավարության անդամները կարող են իրենց պաշտոնավարման ընթացքում ազատվել պաշտոններից միայն այն դեպքում, երբ նրանք այլևս չեն բավարարում սույն հոդվածում նշված պայմանները կամ ազգային իրավունքի համաձայն՝ կատարել են լուրջ իրավախախտում:

Կարգավորող մարմնի ընդհանուր նպատակները

Սույն Հրահանգում նշված օրենսդրական կարգավորման խնդիրներն իրագործելիս՝ կարգավորող մարմինը ձեռնարկում է բոլոր խելամիտ միջոցները 37-րդ հոդվածով սահմանված իր պարտականությունների և լիազորությունների շրջանակներում հետևյալ նպատակներին իրականացնելիս՝ սերտորեն համագործակցելով համապատասխան ազգային այլ մարմինների՝ ներառյալ, նպատակահարմարության դեպքում, հակամենաշնորհային մարմինների հետ, և առանց նրանց իրավասություններին հակասելու:

ա) սերտորեն համագործակցելով Գործակալության, Անդամ պետությունների կարգավորող մարմինների և Հանձնաժողովի հետ՝ Համայնքի տարածքում էլեկտրաէներգիայի մրցակցային, ապահով և բնապահպանական տեսանկյունից կայուն ներքին շուկայի խթանում, և Համայնքի ներսում բոլոր բաժանորդների և մատակարարների համար շուկայի արդյունավետ բացում, և էլեկտրաէներգիայի ցանցերի արդյունավետ և հուսալի շահագործման համար անհրաժեշտ համապատասխան պայմանների ապահովում՝ հաշվի առնելով երկարաժամկետ նպատակները,

բ) Համայնքի ներսում մրցակցային և պատշաճ կերպով գործող տարածքային շուկաների զարգացում ա) կետ–ում նշված նպատակների իրականացման նպատակով,

գ) Անդամ պետությունների միջև էլեկտրաէներգիայի բնագավառում առևտրի սահմանափակումների վերացում՝ ներառյալ հաղորդման միջսահմանային համապատասխան կարողությունների զարգացում՝ պահանջարկը բավարարելու համար և ազգային շուկաների ինտեգրման ամրապնդում, ինչը կարող է աջակցել էլեկտրաէներգիայի հոսքերի ապահովմանը Համայնքի ողջ տարածքում,

դ) տնտեսապես ամենաարդյունավետ կերպով, սպառողներին ուղղված ապահով, հուսալի և արդյունավետ ոչ խտրական համակարգերի զարգացման ապահովման աջակցություն և համակարգի համարժեքության և, էներգետիկայի բնագավառում քաղաքականության ընդհանուր նպատակներին համապատասխան, էներգաարդյունավետության, ինչպես նաև վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի մեծածավալ և փոքրածավալ արտադրության և ինչպես հաղորդման, այնպես էլ բաշխման ցանցերում բաշխված արտադրության ինտեգրման խթանում,

ե) արտադրության նոր հզորության համար ցանցի մատչելիության դյուրացում, մասնավորապես՝ այն արգելքների վերացում, որոնք կարող են սահմանափակել շուկա նոր մուտք գործողների մատչելիությունը և վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի մատչելիության ապահովում,

զ) համակարգի օպերատորներին և համակարգն օգտագործողներին համապատասխան խրախուսական միջոցների տրամադրման ապահովում, ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ կտրվածքում, համակարգի արտադրողականության արդյունավետության բարձրացման և շուկայի ինտեգրման խթանման համար,

է) իրենց ազգային շուկայի արդյունավետ գործունեության միջոցով բաժանորդների համար շահավետ պայմանների ապահովում՝ խթանելով արդյունավետ մրցակցությունը և աջակցելով սպառողի պաշտպանության ապահովմանը,

ը) աջակցություն էլեկտրաէներգիայի մատակարարման ոլորտում համընդհանուր և հանրային ծառայության բարձր չափանիշների ապահովմանը՝ օժանդակելով խոցելի բաժանորդների պաշտպանությանը և նպաստելով բաժանորդների փոփոխման համար անհրաժեշտ տվյալների փոխանակման գործընթացների համատեղելիությանը:

Հոդված 37

Կարգավորող մարմնի պարտականություններն ու իրավասությունները

1. Կարգավորող մարմինն ունի հետևյալ պարտականությունները՝

ա) թափանցիկ չափորոշիչներին համապատասխան հաղորդման կամ բաշխման սակագների կամ դրանց մեթոդաբանությունների սահմանում կամ հաստատում.

բ) հաղորդման և բաշխման համակարգի օպերատորների, անհրաժեշտության դեպքում՝ համակարգի սեփականատերերի, ինչպես նաև էլեկտրաէներգիայի բնագավառի ցանկացած տնտեսվարող սուբյեկտի կողմից սույն Հրահանգով և Համայնքի այլ համապատասխան օրենսդրության համաձայն դրանց վերագրված պարտականությունների, այդ թվում՝ միջսահմանային խնդիրներին առնչվող պարտականությունների կատարման ապահովում .

գ) միջսահմանային խնդիրների առնչությամբ համապատասխան անդամ պետությունների կարգավորող մարմնի կամ մարմինների և Գործակալության միջև համագործակցության հաստատում.

դ) Գործակալության և Հանձնաժողովի իրավական պարտադիր ուժ ունեցող ցանկացած որոշման կատարում և իրականացում.

ե) գործունեության և պարտականությունների կատարման մասին տարեկան հաշվետվությունների ներկայացում անդամ պետությունների համապատասխան մարմիններ, Գործակալություն և Հանձնաժողով: Այդպիսի հաշվետվություններում ընդգրկվում են ձեռնարկված քայլերը և արձանագրված արդյունքները՝ կապված սույն հոդվածում նշված խնդիրներից յուրաքանչյուրի հետ.

զ) հաղորդման, բաշխման և մատակարարման գործողությունների միջև խաչաձև սուբսիդավորման բացակայության ապահովում.

է) հաղորդման համակարգի օպերատորների ներդրումային ծրագրերի դիտանցում և տարեկան հաշվետվության մեջ՝ հաղորդման համակարգի օպերատորների ներդրումային ծրագրերի գնահատում՝ կապված թիվ 714/2009 կանոնակարգի (ԵՀ) 8(3)(բ) հոդվածում նշված՝ Համայնքում ցանցի զարգացման ծրագրի հետ դրանց համապատասխանության հետ. այդպիսի գնահատումը կարող է ներառել այդ ներդրումային ծրագրերում փոփոխությունների կատարելու մասին առաջարկություններ.

ը) ցանցի անվտանգության և հուսալիության կանոնների պահպանման գնահատում և անցյալում դրանց ապահովության վերանայում, ինչպես նաև՝ ծառայության և մատակարարման որակի ստանդարտների և պահանջների սահմանում կամ հաստատում կամ դրանց խթանում այլ իրավասու մարմինների հետ համագործակցությամբ.

թ) թափանցիկության մակարդակի, այդ թվում՝ մեծածախ գների դիտանցում և էլեկտրաէներգիայի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների կողմից թափանցիկության ապահովման մասով պարտականությունների կատարման ապահովում.

ժ) մեծածախ և մանրածախ մակարդակներում շուկայի բացման ու մրցակցության մակարդակի ու արդյունավետության դիտանցում, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի փոխանակումներ, կենցաղային նպատակներով սպառող բաժանորդների համար նախատեսված գներ՝ ներառյալ նախավճարային համակարգերը, միացման, անջատման դրույքաչափերը, սպասարկման վճարները և սպասարկումը, կենցաղային նպատակներով

սպառող բաժանորդների կողմից բողոքները, նաև՝ մրցակցության խաթարման կամ սահմանափակման դեպքերը, ինչպես նաև՝ համապատասխան մրցակցային մարմիններին անհրաժեշտ տեղեկությունների տրամադրում և ցանկացած էական դեպքերի մասին ծանուցում.

ժա) սահմանափակ պայմանագրային գործելակերպերի առկայության դիտանցում, այդ թվում՝ բացառիկ իրավունքի մասին դրույթների, որոնք կարող են խոչընդոտել կենցաղային նպատակներով չսպառող խոշոր բաժանորդներին մի քանի մատակարարների հետ միաժամանակ պայմանագրեր կնքելու հարցում կամ սահմանափակել նրանց այդպես գործելու իրավունքը, անհրաժեշտության դեպքում նաև՝ այդպիսի գործելակերպերի մասին տեղեկությունների տրամադրում ազգային մրցակցային մարմիններ.

ժբ) պայմանագրեր կնքելու ազատության պահպանում դադարեցվող մատակարարման պայմանագրերի և երկարաժամկետ պայմանագրերի մասով՝ պայմանով, որ դրանք համապատասխանեն Համայնքի իրավունքին ու Համայնքի քաղաքականություններին.

ժգ) միացումներ և վերանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով հաղորդման ու բաշխման համակարգերի օպերատորների կողմից վերցված ժամանակի դիտանցում.

ժդ) այլ համապատասխան մարմինների հետ համագործակցությամբ աջակցության ցուցաբերում՝ ուղղված սպառողների իրավունքների պաշտպանության միջոցների՝ նաև I հավելվածով սահմանված միջոցների արդյունավետության ու դրանց իրականացման ապահովմանը.

ժե) առնվազն տարին մեկ անգամ առաջարկությունների հրապարակում՝ կապված 3-րդ հոդվածի դրույթների հետ մատակարարման գների համապատասխանության հետ, և անհրաժեշտության դեպքում՝ դրանց տրամադրում մրցակցային մարմիններին.

ժզ) բաժանորդների կողմից սպառման մասին տվյալներից օգտվելու հնարավորության ապահովում, սպառման մասին տվյալների՝ ազգային մակարդակում ներդաշնակեցված դյուրըմբռնելի ձևաչափի տրամադրում այլընտրանքային գործածման նպատակով և բոլոր բաժանորդներին այդպիսի տվյալներից անհապաղ օգտվելու հնարավորության ընձեռում՝ համաձայն I հավելվածի (ը) կետի.

ժզ) հաղորդման համակարգի օպերատորների, բաշխման համակարգի օպերատորների, մատակարարների և բաժանորդների և շուկայի այլ դերակատարների գործառույթներին ու

ժէ) պարտականություններին վերաբերող կանոնների իրականացման դիտանցում՝ համաձայն թիվ 714/2009 կանոնակարգի (ԵՀ).

ժը) արտադրական ռեսուրսներում ներդրումների դիտանցում՝ կապված մատակարարման ապահովության հետ.

ժթ) Համայնքի և երրորդ երկրի հաղորդման համակարգի օպերատորների միջև տեխնիկական համագործակցության դիտանցում.

ի) երաշխիքային միջոցների իրականացման դիտանցում, ինչպես նշված է 42-րդ հոդվածում.

իա) շուկայում իրականացվող ամենակարևոր գործընթացների մասով տվյալների փոխանակման գործընթացների համեմատելիության խթանում տարածաշրջանային մակարդակով:

2. Եթե անդամ պետությունը նախատեսում է այդպիսի դրույթներ, 1-ին պարբերությամբ սահմանված դիտանցման պարտականությունները կարող են իրականացվել կարգավորող մարմնից բացի, այլ մարմինների կողմից: Այդ դեպքում, այդպիսի դիտանցման արդյունքում ստացված տեղեկությունները հնարավորինս շուտ մատչելի են դարձվում կարգավորող մարմնին:

Պահպանելով նրանց անկախությունը, չսահմանափակելով նրանց հատուկ իրավասությունները և հավատարիմ մնալով առավել արդյունավետ կարգավորման սկզբունքներին՝ կարգավորող մարմինը, հարկ եղած դեպքում, խորհրդակցում է հաղորդման համակարգի օպերատորների հետ և, ըստ անհրաժեշտության, սերտորեն համագործակցում համապատասխան այլ ազգային մարմինների հետ 1-ին պարբերությամբ սահմանված պարտականություններն իրականացնելիս:

Կարգավորող մարմնի կամ Գործակալության կողմից սույն Հրահանգի համաձայն տրված որևէ հավանություն չի սահմանափակում կարգավորող մարմնի կողմից իր լիազորությունների պատշաճ կերպով հիմնավորված հետագա օգտագործումը՝ համաձայն սույն հոդվածի, կամ համապատասխան այլ մարմինների կամ Հանձնաժողովի կողմից սահմանված տույժերը:

3. Սույն հոդվածի 1-ին պարբերության համաձայն վերապահված պարտականություններից բացի՝ 13-րդ հոդվածի համաձայն անկախ համակարգի օպերատորի նշանակումից հետո կարգավորող մարմինը՝

ա) դիտանցում է հաղորդման համակարգի սեփականատիրոջ և անկախ համակարգի օպերատորի կողմից սույն հոդվածի համաձայն նրանց վերապահված պարտականությունների կատարումը և սահմանում է տույժեր դրանց չկատարման դեպքում՝ 4(դ) պարբերությանը համապատասխան.

բ) դիտանցում է անկախ համակարգի օպերատորի և հաղորդման համակարգի սեփականատիրոջ միջև հարաբերությունները և կապերը՝ անկախ համակարգի օպերատորի կողմից իր պարտականությունների կատարումն ապահովելու համար, մասնավորապես՝ հաստատում է պայմանագրեր և հանդես գալիս որպես վեճեր կարգավորող մարմին անկախ համակարգի օպերատորի և հաղորդման համակարգի սեփականատիրոջ միջև՝ ցանկացած կողմի ներկայացրած բողոքի առնչությամբ՝ համաձայն 11-րդ պարբերության.

գ) չհակասելով 13(2)(գ) հոդվածի համաձայն սահմանված կարգին՝ առաջին տասնյամյակի համար ցանցի զարգացման ծրագրի առնչությամբ հաստատում է ներդրումային ծրագրերը և անկախ համակարգի օպերատորի կողմից յուրաքանչյուր տարի ներկայացվող ցանցի զարգացման բազմամյա ծրագիրը.

դ) ապահովում է, որ անկախ համակարգի օպերատորի կողմից գանձված ցանցին միանալու վճարներում ներառվի ցանցի սեփականատիրոջ կամ ցանցի սեփականատերերի համար վարձատրությունը, որը ենթադրում է ցանցի ակտիվների և դրանցում կատարված ցանկացած նոր ներդրման համարժեք փոխհատուցում՝ պայմանով, որ դրանք շահավետ են ու արդյունարար.

ե) իրավունք ունի տեսչական ստուգումներ՝ նաև առանց զգուշացման տեսչական ստուգումներ անցկացնելու հաղորդման համակարգի սեփականատիրոջը և անկախ համակարգի օպերատորին պատկանող շինություններում, և

զ) դիտանցում է անկախ համակարգի օպերատորի կողմից գանձված գերբեռնվածության վճարների օգտագործումը՝ թիվ 714/2009 կանոնակարգի (ԵՀ) 16(6) հոդվածին համապատասխան:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ կարգավորող մարմիններին վերապահվեն այնպիսի լիազորություններ, որոնք հնարավորություն կտան վերջիններս 1-ին, 3-րդ և 6-րդ պարբերություններում նշված պարտականությունները կատարելու արդյունավետ և արագ եղանակով: Այդ նպատակով՝ կարգավորող մարմինն ունի առնվազն հետևյալ լիազորությունները՝

ա) կայացնել պարտադիր ուժ ունեցող որոշումներ էլեկտրաէներգիայի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ.

բ) ուսումնասիրություններ կատարել էլեկտրաէներգիայի շուկայի գործունեության շուրջ և որոշում կայացնել ցանկացած անհրաժեշտ ու համաչափ միջոցի վերաբերյալ, որն ուղղված է արդյունավետ մրցակցության բարձրացման և շուկայի պատշաճ գործունեության ապահովմանը, ինչպես նաև սահմանել այդպիսի միջոցներ: Ըստ անհրաժեշտության՝ կարգավորող մարմինը մրցակցային իրավունքին առնչվող ուսումնասիրություն կատարելիս իրավունք ունի նաև համագործակցելու ազգային մրցակցային մարմնի և ֆինանսական շուկան կարգավորող մարմինների կամ Հանձնաժողովի հետ.

գ) էլեկտրաէներգիայի բնագավառի տնտեսվարող սուբյեկտներից պահանջել ցանկացած տեղեկություն, որ անհրաժեշտ է իր գործառույթներն իրականացնելու համար, այդ թվում՝ երրորդ կողմի միանալու հնարավորության մերժման հիմնավորումը, ինչպես նաև ցանկացած տեղեկություն ցանցն ուժեղացնելու համար անհրաժեշտ միջոցների մասին.

դ) սահմանել արդյունավետ, համաչափ ու տարհամոզիչ տույժեր էլեկտրաէներգիայի բնագավառի այն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որոնք չեն կատարում իրենց պարտականությունները համաձայն սույն Հրահանգի կամ կարգավորող մարմնի կամ Գործակալության կողմից կայացված իրավական պարտադիր ուժ ունեցող որոշումները, կամ առաջարկել, որ այդպիսի տույժեր սահմանի իրավասու դատարանը: Դա ներառում է սույն Հրահանգի համաձայն իրենց համապատասխան պարտականությունները չկատարելու համար՝ հաղորդման համակարգի օպերատորի վրա հաղորդման համակարգի օպերատորի տարեկան շրջանառության մինչև 10%-ի չափով կամ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի վրա ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի տարեկան շրջանառության մինչև 10%-ի չափով տույժեր սահմանելու կամ դրանք սահմանելու առաջարկի լիազորություն՝ ելնելով կոնկրետ դեպքից, ինչպես նաև ուսումնասիրություններ կատարելու

ե) համապատասխան իրավունքներ և վեճերի կարգավորման ցուցումների համապատասխան լիազորություններ՝ համաձայն 11-րդ և 12-րդ պարբերությունների:

5. Ի հավելումն սույն հոդվածի 1-ին և 4-րդ պարբերությունների համաձայն դրան վերապահված պարտականությունների և լիազորությունների՝ V հոդվածին համապատասխան հաղորդման համակարգի օպերատորի նշանակումից հետո

կարգավորող մարմնին վերապահվում են առնվազն հետևյալ պարտականություններն ու լիազորությունները՝

ա) ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի օգտին խտրական վարքագծի համար՝ 4(դ) պարբերության համաձայն՝ նշանակել պատժամիջոցներ.

բ) դիտանցել կապը հաղորդման համակարգի օպերատորի և ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի միջև՝ հաղորդման համակարգի օպերատորի կողմից իր պարտականությունների կատարումն ապահովելու համար.

գ) 11-րդ պարբերության համաձայն ներկայացվող բողոքի մասով ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի և հաղորդման համակարգի օպերատորի միջև հանդես գալ որպես վեճեր կարգավորող մարմին.

դ) դիտանցել առևտրային և ֆինանսական հարաբերությունները՝ ներառյալ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի և հաղորդման համակարգի օպերատորի միջև կատարված փոխառությունները.

ե) հաստատել բոլոր առևտրային և ֆինանսական պայմանագրերը ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի և հաղորդման համակարգի օպերատորի միջև՝ պայմանով, որ դրանք բավարարում են շուկայի պայմանները.

զ) պահանջել հիմնավորում ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտից պարտականությունների կատարումն ապահովող պաշտոնատար անձի կողմից 21(4) հոդվածի համաձայն ծանուցում ստանալուց հետո: Այդ հիմնավորումը մասնավորապես ներառում է փաստեր առ այն, որ ոչ մի խտրական վարքագիծ ի օգուտ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի չի դրսևորվել.

է) իրականացնել տեսչական ստուգումներ՝ նաև առանց զգուշացման տեսչական ստուգումներ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտին և հաղորդման համակարգի օպերատորին պատկանող շինություններում, և

ը) հանձնարարել հաղորդման համակարգի օպերատորի բոլոր կամ կոնկրետ առաջադրանքները 13-րդ հոդվածի համաձայն նշանակված անկախ համակարգի օպերատորին սույն Հրահանգի համաձայն հաղորդման համակարգի օպերատորի կողմից իր պարտականությունները մշտապես խախտելու դեպքում, մասնավորապես ի օգուտ ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտի շարունակական խտրական վարքագծի դեպքում:

6. Կարգավորող մարմինները պատասխանատու են ստորև նշվածի վերաբերյալ ժամկետներ հաշվարկելու կամ պայմաններ սահմանելու համար կիրառվող մեթոդաբանությունները սահմանելու կամ հաստատելու համար՝ դրանք ուժի մեջ մտնելուց բավարար ժամանակ առաջ՝

ա) ազգային ցանցերին միացում՝ ներառյալ հաղորդման ու բաշխման սակագները կամ դրանց մեթոդաբանությունները: Այդ սակագները կամ մեթոդաբանությունները հնարավորություն են տալիս, որ ցանցերում անհրաժեշտ ներդրումները կատարվեն այնպիսի եղանակով, որը թույլ կտա այդ ներդրումների միջոցով այդ ցանցերի կենսունակության ապահովումը.

բ) հավասարակշռող ծառայությունների մատուցում, որն իրականացվում է հնարավոր ամենաշահավետ ձևով և համապատասխան խրախուսական միջոցների տրամադրում ցանցից օգտվողներին իրենց ներդրումը և ստացված արդյունքը հավասարակշռելու համար: Հավասարակշռման ծառայությունները մատուցվում են արդար և ոչ խտրական ձևով և հիմնվում են օբյեկտիվ չափորոշիչների վրա, և

գ) մուտք դեպի միջսահմանային ենթակառուցվածքներ՝ ներառյալ հզորության բաշխման և գերբեռնվածության կառավարման ընթացակարգերը:

7. 6–րդ պարբերությունում նշված մեթոդաբանությունները կամ ժամկետներն ու պայմանները հրապարակվում են:

8. Սակագները կամ մեթոդաբանությունները և հավասարակշռող ծառայությունները սահմանելիս կամ հաստատելիս կարգավորող մարմիններն ապահովում են, որ հաղորդման և բաշխման համակարգի օպերատորներին տրվի խրախուսական համապատասխան միջոց՝ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ կտրվածքով, բարձրացնելու արդյունավետությունը, խթանելու շուկայի ինտեգրումը և մատակարարման ապահովությունն ու աջակցելու դրանց առնչվող հետազոտական աշխատանքներին:

9. Կարգավորող մարմինները դիտանցում են էլեկտրաէներգիայի ազգային համակարգերի, այդ թվում՝ էլեկտրահաղորդման գծերի գերբեռնվածության կառավարումը, և գերբեռնվածության կառավարման նորմերի իրականացումը: Այդ նպատակով՝ հաղորդման համակարգի օպերատորները կամ շուկայի օպերատորները գերբեռնվածության կառավարման մասին իրենց նորմերը, այդ թվում՝ հզորության բաշխումը ներկայացնում են ազգային կարգավորող մարմիններ: Ազգային կարգավորող մարմինները կարող են պահանջել փոփոխություններ կատարել այդ նորմերում:

10. Կարգավորող մարմինները իրավասու են պահանջել հաղորդման և բաշխման համակարգի օպերատորներից, անհրաժեշտության դեպքում, փոփոխել ժամկետները և պայմանները՝ նաև սույն հոդվածում նշված սակագները կամ մեթոդաբանությունները՝ ապահովելու համար, որ դրանք լինեն համաչափ և կիրառվեն ոչ խտրական ձևով: Հաղորդման և բաշխման սակագները սահմանելն ուշացնելու դեպքում՝ կարգավորող մարմիններն իրավասու են սահմանելու կամ հաստատելու հաղորդման ու բաշխման ժամանակավոր սակագներ կամ մեթոդաբանություններ և որոշում կայացնելու համապատասխան փոխհատուցման միջոցների շուրջ, եթե հաղորդման ու բաշխման վերջնական սակագները կամ մեթոդաբանությունները տարբերվում են այդ ժամանակավոր սակագներից կամ մեթոդաբանություններից:

11. Եթե որևէ կողմ բողոք ունի հաղորդման կամ բաշխման համակարգի օպերատորի՝ սույն Հրահանգի համաձայն պարտականությունների մասով, կարող է բողոքն ուղղել կարգավորող մարմնին, որը, գործելով որպես վեճեր կարգավորող մարմին, որոշում է կայացնում բողոքը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում: Այդ ժամանակահատվածը կարող է երկու ամսով երկարաձգվել, եթե կարգավորող մարմնին անհրաժեշտ են հավելյալ տեղեկություններ: Այդ երկարաձգված ժամկետը կարող է ավելի երկարաձգվել բողոքը ներկայացնողի համաձայնությամբ: Կարգավորող մարմնի որոշումը պարտադիր է, եթե կամ քանի դեռ այն չեղյալ չի համարվում բողոքարկման հիման վրա:

12. Ցանկացած կողմ, ում վրա ազդեցություն է գործում սույն հոդվածի համաձայն՝ մեթոդաբանությունների շուրջ ընդունված որոշումը, կամ ով իրավունք ունի բողոքարկելու այն, կամ եթե կարգավորող մարմինը պարտավոր է խորհրդատվություն տալ սակագների կամ մեթոդաբանությունների շուրջ, կարող է ամենաուշը երկու ամսվա ընթացքում կամ առավել կարճ ժամանակահատվածում, ինչպես սահմանված է անդամ պետությունների կողմից, որոշումը հրապարակելուց կամ որոշման մասին առաջարկից հետո, բողոքը ներկայացնել վերանայման: Այդպիսի բողոքը չունի կասեցնող ազդեցություն:

13. Անդամ պետությունները ստեղծում են համապատասխան և արդյունավետ մեխանիզմներ կարգավորման, հսկողության և թափանցիկության համար՝ նպատակ ունենալով խուսափել գերակա դիրքի չարաշահումից, մասնավորապես՝ ի վնաս սպառողների, և այլ կողոպտիչ վարքագծից: Այդ մեխանիզմներում հաշվի են առնվում Պայմանագրի դրույթները և, մասնավորապես, դրա 82-րդ հոդվածը:

14. Անդամ պետություններն ապահովում են, որ ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ ներառյալ վարչական գործողությունը կամ քրեական վարույթները՝ իրենց ազգային իրավունքին համապատասխան, այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դեմ, որոնք չեն պահպանել սույն Հրահանգով սահմանված գաղտնիության կանոնները:

15. 11-րդ և 12-րդ պարբերություններում նշված բողոքները չպետք է հակասեն Համայնքի կամ ազգային իրավունքի համաձայն բողոքարկման իրավունքի իրականացմանը:

16. Կարգավորող մարմինների կողմից ընդունված որոշումները պետք է լինեն լիովին պատճառաբանված ու հիմնավորված՝ դատական վերանայման հնարավորություն ընձեռելու համար: Որոշումները մատչելի են հանրությանը՝ միաժամանակ պահպանելով առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիությունը:

17. Անդամ պետություններն ապահովում են, որ հարմար մեխանիզմներ գործեն ազգային մակարդակով, որի ներքո կարգավորող մարմնի որոշումից ազդեցություն կրած կողմն իրավունք կունենա բողոք ներկայացնելու ներգրավված կողմերից և որևէ կառավարությունից անկախ մարմին:

Հոդված 38

Միջսահմանային հարցերի կարգավորման ռեժիմը

1. Կարգավորող մարմինները խորհրդակցում և սերտորեն համագործակցում են միմյանց հետ և միմյանց ու Գործակալություն են տրամադրում սույն Հրահանգի համաձայն իրենց գործառույթների կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ: Փոխանակված տեղեկատվության կապակցությամբ այն ստացող մարմինը պետք է ապահովի գաղտնիության միևնույն մակարդակը, որ պահանջում է այդ տեղեկատվությունը տրամադրող մարմինը:

2. Կարգավորող մարմինները համագործակցում են առնվազն տարածքային մակարդակով, որպեսզի խթանեն միջոցառումների ներդրումը՝ ցանցի օպտիմալ կառավարումը հնարավոր դարձնելու նպատակով, նպաստեն էլեկտրաէներգիայի համատեղ փոխանակումներին և միջսահմանային հզորության բաշխմանը և հնարավոր դարձնեն էլեկտրահաղորդման գծերի հզորության համարժեք մակարդակը, այդ թվում՝ էլեկտրահաղորդման նոր գծերի միջոցով, տարածաշրջանում և տարածաշրջանների միջև, ինչը հնարավոր կդարձնի արդյունավետ մրցակցության զարգացումը և մատակարարման ապահովության բարելավումը՝

ա) խտրականություն չդնելով տարբեր անդամ պետություններում գործող մատակարարող ընկերությունների միջև.

բ) համակարգ են ցանցի բոլոր ծածկագրերի ձևավորումը հաղորդման համակարգի համապատասխան օպերատորների և շուկայի այլ դերակատարների համար, և

գ) համակարգ են գերբեռնվածության կառավարումը կարգավորող կանոնների մշակումը:

3. Ազգային կարգավորող մարմիններն իրավունք ունեն ներգրավվելու համագործակցային միջոցառումներում կարգավորող համագործակցությունը ամրապնդելու համար:

4. 2-րդ պարբերությունում նշված գործողությունները, անհրաժեշտության դեպքում, իրականացվում են այլ համապատասխան ազգային մարմինների հետ մանրամասն խորհրդատվությամբ և չհակասելով իրենց կոնկրետ իրավասություններին:

5. Հանձնաժողովը կարող է ընդունել ուղեցույցներ միմյանց կամ Գործակալության հետ համագործակցելու համար կարգավորող մարմինների պարտավորությունների շրջանակի մասին: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ ակտերը պետք է ընդունվեն՝ 46(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան:

Հոդված 39

Ուղեցույցների հետ համապատասխանությունը

1. Յուրաքանչյուր կարգավորող մարմին և Հանձնաժողով կարող են պահանջել Գործակալության եզրակացությունը սույն Հրահանգում կամ թիվ 714/2009 կանոնակարգում (ԵՀ) նշված ուղեցույցների հետ՝ կարգավորող մարմնի կողմից ընդունված որոշման համապատասխանության մասին:

2. Գործակալությունն իր եզրակացությունը ներկայացնում է համապատասխանաբար դրա պահանջը ներկայացրած կարգավորող մարմին կամ Հանձնաժողով և համապատասխան որոշումն ընդունած կարգավորող մարմին դիմումն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում:

3. Եթե որոշումն ընդունած կարգավորող մարմինը չի կատարում Գործակալության եզրակացությանը այդ եզրակացությունը ստանալուց հետո չորս ամսվա ընթացքում, Գործակալությունը համապատասխանաբար տեղեկացնում է Հանձնաժողովին:

4. Ցանկացած կարգավորող մարմին կարող է տեղեկացնել Հանձնաժողովին, եթե այն համարում է, որ այլ կարգավորող մարմնի կողմից ընդունված միջսահմանային առևտրի վերաբերյալ որոշումը չի համապատասխանում սույն Հրահանգում կամ թիվ 714/2009 (ԵՀ) կանոնակարգում նշված ուղեցույցներին՝ այդ որոշման ընդունման ամսաթվից հետո երեք ամսվա ընթացքում:

5. Եթե Հանձնաժողովը Գործակալության կողմից՝ համաձայն 3-րդ պարբերության կամ կարգավորող մարմնի կողմից՝ համաձայն 4-րդ պարբերության կամ սեփական նախաձեռնությամբ տեղեկացվելուց հետո երկու ամսվա ընթացքում, որոշում ընդունելուց հետո երեք ամիսների ընթացքում, գտնում է, որ կարգավորող մարմնի որոշումը լուրջ կասկածների տեղիք է տալիս սույն Հրահանգում կամ թիվ 714/2009 կանոնակարգում (ԵՀ) նշված ուղեցույցների հետ համատեղելիության մասով, Հանձնաժողովը կարող է որոշել դեպքն ուսումնասիրել առավել մանրամասնորեն: Այդ դեպքում այն կարգավորող մարմնին և դատավարության կողմերին հրավիրում է կարգավորող մարմնի մոտ դիտարկումներ ներկայացնելու համար:

6. Եթե Հանձնաժողովը որոշում է կայացնում դեպքն առավել մանրամասնորեն ուսումնասիրելու վերաբերյալ, այն այդ որոշման ընդունումից հետո չորս ամսվա ընթացքում վերջնական որոշում է կայացնում՝

ա) առարկություններ չներկայացնել կարգավորող մարմնի որոշման դեմ, կամ

բ) պահանջել համապատասխան կարգավորող մարմնից չեղյալ ճանաչել իր որոշումը՝ ելնելով այն հանգամանքներից, որ Ուղեցույցների պահանջները չեն կատարվել:

7. Եթե Հանձնաժողովը համապատասխանաբար 5-րդ և 6-րդ պարբերություններով սահմանված ժամկետներում որոշում չի ընդունել դեպքն առավել մանրամասնորեն ուսումնասիրելու մասին կամ չի կայացրել վերջնական որոշում, համարվում է, որ այն առարկություններ չի ներկայացրել կարգավորող մարմնի որոշման դեմ:

8. Կարգավորող մարմինը կատարում է Հանձնաժողովի՝ երկամսյա ժամկետում իր որոշումը չեղյալ ճանաչելու մասին որոշումը և համապատասխանաբար տեղեկացնում է Հանձնաժողովին:

9. Հանձնաժողովը կարող է ընդունել սույն հոդվածի կիրառման համար անհրաժեշտ ընթացակարգի մանրամասները սահմանող ուղեցույցներ: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ ակտերը պետք է

ընդունվեն՝ 46(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան:

Հոդված 40

Տվյալների վարումը

1. Անդամ պետությունները մատակարարող ձեռնարկություններից պահանջում են առնվազն հինգ տարով ազգային մարմինների՝ նաև ազգային կարգավորող մարմնի, ազգային մրցակցային մարմինների և Հանձնաժողովի տրամադրությանը հանձնել վերջիններիս գործառույթների իրականացման համար անհրաժեշտ՝ մեծածախ բաժանորդների և հաղորդման համակարգի օպերատորների հետ կատարվող՝ էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրերով և էլեկտրաէներգիայի մասին երկրորդային պայմանագրերով նախատեսված բոլոր գործարքների մասին համապատասխան տվյալները:

2. Տվյալները ներառում են համապատասխան գործարքների բնութագրերի մասին մանրամասներ, ինչպես օրինակ՝ տևողության, առաքման և հաշվարկի կանոնները, քանակը, կատարման ամսաթվերն ու ժամանակը, գործարքի գները և համապատասխան մեծածախ բաժանորդի նույնականացման միջոցները, ինչպես նաև էլեկտրաէներգիայի մատակարարման մասին բոլոր գործող պայմանագրերի և էլեկտրաէներգիայի մասին երկրորդային պայմանագրերի մանրամասները:

3. Կարգավորող մարմինը կարող է որոշել շուկայի մասնակիցների համար մատչելի դարձնել այդ մանրամասն տեղեկությունները՝ պայմանով, որ շուկայի առանձին դերակատարների կամ առանձին գործարքների մասին՝ առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունները չհրապարակվեն: Սույն պարբերությունը չի կիրառվում ֆինանսական գործիքների մասին այն տեղեկությունների նկատմամբ, որոնք կարգավորվում են 2004/39/ԵՀ հրահանգով:

4. Սույն հոդվածի միասնական կիրառումն ապահովելու համար Հանձնաժողովը կարող է ընդունել ուղեցույցներ, որոնցով սահմանվում են տվյալների վարման մեթոդներ և միջոցներ, ինչպես նաև տվյալների ձևը և բովանդակությունը, որը պետք է պահպանվի: Լրացումների միջոցով սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ

ակտերը պետք է ընդունվեն՝ 46(2) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրությամբ կարգավորող ընթացակարգին համապատասխան:

5. Մեծածախ բաժանորդների և հաղորդման համակարգի օպերատորների հետ կատարվող՝ էլեկտրաէներգիայի մասին երկրորդային պայմանագրերով նախատեսված գործարքների առնչությամբ՝ սույն հոդվածը կիրառվում է միայն 4-րդ պարբերությամբ նշված ուղեցույցները Հանձնաժողովի կողմից ընդունվելուց անմիջապես հետո:

6. Սույն հոդվածի դրույթները չեն ստեղծում լրացուցիչ պարտականություններ 1-ին պարբերությունում նշված մարմինների նկատմամբ՝ 2004/39/ԵՀ հրահանգով կարգավորվող ընկերությունների մասով:

7. Եթե 1-ին պարբերությունում նշված մարմիններին անհրաժեշտ է օգտվել այն տվյալներից, որոնք վարում են 2004/39/ԵՀ հրահանգով կարգավորվող ընկերությունները, այդ Հրահանգի համաձայն պատասխանատու մարմինները պահանջվող տվյալները տրամադրում են դրանց:

ԳԼՈՒԽ X

ՄԱՆՐԱԾԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ

Հոդված 41

Մանրածախ շուկաները

Համայնքում արդյունավետ գործող և թափանցիկ մանրածախ շուկաների ստեղծմանը նպաստելու համար՝ անդամ պետություններն ապահովում են, որ հաղորդման համակարգի օպերատորների, բաշխման համակարգի օպերատորների, մատակարարող ձեռնարկությունների ու բաժանորդների, անհրաժեշտության դեպքում նաև՝ շուկայի այլ մասնակիցների դերերը և պարտականությունները սահմանվեն պայմանագրային կարգավորումների, բաժանորդների նկատմամբ պարտավորությունների, տվյալների փոխանակման և հաշվարկի կանոնների, տվյալների սեփականության և սպառողների հաշվառման պատասխանատվության մասով:

Այդ կանոնները մատչելի են դարձվում հանրության համար, նախագծվում են բաժանորդների և մատակարարների ցանցերին միացումը դյուրացնելու նպատակով, և

դրանք ենթակա են վերանայման կարգավորող մարմինների կամ համապատասխան այլ ազգային մարմինների կողմից:

Ոչ կենցաղային նպատակով օգտագործող մեծածախ բաժանորդներն իրավունք ունեն պայմանագիր կնքելու միաժամանակ մի քանի մատակարարների հետ:

ԳԼՈՒԽ XI

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 42

Երաշխիքային միջոցները

Էներգետիկ շուկայում անսպասելի ճգնաժամի դեպքում և եթե անձանց, սարքերի կամ տեղակայանքների ֆիզիկական անվտանգությունը կամ ապահովությունը կամ համակարգի ամբողջականությունը վտանգված է, անդամ պետությունը կարող է ժամանակավորապես ձեռնարկել անհրաժեշտ երաշխիքային միջոցներ:

Նման միջոցները պետք է հնարավորինս նվազագույն չափով խոչընդոտեն ներքին շուկայի գործունեությանը և չպետք է ընդգրկեն ավելի լայն շրջանակներ, քան անհրաժեշտ է անսպասելիորեն առաջացած դժվարությունները հաղթահարելու համար:

Համապատասխան անդամ պետություններն այդ միջոցների մասին անհապաղ ծանուցում են մյուս անդամ պետություններին և Հանձնաժողովին, որը կարող է որոշել, որ տվյալ անդամ պետությունը պետք է փոփոխի կամ վերացնի այդ միջոցները, քանի որ դրանք խաթարում են մրցակցությունը և բացասաբար են անդրադառնում առևտրի վրա՝ հակասելով ընդհանուր շահերին:

Հոդված 43

Հավասար մրցակցային պայմանները

1. Սույն Հրահանգի համաձայն՝ հավասար մրցակցային պայմաններ ապահովելու նպատակով անդամ պետությունների կողմից ձեռնարկվող միջոցները պետք է համատեղելի

լինեն Պայմանագրի՝ մասնավորապես դրա 30-րդ հոդվածի և Համայնքի օրենսդրության հետ:

2. Առաջին պարբերությունում նշված միջոցները պետք է լինեն համաչափ, ոչ խտրական և թափանցիկ: Այդ միջոցները կարող են ուժի մեջ մտնել միայն Հանձնաժողովին ծանուցելուց և վերջինիս կողմից հաստատվելուց հետո:

3. Հանձնաժողովը գործում է 2-րդ պարբերությունում նշված ծանուցման հիման վրա ծանուցումը ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում: Այդ ժամանակահատվածը սկսվում է ամբողջական տեղեկություններ ստանալուն հաջորդող օրը: Եթե Հանձնաժողովը չի գործել այդ երկու ամսվա ընթացքում, համարվում է, որ այն առարկություններ չի ներկայացրել ծանուցված միջոցների դեմ:

Հոդված 44

Շեղումները

1. Անդամ պետությունները, որոնք, սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո, կարող են ցույց տալ, որ էական խնդիրներ կան իրենց անկախ փոքր համակարգերի աշխատանքում, կարող են դիմել IV, VI, VII և VIII գլուխների, իսկ անկախ միկրո համակարգերի դեպքում՝ III գլխի համապատասխան դրույթներից շեղումներ կատարելու համար՝ այնքանով, որքանով դա վերաբերում է գոյություն ունեցող հզորությունների վերականգնմանը, արդիականացմանն ու կատարելագործմանը. այդ շեղումները կարող են թույլատրվել նրանց Հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը տեղեկացնում է անդամ պետություններին այդ դիմումների մասին նախքան որոշում ընդունելը՝ հաշվի առնելով գաղտնիության պահպանումը: Այդ որոշումը հրապարակվում է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:

2. 9-րդ հոդվածը չի կիրառվում Կիպրոսի, Լյուքսեմբուրգի և/կամ Մալթայի նկատմամբ: Բացի այդ, Մալթայի նկատմամբ չեն կիրառվում 26-րդ, 32-րդ և 33-րդ հոդվածները:

9(1)(բ) հոդվածի նպատակներով՝ «արտադրման կամ մատակարարման ցանկացած գործառույթ իրականացնող տնտեսվարող սուբյեկտ» հասկացության մեջ չեն ներառվում վերջնական բաժանորդները, ովքեր էլեկտրաէներգիայի արտադրման և (կամ) մատակարարման գործառույթներ են իրականացնում ուղղակիորեն կամ տնտեսվարող սուբյեկտների միջոցով, որոնց նկատմամբ անհատապես կամ համատեղ միջոցներով

հսկողություն են իրականացնում՝ պայմանով, որ վերջնական բաժանորդները՝ վերահսկվող ձեռնարկություններում արտադրվող էլեկտրաէներգիայի նրանց բաժնեմասերով հանդերձ՝ տարեկան միջին կտրվածքով՝ էլեկտրաէներգիայի զուտ բաժանորդներ են և պայմանով, որ նրանց կողմից երրորդ անձանց վաճառվող էլեկտրաէներգիայի տնտեսական արժեքը նրանց իրականացրած ձեռնարկատիրական այլ գործողությունների համեմատ աննշան է:

Հոդված 45

Վերանայման ընթացակարգը

Եթե 47(6) հոդվածում նշված զեկույցում Հանձնաժողովը գալիս է եզրակացության, որ, հաշվի առնելով այն արդյունավետ եղանակը, որով ցանցին միացումն իրականացվում է որևէ անդամ պետությունում, ինչի արդյունքում ապահովվում է ամբողջովին արդյունավետ, ոչ խտրական և չխոչընդոտվող միացում ցանցին, տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ սույն Հրահանգով սահմանված որոշակի պարտականությունները (ներառյալ բաշխման համակարգի օպերատորների համար իրավական տարանջատմանն առնչվող պարտականությունները) համամասնական չեն հետապնդվող նպատակին, համապատասխան անդամ պետությունը կարող է դիմում ներկայացնել Հանձնաժողով տվյալ պահանջի կատարումից ազատելու մասին:

Անդամ պետությունը այդ դիմումի մասին անհապաղ ծանուցում է Հանձնաժողովին՝ միաժամանակ տրամադրելով համապատասխան բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են ցույց տալու, որ զեկույցում ներկայացված՝ ցանցին արդյունավետ միացում ապահովված լինելու մասին եզրակացությունը կպահպանվի:

Ծանուցումն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում Հանձնաժողովը կայացնում է եզրակացություն տվյալ անդամ պետության կողմից ներկայացված դիմումի մասին և, հարկ եղած դեպքում, առաջարկներ է ներկայացնում Եվրոպական հանձնաժողով և Խորհուրդ սույն Հրահանգի համապատասխան դրույթները փոփոխելու մասին: Սույն Հրահանգը փոփոխելու մասին առաջարկներում Հանձնաժողովը կարող է առաջարկել ազատել համապատասխան անդամ պետությանը կոնկրետ պահանջների կատարումից՝ ելնելով այն հանգամանքից, որ հարկ եղած դեպքում այդ անդամ պետությունը կիրառում է հավասարապես արդյունավետ միջոցներ:

Հոդված 46

Կոմիտեն

1. Հանձնաժողովին աջակցում է Կոմիտեն:
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով այդ որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 47

Հաշվետվություններ ներկայացնելը

1. Հանձնաժողովը դիտանցում և ուսումնասիրում է սույն Հրահանգի կիրառումը և ընդհանուր ընթացիկ հաշվետվություն է ներկայացնում Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ առաջին անգամ մինչև 2004 թվականի օգոստոսի 4-ը, այնուհետև՝ տարեկան կտրվածքով: Ընթացիկ հաշվետվությունը ներառում է առնվազն հետևյալը՝
 - ա) էլեկտրաէներգիայի ամբողջական և լիարժեք գործող ներքին շուկա ստեղծելու հարցում ձեռք բերված փորձը և արձանագրված առաջընթացը և այդ առնչությամբ առկա խոչընդոտները, այդ թվում՝ շուկայում գերիշխող դիրքը, շուկայի համակենտրոնացումը, կողոպտիչ կամ հակամրցակցային վարքագիծը և դրանց հետևանքները շուկայի գործունեության խաթարման առումով.
 - բ) սույն Հրահանգով սահմանված տարանջատման և սակագների սահմանման պահանջների արդյունավետության աստիճանը Համայնքի էլեկտրաէներգիայի համակարգից արդար ու ոչ խտրական ձևով օգտվելու և մրցակցության համարժեք մակարդակների, ինչպես նաև բաժանորդների համար էլեկտրաէներգիայի շուկայի բացման տնտեսական, բնապահպանական և սոցիալական հետևանքների առումով.
 - գ) Համայնքում էլեկտրաէներգիայի համակարգի հզորության մակարդակներին և մատակարարման ապահովությանն առնչվող խնդիրների և մասնավորապես առաջարկի ու պահանջարկի միջև առկա և նախատեսվող հավասարակշռության ուսումնասիրությունը՝ հաշվի առնելով տարածքների միջև փոխանակումների մասով ֆիզիկական հզորությունը.
 - դ) հատուկ ուշադրություն պետք է դարձվի անդամ պետություններում ձեռնարկվող միջոցներին՝ ուղղված առավելագույն պահանջարկը բավարարելուն և մեկ կամ մի քանի մատակարարների դեֆիցիտը կարգավորելուն.

ե) 26(4) հոդվածով նախատեսվող շեղման իրականացումը՝ շեմի հնարավոր վերանայման նպատակով.

զ) էլեկտրաէներգիա արտադրող և արտահանող կամ փոխադրող երրորդ երկրների հետ երկկողմ հարաբերությունների մասով արձանագրված առաջընթացի ընդհանուր գնահատականը, այդ թվում՝ շուկայի ինտեգրման, էլեկտրաէներգիայի առևտրի սոցիալական ու բնապահպանական հետևանքների և այդ երրորդ երկրների ցանցերին միանալու առումով արձանագրված առաջընթացը.

է) հնարավոր ներդաշնակեցման պահանջների անհրաժեշտությունը, որոնք կապված չեն սույն Հրահանգի դրույթների հետ.

ը) 3(9) հոդվածում ներառված էներգետիկ պիտակավորմանը վերաբերող պահանջները անդամ պետությունների կողմից գործնականում իրականացնելու եղանակը և այդ խնդրի շուրջ Հանձնաժողովի առաջարկները հաշվի առնելու եղանակը:

Անհրաժեշտության դեպքում, ընթացիկ հաշվետվության մեջ կարող են ներառվել առաջարկներ, որոնք վերաբերում են մասնավորապես պիտակավորման մասին ակտերի գործողության շրջանակին ու եղանակներին, այդ թվում՝ առկա հղման աղբյուրներին հղում կատարելու ձևին և այդ աղբյուրների բովանդակությանը և մասնավորապես՝ Համայնքի տարածքում թափանցիկ, հեշտությամբ հասանելի ու համեմատելի եղանակով շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման եղանակին՝ էներգետիկ տարբեր աղբյուրներից էլեկտրաէներգիայի արտադրման հետևանքով առաջացող CO₂ արտանետումների և ռադիոակտիվ թափոնների առումով, մատակարարների կողմից ներկայացվող տեղեկությունների ճշգրտությունը հսկելու նպատակով անդամ պետությունների կողմից ձեռնարկված միջոցների արդիականացման ձևին և շուկայում գերիշխող դիրքի և շուկայի համակենտրոնացման բացասական ազդեցությունների դեմ պայքարելու միջոցներին:

2. Յուրաքանչյուր երկու տարին մեկ 1-ին պարբերությունում նշված ընթացիկ հաշվետվության մեջ ներառվում են նաև անդամ պետություններում ձեռնարկված՝ հանրային ծառայության պարտավորությունները կատարելուն ուղղված տարբեր միջոցների վերլուծությունը՝ այդ միջոցների արդյունավետության ուսումնասիրության հետ մեկտեղ և մասնավորապես էլեկտրաէներգիայի շուկայում մրցակցության վրա դրանց ազդեցությունները: Հարկ եղած դեպքում, հաշվետվության մեջ կարող են ներառվել առաջարկություններ հանրային ծառայության բարձր ստանդարտներ ապահովելու համար

ազգային մակարդակով ձեռնարկվելիք միջոցների կամ շուկայի սահմանափակման կանխմանն ուղղված միջոցների մասով:

3. Հանձնաժողովը մինչև 2013 թվականի մարտի 3-ը որպես ընդհանուր ուսումնասիրության մաս Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ է ներկայացնում մանրամասն կոնկրետ հաշվետվություն, որտեղ ներկայացվում է IV գլխի համաձայն տարանջատման պահանջների արդյունավետությունը հաղորդման համակարգի օպերատորների լիարժեք և արդյունավետ անկախությունն ապահովելիս՝ արդյունավետ և արդյունարար տարանջատումը կիրառելով որպես հենանիշ:

4. 3-րդ պարբերության համաձայն իր գնահատման նպատակով՝ Հանձնաժողովը հաշվի է առնում մասնավորապես հետևյալ չափորոշիչները՝ արդար և ոչ խտրական միացում ցանցին, արդյունավետ կարգավորում, շուկայի կարիքները բավարարելու համար ցանցի զարգացում, ներդրումներ կատարելու համար չխաթարված խրախուսական միջոցներ, էլեկտրահաղորդման ենթակառուցվածքի զարգացում, Համայնքի էներգետիկ շուկաներում արդյունավետ մրցակցություն և Համայնքում մատակարարման իրավիճակի ապահովություն:

5. Հարկ եղած դեպքում և մասնավորապես, եթե 3-րդ պարբերությունում նշված մանրամասն կոնկրետ հաշվետվությամբ սահմանվում են, որ 4-րդ պարբերությունում նշված պայմանները գործնականում չեն ապահովվել, Հանձնաժողովն առաջարկներ է ներկայացնում Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ մինչև 2014 թվականի մարտի 3-ը հաղորդման համակարգի օպերատորների լիարժեք արդյունավետ անկախությունն ապահովելու համար:

6. Հանձնաժողովը, ոչ ուշ, քան մինչև 2006 թվականի հունվարի 1-ը, Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ է ներկայացնում մանրամասն հաշվետվություն, որտեղ նկարագրվում է էլեկտրաէներգիայի ներքին շուկայի ստեղծման հարցում արձանագրված առաջընթացը: Այդ հաշվետվության մեջ հաշվի են առնվում մասնավորապես՝

ցանցին ոչ խտրական ձևով միացումը.

արդյունավետ կարգավորումը.

էլեկտրահաղորդման ենթակառուցվածքի զարգացումը և Համայնքում մատակարարման իրավիճակի ապահովությունը.

շուկայի բացումից ստացվող բոլոր օգուտներից փոքր ձեռնարկություններին և կենցաղային նպատակով սպառող բաժանորդներին բաժին հասնող չափը, հատկապես հանրային ծառայության և համընդհանուր ծառայությունների ստանդարտների իմաստով.

արդյունավետ մրցակցության համար շուկաների գործնականում բաց լինելու աստիճանը, այդ թվում՝ շուկայում գերիշխող դիրքի, շուկայի համակենտրոնացման և կողոպտիչ կամ հակամրցակցային վարքագծի ասպեկտները.

բաժանորդների կողմից մատակարարներին փաստացի փոփոխելու և սակագների շուրջ կրկին բանակցելու հաճախականությունը.

գնային զարգացումները՝ ներառյալ մատակարարման գները, շուկաների բացման աստիճանի կապակցությամբ, և

սույն Հրահանգի կիրառման ընթացքում ձեռք բերված փորձը՝ այնքանով, որքանով դա վերաբերում է համակարգի օպերատորների արդյունավետ անկախությանն ուղղահայաց ինտեգրված տնտեսվարող սուբյեկտներում, և հանգամանքը, թե ֆունկցիոնալ անկախությունից և առանձին հաշիվներից բացի մշակվել են արդյոք այլ միջոցներ, որոնք ունեն իրավական տարանջատմանը համարժեք ազդեցություններ:

Հարկ եղած դեպքում, Հանձնաժողովն առաջարկներ է ներկայացնում Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ՝ մասնավորապես հանրային ծառայության բարձր ստանդարտներ ապահովելու համար:

Հարկ եղած դեպքում, Հանձնաժողովն առաջարկներ է ներկայացնում Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ՝ մասնավորապես մինչև 2007 թվականի հուլիսի 1-ը բաշխման համակարգի օպերատորների լիարժեք ու արդյունավետ անկախությունն ապահովելու համար:

Ըստ անհրաժեշտության, այդ առաջարկները, մրցակցային իրավունքին համապատասխան, առնչվում են այնպիսի միջոցներին, որոնք ուղղված են շուկայում գերիշխող դիրքի, շուկայի համակենտրոնացման և կողոպտիչ կամ հակամրցակցային վարքագծի դեմ պայքարին:

Հոդված 48

Ուժը կորցրած ճանաչելը

2003/54/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2011 թվականի մարտի 3-ից՝ չհակասելով սույն Հրահանգի փոխատեղման և կիրարկման վերջնաժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին: Ուժը կորցրած հրահանգին հղումները պետք է դիտվեն որպես սույն Հրահանգին հղումներ և պետք է կարդացվեն հավելված II-ում սահմանված հարաբերակցության աղյուսակի համաձայն:

Հոդված 49

Փոխատեղումը

1. Անդամ պետությունները ուժի մեջ են դնում սույն Հրահանգի համապատասխանեցման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական դրույթները ոչ ուշ, քան 2011 թվականի մարտի 3-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Նրանք կիրառում են այդ միջոցները 2011 թվականի մարտի 3-ից՝ բացառությամբ 11-րդ հոդվածի, որը կիրառվում է 2013 թվականի մարտի 3-ից:

Երբ անդամ պետությունները սահմանում են այդ միջոցները, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են փոխանցում ազգային իրավունքի այն հիմնական դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 50

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2009 թվականի հուլիսի 13-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից

Խորհրդի կողմից

Նախագահ՝

Գ. Փոթերինգ

Է. Էռլանդսոն

[1] ՊՏ C 211, 19.08.2008թ., էջ 23:

[2] ՊՏ C 172, 05.07.2008թ., էջ 55:

[3] Եվրոպական պառլամենտի 2008 թվականի հունիսի 18-ի եզրակացություն (դեռ չի հրատարակվել Պաշտոնական տեղեկագրում), Խորհրդի 2009 թվականի հունվարի 9-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 70 E, 24.03.2009թ., էջ 1) և Եվրոպական պառլամենտի 2009 թվականի ապրիլի 22-ի դիրքորոշում (դեռ չի հրատարակվել Պաշտոնական տեղեկագրում): Խորհրդի 2009 թվականի հունիսի 25-ի որոշում:

[4] ՊՏ թիվ L 176, 15.07.2003թ., էջ 37:

[5] ՊՏ թիվ L 175, 10.07.2008թ., էջ 206:

[6] ՊՏ թիվ L 24, 29.01.2004թ., էջ 1:

[7] Տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 1-ին էջը:

[8] ՊՏ թիվ L 25, 29.01.1998թ., էջ 18:

[9] ՊՏ թիվ L 114, 27.04.2006թ., էջ 64:

[10] Տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 15-ին էջը:

[11] ՊՏ թիվ L 184, 17.07.1999թ., էջ 23:

[12] ՊՏ թիվ C 321, 31.12.2003թ., էջ 1:

[13] Թիվ 83/349/ԵՏՀ կանոնակարգի վերնագիրը փոփոխվել է՝ հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին Պայմանագրի հոդվածների վերահամարակալումը՝ Ամստերդամի Պայմանագրի 12-րդ հոդվածի համաձայն. սկզբնականում հղումը կատարվել է Պայմանագրի 54(3)(է) հոդվածին:

[14] ՊՏ թիվ L 193, 18.07.1983թ., էջ 1:

[15] ՊՏ թիվ L 145, 30.04.2004թ., էջ 1:

[16] ՊՏ թիվ L 204, 21.07.1998թ., էջ 37:

[17] ՊՏ թիվ L 140, 05.06.2009թ., էջ 16:

[18] Տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 94-ին էջը:

[19] Համաձայնագրի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերության իմաստով մասնակիցների և այլոց շահերը պաշտպանելու նպատակով անդամ պետությունների կողմից ընկերություններից պահանջվող պաշտպանական միջոցառումների համակարգման մասին Խորհրդի 1968թ. մարտի 9-ի թիվ 68/151/EEC Առաջին հրահանգ, որը նպատակ ունի նման պաշտպանական միջոցառումները համարժեք դարձնել Համայնքի տարածքում (ՊՏ թիվ L 65, 14.03.1968թ., էջ 8):

[20] Թիվ 78/660/ԵՏՀ կանոնակարգի վերնագիրը փոփոխվել է՝ հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին Պայմանագրի հոդվածների վերահամարակալումը՝ Ամստերդամի Պայմանագրի 12-րդ հոդվածի համաձայն. սկզբնականում հղումը կատարվել է Պայմանագրի 54(3)(է) հոդվածին:

[21] ՊՏ թիվ L 222, 14.08.1978թ., էջ 11:

ՍՊԱՌՈՂԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Չհակասելով սպառողների պաշտպանության մասին Համայնքի կանոններին, մասնավորապես, «Հեռահար պայմանագրերի առումով սպառողների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի 1997 թվականի մայիսի 20-ի 97/7/ԵՀ հրահանգին [1] և «Սպառողական պայմանագրերի անարդար պայմանների մասին» Խորհրդի 1993 թվականի ապրիլի 5-ի 93/13/ԵԽՀ հրահանգին, հողված 3-ով նախատեսված միջոցները պետք է ապահովեն, որ՝

ա) սպառողները իրավունք ունենան իրենց էլեկտրաէներգիայի ծառայության մատուցողի հետ պայմանագիր կնքել, որը սահմանում է՝

մատակարարի անունն ու հասցեն,

մատուցվող ծառայությունները, առաջարկվող ծառայության որակի մակարդակները, ինչպես նաև նախնական միացման ամսաթիվը,

առաջարկվող պահպանության ծառայության տեսակները

այն եղանակները, որոնց միջոցով կարելի է ձեռք բերել թարմ տեղեկություններ բոլոր կիրառվող սակագների և պահպանման վճարների վերաբերյալ,

պայմանագրի տևողությունը, պայմանագրի ու ծառայությունների երկարաձգման և դադարեցման պայմանները և արդյոք թույլատրվում է առանց տուգանքի դադարեցնել պայմանագիրը,

ցանկացած փոխհատուցման և գումարների վերադարձման միջոցները, որոնք կիրառվում են, եթե պայմանագրով նախատեսված ծառայության որակի մակարդակները բավարարված չեն, ներառյալ ոչ ճշգրիտ և հետաձգված հաշիվները,

(գ) կետի համաձայն՝ վեճերի լուծման համար ընթացակարգեր նախաձեռնելու մեթոդը,

Սպառողների իրավունքների վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ բողոքների քննությանը վերաբերող և այս կետով նշված ողջ տեղեկատվությունը, որը հստակորեն հաղորդվում է հաշվի ներկայացմամբ կամ էլեկտրականության գծով ձեռնարկության կայքի միջոցով:

Պայմանները պետք է նախօրոք լինեն արդար և հայտնի Բոլոր դեպքերում, այս տեղեկատվությունը պետք է տրամադրվի նախքան պայմանագրի կնքումը կամ հաստատումը: Այն դեպքում, երբ պայմանագրերը կնքվում են միջնորդների միջոցով, սույն կետով սահմանված խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը նույնպես պետք է տրամադրվի նախքան պայմանագրի կնքումը,

բ) սպառողներին տրվում է համապատասխան ծանուցում պայմանագրային պայմանների մեջ փոփոխություն կատարելու ցանկացած մտադրության մասին և տեղեկացվում է ծանուցման տալու ժամանակ պայմանագիրը դադարեցնելու իրենց իրավունքի մասին: Ծառայություններ մատուցողները անմիջականորեն տեղեկացնում են իրենց բաժանորդներին գնի ցանկացած բարձրացման մասին, համապատասխան ժամանակահատվածում, ոչ ուշ քան գինը թափանցիկ և հասկանալի եղանակով բարձրացնելուց հետո մեկ սովորական վճարման ժամկետը: Անդամ պետությունները ապահովում են, որ հաճախորդները կարողանան ազատ դադարեցնել պայմանագրերը, եթե նրանք չեն ընդունում նոր պայմանները, որոնց մասին նրանց տեղեկացել է իրենց էլեկտրաէներգիայի ծառայության մատուցողը:

գ) սպառողները ստանան թափանցիկ տեղեկատվություն էլեկտրականության ծառայությունների հասանելիության և օգտագործման մասով կիրառվող գների և սակագների, ինչպես նաև ստանդարտ պահանջների և պայմանների մասին,

դ) սպառողներին առաջարկվում է վճարման եղանակների մեծ ընտրություն, որը անհարկի կերպով խտրականություն չի դնում հաճախորդների միջև: Կանխավճարային համակարգերը պետք է լինեն արդար և համարժեք կերպով արտահայտեն հավանական սպառումը: Պահանջների և պայմանների ցանկացած տարբերություն պետք է արտացոլի տարբեր վճարային համակարգերով մատակարարին վճարվող ծախսերը: Ընդհանուր պահանջներն ու պայմանները պետք է լինեն արդար և թափանցիկ: Դրանք պետք է տրվեն պարզ և հասկանալի լեզվով և չպետք է ներառեն հաճախորդների իրավունքների իրականացման ոչ պայմանագրային խոչընդոտներ: Հաճախորդները պետք է պաշտպանված լինեն վաճառքի անարդար կամ շփոթեցնող մեթոդներից:

ե) սպառողներից գումար չի գանձվում մատակարարին փոխելու համար,

զ) սպառողները օգտվում են իրենց բողոքների քննման թափանցիկ, պարզ և ոչ թանկ ընթացակարգերից: Մասնավորապես բոլոր սպառողները իրավունք ունեն իրենց էլեկտրաէներգիայի ծառայության մատուցողի կողմից ստանալու ծառայության լավ

ստանդարտ և բողոքների քննում: Նմանատիպ վեճերի արտադատական կարգավորման ընթացակարգերը պետք է ապահովեն վեճերի արդար և անհապաղ կարգավորում, նախընտրելի է երեք ամսվա ընթացքում՝ անհրաժեշտության դեպքում ունենալով ծախսերի և (կամ) վնասների հատուցման համակարգ: Հնարավորության դեպքում, դրանք պետք է համահունչ լինեն «սպառողական վեճերի արտադատական կարգավորման համար պատասխանատու անդամների նկատմամբ կիրառելի սկզբունքների մասին» Հանձնաժողովի 1998 թվականի մարտի 30–ի 98/257/ԵՀ առաջարկությամբ [3] սահմանված սկզբունքների հետ:

է) Անդամ պետությունների կողմից հոդված 3(3)–ին համապատասխան ընդունված դրույթների ներքո համընդհանուր ծառայություններից օգտվելու հնարավորություն ունենալու դեպքում, նրանց տեղեկացվում են համընդհանուր ծառայություններին առնչվող իրենց իրավունքների մասին:

ը) Սպառողները իրենց տրամադրության տակ ունենան իրենց կողմից սպառման տվյալները, և կարողանան հստակ համաձայնությամբ և անվճար հիմունքներով ցանկացած գրանցված մատակարարող ձեռնարկության համար մատչելի դարձնել դրա չափման տվյալները: Տվյալների կառավարման համար պատասխանատու կողմը պարտավոր է այդ տվյալները տրամադրել ձեռնարկությանը: Անդամ պետությունները որոշում են տվյալների և ընթացակարգերի ձևաչափը, որպեսզի տվյալները մատչելի լինեն մատակարարների ու սպառողների համար: Այդ ծառայության համար սպառողից հավելյալ գումար չի գանձվում,

թ) Նրանց պատշաճ կերպով տեղեկացվում է էլեկտրականության իրական սպառման և արժեքների մասին այն հաճախականությամբ, որը բավարար է նրանց հնարավորություն տալու համար կարգավորել իրենց սեփական էլեկտրականության սպառումը: Այդ տեղեկատվությունը տրվում է բավարար ժամանակահատվածի սահմաններում՝ հաշվի առնելով հաճախորդի չափիչ սարքի կարողությունը և տվյալ էլեկտրաէներգիայի արտադրանքը: Անհրաժեշտ է պատշաճ կերպով հաշվի առնել նմանատիպ միջոցների ծախսարդյունավետությունը: Այդ ծառայության համար սպառողից հավելյալ գումար չի գանձվում,

ժ) էլեկտրաէներգիայի մատակարարին փոխելուց հետո, սպառողը ստանում է վերջնական փակման հաշիվ, ոչ ուշ քան մատակարարին փոխելուց հետո վեց շաբաթվա ընթացքում:

2. Անդամ պետությունները ապահովում են գրագետ չափման համակարգերի կիրառումը, որոնք աջակցում են սպառողների ակտիվ մասնակցությանը էլեկտրամատակարարման

շուկայում: Այդ չափման համակարգերի կիրառումը կարող է ենթարկվել տնտեսական գնահատման դրա երկարաժամկետ ծախսերը և օգուտները շուկայի ու առանձին սպառողների համար պարզելու նպատակով, կամ թե գրագետ չափման որ տեսակն է տնտեսապես խելամիտ և ծախսարդյունավետ, և ինչ ժամկետ է նպատակահարմար դրանց բաշխման համար:

Նմանատիպ գնահատումը կատարվում է մինչև 2012 թվականի սեպտեմբերի 3-ը:

Այդ գնահատմանը համապատասխան, անդամ պետությունները կամ նրանց կողմից նշանակված ցանկացած իրավասու մարմին գրագետ չափման համակարգերի իրականացման համար կազմում են ժամանակացույց մինչև 10 տարի թիրախային ժամկետով:

Եթե խելացի չափիչների գործադրումը գնահատվում է դրական, ապա մինչև 2020 թվականը սպառողների նվազագույնը 80 %-ի մոտ պետք է տեղադրվեն գրագետ չափման համակարգեր :

Անդամ պետությունները կամ նրանց կողմից նշանակված ցանկացած մարմին, պետք է ապահովեն իրենց տարածքներում իրականացման ենթակա չափիչ համակարգերի փոխգործողությունը, և պատշաճ կերպով հաշվի առնեն համապատասխան ստանդարտների կիրառումը, լավագույն փորձը և էլեկտրաէներգիայի ներքին շուկան զարգացնելու կարևորությունը:

[1] ՊՏ թիվ L 144, 04.06.1997թ., էջ 19:

[2] ՊՏ թիվ L 95, 21.08.1993թ., էջ 29:

[3] ՊՏ թիվ L 115, 17.04.1998թ., էջ 31:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

2003/54/ԵՀ հրահանգ	Սույն հրահանգը
Հոդված 1	Հոդված 1
Հոդված 2	Հոդված 2
Հոդված 3	Հոդված 3
Հոդված 4	Հոդված 4
Հոդված 5	Հոդված 5
—	Հոդված 6
Հոդված 6	Հոդված 7
Հոդված 7	Հոդված 8
Հոդված 10	Հոդված 9
Հոդված 8	Հոդված 10
—	Հոդված 11
Հոդված 9	Հոդված 12
—	Հոդված 13
—	Հոդված 14
Հոդված 11	Հոդված 15
Հոդված 12	Հոդված 16
—	Հոդված 17
—	Հոդված 18
—	Հոդված 19
—	Հոդված 20

—	Հոդված 21
—	Հոդված 22
—	Հոդված 23
Հոդված 13	Հոդված 24
Հոդված 14	Հոդված 25
Հոդված 15	Հոդված 26
Հոդված 16	Հոդված 27
Հոդված 17	Հոդված 29
Հոդված 18	Հոդված 30
Հոդված 19	Հոդված 31
Հոդված 20	Հոդված 32
Հոդված 21	Հոդված 33
Հոդված 22	Հոդված 34
23(1) (հոդված, առաջին և երկրորդ պարբերություններ)	Հոդված 35
—	Հոդված 36
Հոդված 23 (վերապահված)	Հոդված 37
—	Հոդված 38
—	Հոդված 39
—	Հոդված 40
—	Հոդված 41
Հոդված 24	Հոդված 42
—	Հոդված 43
Հոդված 25	—

Հողված 26	Հողված 44
Հողված 27	Հողված 45
—	Հողված 46
Հողված 28	Հողված 47
Հողված 29	Հողված 48
Հողված 30	Հողված 49
Հողված 31	Հողված 50
Հողված 32	Հողված 51
ՀԱՎԵԼՎԱԾ Ա	Հավելված I